



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES




207



Ա. Ա. Բ. Ե. Կ.

ՏԱՐՁՐԻ ԲՐԴՅԱՆ



RECEIVED
JULY 10 1968

Վահան, պաշտութեա 1170-1-11
Metzir Vardenay ...

ՄԵՇԻՆ ՎԱՐԴԵՆԵՍ

ԲՈՐՉՐՈՒԹԻՒՑԻԱՑ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ


ՏԻԵԶԵՐԱԿԱՆ

Ի ԼՈՅ ԸՆԴԱՑԵԱՑ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

ԽԱԿԱՏԻՔ ՆԵՐԳԻՆ ԽՈՐՀՄԴԱԿԱՆԻ ՍԵՆՆԿԱՊԵՑԻ ԵՒ ԱՍՊԵՑԻ

ԽԱԿԱՏՐՈՅ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵՎԻ



Ի ՅՊՐՈՒԴ ԱԲՋԱՐԵԱՆ ՀԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՋՈՒԱՑ

1861

EREN
LOT
Buhr



Согласно отзыва Господина Бероева печатать разрешается.
Санктпетербургъ, 9 Октября 1860 года.

Цензоръ Бекетовъ.

EELN
207
01.10.99.

Ի ԹԻՇԱՏԱԿ

ՀԵՂԴՈՒՑԵԱԼ ՀՊԳ-ԸՐԱԲՉՈՒՒ


ԱԶԱՐԵԱՆ ԱԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ


ՆԵՐԴՈՒՇԵԱՆ ՊԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

ՍԵՆԵԿԱՊԵՏԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԼԱԶԱՐԵՎԻ





ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երկու էին օրինակը, յորոց արարաք
զայս մեր տպագիր Տիեզերական Պատ-
մութեան Մեծին Վարդանայ Բարձր-
բերդեցւոյ՝ մին՚ի մերոյ գրադարանէ ե-
լեալ և անթուական, իսկ միւսն ընդօ-
րինակեալ՚ի Տփխիս յամի Տեառն 1814
հրամանաւ արքեպիսկոպոսին Վրաս-
տանու՝ ‘Աերսիսի Ծշտարակեցւոյ, ’ի
գրչագիր օրինակէ հնգետասաներորդ
դարու և նուիրեալ՚ի նմանէ Ուումեան-
ցովեան թանգարանին, զոր մեք՚ի ձեռ-
նամուխ լինելն մեր ’ի տպագրութիւն
յիշեալ Պատմութեանդ բերել տուաք
վասն բաղդատութեան * : Յաէն այսպէս
երկուց օրինակաց համեմատութեամբ
'ի լոյս ընծայեմք այժմիկ զայդ ցանկալի

* Յառաջ բերեմք աստանօր զպատճէն թղթոյ առաջնոր-
դին Վրաստանու՝ տեառն Ներսիսի, զոր գրեալ էր սորա առ-
կոմնն Ուումեանցով՝ ի նուիրելն իւրում նորին Թանգարանի
զօրինակ Պատմութեանն Վարդանայ։ Թուղթոյ պյտ եղեալ
տեսանի ’ի վերջն յիշեալ Պատմութեան՝ նովին իսկ գրչու-
թեամբ գրեալ, որով և ընագիրն Վարդանայ, և ստորագր-

գործ հնախօս և բմզմմէմուտ վարդապետին Ա արդանայ, բայց և այնպէս ոչ միանգամայն աղատ ՚ի թերութեանց գտանի այս մեր տպագիր. քանզի յոլով ուրեք երկոքին ձեռագիրք մեր խանգարեալ և ազճատեալ էին ՚ի գրչաց: — Առ այս նուագ՝ ըստ ներելոյ հանգամանաց, լաւ համարեցաք՝ թէ և բազմօք թերի, ՚ի լոյս հանել զբնագիր մերոյ մատենագր-րիս, քան թէ ծածկեալ տեսանել զայն ընդ գրուանաւ: Օ թերին լցուսցեն այ-լոց ընտրելափոյն և հնագոյն օրինակաց բաղդատութեամբ որ զինի մեր են գա-լոց ուսումնասէրք: Աեր էր իղձ ոչ ան-
րեալ ձեռամբ այնորիկ, որ զինի եկաց կաթողիկոս ամենայն Հայոց: Հաւաստի եմք, զի քաղցրանալ ունի այդ թուղթ ՚ի քիմ բազմաց ՚ի մերազնէից, որոց սուեալ եղև ՚ի կինդանութեան Հայրապետին վայելել ՚ի սէր նորին, որպէս և ինձ՝ գրողիս զայսոսիկ տողս: — Եւ այս է պատճէն նամակի նորա.

ՊԱՅԵՆՏԻՆՈՎԱՅԼ ԳՐԱՓ ՆԻԿՈՂԱՑ ՊԵՏՐՈՎԱՀ

ՈՂՈՐՄԱՆ ՏԵՐ

Ծնդ գարս յաւիտենից աշխարհիս այսորիկ իսկապէս գո-վեստից արժանաւոր հոգեշարժ իղձ Ձերումդ Պայծառափափայ-լութեան ըստ եգիպտականն իշխեցողի Պտղոմեայ գրասիրի ՚ի լեզուս բազմաց ներբողեալ վերահռչակի: Բայց ապաբախտ եմք առաւելապէս մեք ամենայն հոգեորականք Հայոց՝ ով պայծառափափայլ կնեազ ողորմած Տէր, զի յաւուրս մեր բազ-մահարուստ գրատուն Այրարատեան Ամոռոյ սրբոյ կաթու-ղիկէ էջմիածնի այնպէս կողոպտեալ յաւար մատնեցաւ, մին-

Հաղորդ թողով արժանագով երկասի-
րութեան հեղինակիսզմերազնեայ գիտ-
նականս և զօտարազգի հայերէնագետա-
որք՝ի հետազօտութիւն միջնադարեան
պատմութեան դեգերին, որք և — բաց
'ի հնախօս աւանդութեանց — նիւթ-
բաղմադիմի գտանել ունին 'ի սմին առ՝ի
Ճոխացուցանել և յընդլայնել զտեսա-
րան պատմութեան աղգացն Կրաքաց-
ւոց, Թուղքաց, Մուգալ Թամթարաց և
Խաչակիր զօրաց յարշաւելն յետնոցս 'ի
սահմանս Խմիոյ յազատութիւն Փրկչա-
կան գերեզմանին, տեղեացն տնօրինա-

չե Բնքն աշաւասիկ ամենապատիւ սրբազնագյոն պատրիարքն
պյնմիկ քրիստոսահման Աթոռոցն ամենայն Հայոց՝ Եփրեմ, ա-
մենազերմեռանդ փութով բազում աշխատեալ 'ի լոււմն ըղ-
ձից Զերումդ՝ Պայծառափայլութեան, ցայս վայր ժամանակի
հազիւ ուրեմն կարողացաւ երկուց՝ Վարդանայ վարդապե-
տի Բարձրբերդցւոց և Մատթէոսի երիցու Ուրհայեցւոց առ-
ձեռն բերել զմի մի օրինակ միայն, զառաջինն գրեցեալ յա-
մի Տեառն 1432, և զերկրորդն յամի 1688, յորոց աշա ըստ
հրամանի նորին բարձրագյոն Սրբազնութեան յամի 1814
աստ 'ի Տփիսի քաղաքի օրինակել տուեալ զմի մի յերկա-
քանչեւրոցն ամենահմար համեմատ հեղինակին՝ մատուցանեմ
ամենախոնարհաբար 'ի սպասու Զերում Պայծառափայլու-
թեան 'ի ձեռն հնւատարմին արարատեան աթոռոց ամենայն
Հայոց՝ հայկազն վեհազնեայ Յովակինայ Եղիազարեանց :

Այս արդարեւ երշանիկ բախտաւորութիւնն համարեալ լի-
նէր, եթէ դրատուն արարատեան Աթոռոցն նախկին իւր հաս-
տատութեամբն լսէր զշեր պյտիսի քաղցր ձայն հրաւիրա-
նաց՝ի կոչ հանգիսի Զերումդ բաղձացեալ ամենաիրենի գր-
բատան. բայց զի համատարած բանութիւն աշխարհի յայս-

կանաց և քաղաքին սրբոյ։ Օ ընդարձա-
կագոյն տեղեկութիւնս զլ արդանայ և
վնորին Պատմութեան բովանդակութե-
նէ ուսումնասէր ընթերցողն գտցէ ՚ի
մերում թարգմանութեան գործոյ հե-
ղինակիս ՚ի լեզու Ուսաց, որ զինի սա-
կաւուց տեսանել ունի զլցյա։

Ի. ի։

Մակե-

Մայիս, 1861։

Ֆկ գարու տարաբախտ արար և զլմոռ հայկազնեայց ա-
ռաւել ևս ՚ի մասինս յայսմիկ, ազաշեմ՝ զերկուս զայսոսիկ
գործով փոքրիկ իրեւ ընծայ կամ մանաւանդ նշմարանք ջեր-
մեռանդութեան կապտեալ գրատան Աթոռցն արարատեան՝
ընկալնուլ մարդասիրաբար քեզ ՚ի հաճոյ՝ ողորմած Տէր, և
աալ աեղի ՚ի կարդս մեծամեծ մատենից բազմութեանց նա-
խազահ բազմելոց յաստիճանս գրատան Չերում Պայծառա-
փայլութեան։ Եւ եմէ յաջողելունիցի Տէր, պյառւհետև ևս՝
որպէս նորին սրբազնագյոն Քահանայապետութիւնն, նցն-
պէս և մեք ոչ անփոյթ լինիմք հետևիլ յաղագա պյովքն ևս
սպասաւորելց Զերումիդ գրատան։

Ողջ լեր, և մեք իսկական ջերմեռանդութեամք հոգոյ մե-
րում եմք և մնամք, ողորմած Տէր, Չերոյ Պայծառափայլու-
թեան ամենախոնարհ ծառայ և մշտնջնաւոր աղօթարար,

Կուտաստ արքեպիսկոպոս Հայոց Արատանու և պյոց
ՆերՍէս ԱՇՏԱՐԱԿԵՑԻ։


Հարազատութեան դրբու ընդ հեղինակին իւրում վկայեմք՝

ՄԻՆԱՍ արքեպիսկոպոս՝ Գարան Սրբոյ Եղիշածնի։

ՄԱՐԹՈՐՈՍ Հարդապետ՝ առաջնորդ Սասթէի առաքելոց վա-
նից և վիճակի։

Աւոք քահանայ կոթուզիկէ եկեղեցւոն թիֆլու Հայոց
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՂԱՄԲՁԵՆ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ



ԴՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊՈՀԱՅԵԱՆ

Խաղաքան

ՆԱԽԵՐԳԱՆՑ

Կյախ քան զամենայն¹ հայցեսցուք եղեալքս գէն,
և սկսեալքս զանսկիզըն, և ստորնայինքս զվերնայինն՝
ոչ զորքանն զամէնն, որ ինքեան միայնոյ է²՝ այլ յան-
հասական փառաց փայլակն ինչ երևման, որով ուղ-
ղեսցուք զբաղձանս փափագման մերոյ, և այն՝ միջ-
նորդիւ և ոչ անձամբ իշխեցեալ — և է նա՝ բարե-
կամն Աստուծոյ, մեծն Մովսէս։ Եշւ³ զի հեզ է քան
զամենայն մարդիկ՝ մի գարշեսցի՚ի մէնջ տալ մեզ
զձեռն և զգաւազանն որ յԱստուծոյ, յորմէ բուռն
հարեալ իմաստնասցուք։ Որպէս նա՚ի հարցանել զա-
նուն Տեառն, լուսւ, եթէ նա է որ էնն, յորմէ բացան
նմա խորք իմաստից նորա և անտի վստահացեալ՝ կո-

¹ Անը օր. Նոյն ժան զամբեայն ինդիբա հայցեսցուք։ — ² Բուռն. օր.
ու զարդան զամբն, այլ յանհաստիւն փառաց։ — ³ Որ. օր. Գին Մովսէս։
չէ հուն։

չեաց զնա Աստուած և Տէր, արարիչ և ստեղծիչ՝
ամենայնի։ Օխթէպէտ և բուաւ ՚ի Տեառնէ զիւրա-
քանչիւրն՝ այլ էիւն հասկացեալ հաւատաց², եթէ
Աստուածնէն նա, որով էի՛ զի առաջազգ՝ և անուն
նորա Տէրէ, ով յիւրմէ եղելոցն իշխանն և դատաւոր
է³։ Եւ զիմիշտէն եւ ուշէ եղեալ։ Քանզի զգոյութիւն
յայտնէն⁴ և Աստուածն զարաքը և ՚ոնունդք» կո-
չեաց։ զի առինչք են սոքա՝ որպէս յայտնիչք և քա-
րոզք, արարածք արարչին և ծնունդք ծնողին։ Եւ
գիտաց, թէ մի և միակ էն, քանզի եղեալք բա-
զում են. և ոչէ բազմութիւն առանց միոյն, բայց մինն
է առանց բազմութեան։ Եւ ոչ թափեաւ ՚ի նմանէ
իմաստք Երրորդութեանն. քանզի ծանեաւ, եթէ էն
երեք է⁵՝ որպէս և յառնելն զմարդն և ՚ի բաժանել
լեզուացն և զայլն⁶՝ խոստովանի զերեքն։ Եւ այլ
եղեալք կամ ՚ի վեր են քան զմինն և կամ զի աւե-
լի են քան զերեքն, զի անկատարք են. իսկ էն երեք է՝
սկիզբն ունելով և մէջ և կատարումն, քանզի նա է
Աստուած առաջին և միջին և վերջին։ Եւ թէ այլ
ինչ գտանին այսպիսիք՝ նմանութիւնք են և ոչ իւկը
հաւաստիք։ Իմացաւ իսկ զէն⁷ սկիզբն ամենայնի,
քանզի ամենայն ինչ, որ եղեալ է և լինի՝ նախ էու-
թիւն է սկիզբն և յէէն էանայ։ Այլ և գիտաց, եթէ

1 Բուաւ. օր. և սրբազն ամենայնի։ — 2 Ու. օր. այլ և իւ հոսուցիւ-
հաւաստիք։ — 3 Ու. օր. զի յերեւ եւլուն իւխան։ — 4 Յերկոսին օր.
և զգոյութիւն յայտնէ զէն¹¹, զոր մեք ուղղագրեցաք, որպէս ՚ի վեր
անդր տեսանեւ ունի ընթերցողն։ — 5 Ու. օր. ժանիք ժանիւու, եթէ և
ին երեւ է։ — 6 Ու. օր. և այլ։ — 7 Ու. օր. իւացապիւուն պիտին ին
մինայնի։

պարզ է էն, որով զեղեալքս պատմեաց, թանձը և
մարմինս ծանեաւ¹: Իսկ եթէ բարի է էն՝ և անփո-
փախ և անվախճան և անորակ և անքանակ և անորափ-
սութիւն, քանզի էն բարի ոչ կամեցաւ միայն ունել
զբարին, այլ արար բարի արարածս վայելել յանձա-
խելի բարիս արարչին: Օ.ի² սկսանի այսպէս. «Դ
սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր»: — ոչ
պատմելով սոցա³ նիւթ, զի անկարօտ է արուեստա-
ւորն: Ասկայն արար չորս սկզբունս — ջերմ և թե-
թե զհուր և զօդ, ցուլս և ծանր զղուր և զերկիր՝
ունելով ցամաքութիւն, և գիծութիւն: Եւ ՚է սկզբանէ
ասաց, զի անժամանակ ցուցցէ⁴ զառնելն, քանզի ե-
րիք իրաք⁵ պատկերացոյց յինքեան զեղեալն — ան-
ժամանակութեամբն և անբաւութեամբն և անտե-
ղութեամբն⁶: Օ.ի ՚է սկզբանէն ոչ ունի ժամանակ՝ ոչ
տարի և ոչ օր և ոչ ժամ և ոչ մասն հատուածի⁷. և
ոչ ոք է բաւական գիտել զեղեալքս ամենայն, և ոչ է՝ի
տեղունց վերայ՝ որպէս ինքն Աստուածէ: Իսկ փոփոխ-
մամբն և շարժմամբ և քանակաւ և որակութեամբ և
եղելութեամբն զատչին՝ի բնութենէ արարչին:

Աքդ իմաստութիւնն Աստուածոյ՝ արուեստ և զօ-
րութիւն առնող⁸, և բարութիւնն նիւթ անմարմին,
զոր նիւթացոյց և տեսակացոյց կամքն առատ և հնա-
րաւոր, և յոչեից ընչացոյց զձեւ երկնի և երկրի՝ յան-

¹ Առաւ. օր. որով վզդուցու պարմեաց ինձնը և նորմայուն յանեւու: —
² Ու. օր. զոր սկսանի այսպէս: — ³ Մեր օր. ոչ պարմելով պարանայ նիւթ: —
⁴ Ու. օր. զի անժամանէ ցացանէ զառնելն: — ⁵ Ու. օր. երեւ երեւ: —
⁶ Ու. օր. և անպիսութեամբ: — ⁷ Ու. օր. և ոչ մասն հարածի: — ⁸ Մեր
օր. և զբանին ունեն:

պատրաստ հիմնն վերայ եղեալ։ Վանզի երեք կամարք
են մի քան զի՞ ։ վերագոյն հրեղէն և ջրեղէն՝ ի վայր
քան զնա, և օգեղէն՝ որ է հաստատութիւնդ, — ողբ
երեքեան հողմով խառնեալ՝ շուրջ գան բոլոր զերկ-
րաւս ²։ Եւ երեկիր՝ ի վերայ ինքեան ունի զուր հաս-
տատումն՝ հողմով անդաւստ՝ ի վեր փչեալ, զոր իւր
բնական ծանրութիւնն՝ ի վեր չթողութոչիլ, և յան-
դընդոց՝ ի վեր փչումն՝ ի վայր չթողու անկանել։ Եւ
բանն Աստուծոյ բարձեալ կրէ թիթեատթեամբ զո-
լորն։ Եւ ընդ լինել երկնի կենդանածնեցաւ հրեշտա-
կք հրեղինաք ³, որպէս և գաւառն է նոցա հրեղէն՝
տամնեակ դասուք զետեղեալ, տեղեաւ և փառք և
զօրութեամբ զանազանեալք արտաքոյ չորիցս տալե-
րաց՝ ըստ որում անսայլայլականք են և անմահք։ Եւ
է երկնն վերին վարնագոյր ընդդէմ նոցա և Աստու-
ծոյ, որ է անասելի օրինակն։

Եւ ասեն իմաստումք, թէ յառաջին շուրջն ⁴ երկ-
նից գոյացաւ բնութիւնն, որ է արուեստն Աստուծոյ
արարող զօրութիւն, յետ Աստուծոյ թերեւ ներգոր-
ծութիւն տարելացս չորից։ — Եւ յերկրորդն շուրջ
կառոց զհաստատութիւն և վերացոյց զիէս ջրոյն առ
երկու իրս պիտանացու, զի բարձցէ զծանրութիւն
երկրի զառաւելն, և զի արգելցէ զկիզողութիւն հրե-
ղէն երկնից՝ ի մարմնաւորացս։ — Եւ յերրորդ շուրջն
ակնարկելով կամացն Աստուծոյ՝ շարժեաց զըցս և
զբանջարս, որոյ սկիզբն բորբոս հողոյն և կատարումն

¹ Բոււմ. օր. մն ժան զին վերաբոյն։ — ² Ռ. օր. շատի էտ բուլը ելը
վերիբուսոր։ — ³ Մէր օր. ինդանունկացաւ հրեղութէ, որդին և էտուտն
և նոց։ — ⁴ Ռ. օր. ներ յարագին շրջն։

սերմն որ 'ի նմա և զծառս, որոյ սկիզբն՝¹ մասնուռն
մօտ 'ի բոյս, և կատարումն արմաւենին մերձ 'ի կեն-
դանիս, յորս արու և էզն է²: — Եւ 'ի չորրորդ շրջմանն
եղեւ հրաման Տեառն 'ի վերայ լուսոյն, որ խզածն է
յարփւոյն: Եւ եհատ զնա յերիս մասունս և յամնաս
բազումն՝³ յարեգակն³ և 'ի լուսին և 'ի բազմութիւն
աստեղաց: և յերկոտասան կենդանակերպս⁴ եղեն ճա-
նապարհ արեգական և լուսնի, և եօթն այլ ևս աս-
տեղաց: Երիւքն⁵ առնէ արեգակն գարուն, և յայլ
ևս երիսն բարձրացեալ՝ առնէ ամառն, և 'ի Աշխոն ե-
լեալ՝ ցածնու երիւքն, գործէ աշուն. և ևս ցածեալ⁶
ընդ հարաւ՝ կազմէ⁷ ձմեռն: Եւ յաղագս կարի բար-
ձրութեան և ցածութեան աշխարհաց աճէ տիւն
մինչեւ 'ի քսան ժամն և պակասէ մինչեւ 'ի չորսն: —
Եւ որպէս ասեն իմաստունք՝ չորկտասան կլիմ է
աշխարհս, այսինքն՝ բաժինս. և եօթն կլիմն անբը-
նակ է մարդկան, զի վասն յոյժ ցածութեան երկրին
ցուլու է և խսաւար, զի միշտ վեց ամիս տիւ է՝ 'ի Խո-
յէն մինչեւ 'ի Աշխոն, և վեց ամիսն գիշեր՝ 'ի Աշուն
մինչեւ 'ի Զուկն. խսկ խորին Հնդկիք միշտ հասարակ
է՝ —ոչ աճեն ժամքն և ոչ պակասին, այլ մնան երկո-
տասանք⁸: — Խսկ հինգերորդ շուլջն ելեալ՝ ի վեցն⁹:

¹ Որում. օր. որոյ սկզբն համարն: — ² Բր. օր. ունի, և կատարում
յարմարին: Խսկ 'ի մերում օրինակի պակասի բառս և յարմարին: զոր
մեր արմաւենին ուղղագրեցաք, որպէս և իմաստ բանին ցուցանէ: —
³ Բր. օր. յարեկայսն: — ⁴ Մեր օր. յերբորասն լինդութեանուի լիրու: —
⁵ Բր. օր. երեն առնէ արկտոնին: — ⁶ Բր. օր. և ևս ցածուցեալ: — ⁷ Մեր
օր. խոյն Յեռն: — ⁸ Մեր օր. այլ ժամ բաժանն: — ⁹ Մեր օր. ունի
ունի հնդկերորդ լրջեալ 'ի վեցն: Բր. օր. ունի, խսկ հնդկերորդ լրջակ 'ի
վեցն: զոր մեր ուղղագրեցաք, որպէս անսանել ունիս 'ի վեր անգր:

կլ հրաման՝ի ջուր և յերկիր վասն կենդանեաց՝ ըս-
կըսեալ՝ի կառարոյս և 'ի սպունկս և կառարեալ
'ի մարդն — 'ի կատարեալ կենդանին բանաւորու-
թեամբ, — 'ի հազար ազգս՝ պիլսաւորութեամբն իւր-
եանց լեհաթանաւ որ 'ի ջուրս, և բեհեմովթաւն որ
'ի ցամաքային անապասս: Եշ այս է՝ ըստ Երիստոսե-
լի, հոգի ընդ հանուր — տուող դյուութեան ամենային:

Եշ արդ ընութիւնն շարժէ զգունտն երկնից, և նա
զժամանակն, և նա զտարերան՝, և նա զտունկս և ըզ-
կենդանիս և զհալական նիւթս — զոսկի և զարծաթ
և զակն և զայլն, զոր գործէ բնութիւնն ծծմբով և
և ժիպակաւ՝ որովէս ասեն զիտողք: Իսկ 'ի զըուին
հասուցեալ զանդամոցն յաւրինուածն — որովէս քաջ
պատկերագիրքն զի յոտիցն սկսանին — հրաշագործէ
իմն նոր յաւրինելով բնութիւնն յերկնէ և յերկրէ և որ
'ի մէջս են: Ա եցից ձեռաց խննարչելոց 'ի միոյ պատ-
կերի շնչուած, զի մինն նմանիցէ երիցն՝, որովք մի
հաւատացի՝³ ստեղծողին բնութիւնն և էութիւն և
աստուածութիւնն: Գիտելով որ ինչ լինելոցն է զմե-
ղանսն, այլ ոչ կարեր արգելուլ՝ Կախագիաութիւնն
զշարժումն յորդաւատ բարերարութեանն: այլ և 'ի
նոյն իսկ բարերարութենէն ոչ հրաժարելու ոտիւք գալ
հիւանդատես այնմ, զոր ձեռօքն ստեղծ: և տուեալ
զնա երկրի՝ մատնէ դահճին — մահու կարծէ զմեղ-
սրն՝⁴, և հանեալ զլարութիւնն 'ի նմանէ և ցուցանե-
լով նմա՝⁵ զմեսս օձին և զնենդութիւն շարին՝ այլ մի

¹ Մեր օր. և նո զբարբն: — ² Ար. օր. զի գնա նմա իդե երես: —

³ Մեր օր. որովէ գ հաւատացի բնութիւնն արելցուզն: — ⁴ Մեր օր. և
հու իսրել գիւղան: — ⁵ Մեր օր. և ցուցանել նո զմեսս զին:

լուկիցէ նմա, գիտելով դոր ինչ առնելոցն էր զվերբա-
տին նորոգումն ^{1:}։ Եյլ և ոչ ետ նմա գութն իւր կա-
տարեալ զվճիռ մահուն, զոր եհատ նմա. զի ահա
ոչ մեռաւ հոգին, այլ հողն հող եղեւ՝ և բնակիչն
մնաց։ Աշ արուեատաւորն կարող ² է և զթած. և
նիւթն 'ի ձեռին նորա, և ժամանակն անմոռաց յա-
րութեան 'ի նմա։

Արուբդ սրբոց, զթութիւն և ողորմութիւն քեզ՝
փառք և գոհութիւն։

¹ ԱՄԵՐ օր. զնուո օյն, այլ և աւետ նմ քութն իւր իութեւ։ — ² Որ.
և արաւետագույն իութեւնեւ։



Արդ սրովքէիւք բոցապատ ալրարեալ Աստուծոյ ։
զդլախան, որ կայ ընդ արևելս յերկրի արմատացեալ
՚ի կատարա լերինն բարձու, որ հաւասար է գնտին
լուսնի՝ անծորելի պտղով և անթառամ սաղարթիւք,
որ ոչ ներգործէ արեգական² տիւ և գիշեր, այլ յարփ-
ւոյն պայծառանայ և կամ նշողիւք փառացն Աստու-
ծոյ՝ որպէս զմեծ գործ նորա և հրաշալի տեղի, ո-
րում ոչ համարեցաւ ³ արժանի յանցաւորն ⁴ տես-
լեան անգամ. այլ յամենայն կողմանց վառեաց վնա
հրով՝ ՚ի կողմանց և ՚ի վերուստ, որպէս զշանթական
հուրդ, որ յորժամ անգանի՝ զինքն և զտեղին ծած-
կէ յաշաց, զի մի ժալրհեսցի ոք խնդրել զնա առանց
կամացն Աստուծոյ։ Ուստի զամն երևսուն ողբացեալ
Ադամայ Արայիւ ⁵ զանխորհրդութիւնս իւրեանց
կուսութեամբ՝ և ապա գիտացին զմիմեանս, յանաս-
նոցն անգեալ յանարդանս. և ծնան զլային՝ հիւանդ
ծնողացն ցաւած ծնունդ, որպէս ասեն բժիշկք՝ կրք
միով կլիմաւ կոչեցեալք⁶։ Եւ զինի երևսուն ամաց ծը-

1 Մեր օր. բացապատ որարեալ սոցա զբարիւն։ — 2 Մեր օր. որ ու
ներբերեն որեկո՞ն։ — 3 Մեր օր. զբամ հրամայեցաւ արքանի։ — 4 Մեր օր.
որքանի զնացաւորն ուսուլուն անիւմ։ — 5 Մեր օր. Արտայ և նույի։ —
6 Մեր օր. ունի. ուրբ մուլ իլին խլիշեալ։ Ու. օր. ունի՝ որպէս ՚ի
բնագրին եդաք։ Եւ մին և միւս ընթերցուածն տարտամ ցուցանեն զի-
մասս բանին։

նան զԱբէլ և զԱբէլուհի՝ քոյր նորա . և զիսի այլ
ևս երեսուն ամի՝ սպան կային զԱբէլ, քանզի ուսեալ
՚ի ծնողացն պատուել զաստուած պատարագօք պա-
տուականաց և առաջնովք, և վասն սիրելոյն ¹ զմիմեա-
նրս՝ ընդ անձին և ընդ եղբօրն մատուցանել : Իսկ Ա-
բէլի ածեալ յանդրանկաց գառանց և՚ի պարարտաց՝
զեւր և զեղբօրն, վասն որոյ հայեցաւ ² Աստուած
նախ ՚ի Հաբէլ և ՚ի պատարագս նորա, և ՚ի կա-
յին ոչ հայեցաւ ³, զի զյոոին ⁴ երեր և ընդ անձին
միայն և ոչ մասն եղբօրն : Եւ ոչ եղև ընկալեալ ՚ի
վերուստ հրով՝ որպէս զՀաբէլին : Ա ասն որոյ ՚ի
կարծիս եղեալ կային վասն Աբէլ, թէ առնու զնա
՚ի դրախտն Աստուած վասն լընդունելի պատարագին
և նախանձու վառեալ՝ սպան զնա : Եւ իմացեալ Ա-
դամայ և Եւայի սգացին զնա ամն հարիւր քառա-
սուն : Եւ ՚ի կոչեին Աստուծոյ ողորմութեամբ զԼա-
յին յապաշաւանս՝ ստեաց և յաւել զմեղս ՚ի փերայ
մեղաց . և առեալ պիսակ ՚ի ճակատն՝ որպէս ասեն,
և դողդոջումն յամենայն անդամնն : Եւ ծնեալ որ-
դիս և թուունս՝ յերկարեաց տանջանքն ⁵, և նախա-
տանաւք մեռանի : Եւ որդիք նորա Ենովք և Գա-
յերիդագ և Այայիկ և Աաթուսաղա և Ղ ամեք
նման հօրն չարք էին : Որպէս Ղ ամեք խոստովանի կա-
նանց՝ այր և երիտասարդս սպանեալ, զոր ասեն եղ-
բարք յարդարոյն Ենովքայ, զոր սպան և առ զկա-
նայս նոցա, և ոչ թէ զԼային և զորդի նորա, որ նը-

¹ Առում. օր. և շան սկրոյն զդժունա : — ² Մեր օր. շան այսոքի հո-
գեցու : — ³ Մեր օր. և ՚ի կային ոչ հոգեցու : — ⁴ Ռ. օր. զէ զորին ե-
բեր : — ⁵ Մեր օր. և յերիւսիւոց եղիւլ դանդոնետ . . . մբառնի :

ման հօրն ասեն, զոր Աստուած ասաց ոչ ումեք ըս-
պանանել զնա: Եյս Դ ամեքայ որդիք՝ Քառվել և
Յօվեաղ և քոյր նոցա ՚ Նոյեմի¹ արարին քնարս և
երգս և մնգոյրս, և գտաւ ՚ ի նոցանէ դարբնութիւն
պղնձոյ և երկաթոյ: Խսկ զինի երկերիւր և երեսուն
ամաց ելիցն² ՚ ի դրախտէն եղեւ որդի միաթմարու-
թեան Եղամայ՝ Ակթ, որ յեա երկերիւր և հինգ ա-
մին ծնանի զլինովս, որ և վարս ուզեղս ցուցեալ՝ յու-
սացաւ յ Աստուած հատուցանել նմա և կոչեաց զա-
նուն տեառն Աստուծոյ յօգնութիւն: Եւ արար գիր
և գրեաց յերկուս տախտակս պղնձիս և խեցիս. և
մարգարէացաւ, եթէ երկիցս անգամ³ անցանի աշ-
խարհս ջրով և հրով: Եւ գրեաց զայս և զանուանս
ամենայն իրաց, զոր եղեալ էր Եղամ, զի պահեսցեն
՚ ի պնակիտսն: ՚ Ի ջրոյն՝ ասէ, պղինձն մնասցէ, և
՚ ի հրոյն՝ թրծեալ աղիւսն խեցեայ: Եւ վասն այսո-
րիկ սսրուծն կոչեցաւ և որդիք նորա ՚ բէի+ սսրուծոյ:
Եմլք ասեն, յորդւոց նորա երկերիւր անձինք յիշե-
ցին զկեանս դրախտին և ելին ՚ ի լերինս պահել զկու-
սութիւն, և աստի կոչեցան ՚ բէի+ սսրուծոյ: և ապա
ձանձրացեալք իջին ՚ ի լեռնէն Եհերմոնի, և հալա-
ծեցին զնոսա եղեալքն իւրեանց: Եւ որդիք կայե-
նի և դստերքն ՚ ի քնարս և ՚ ի մնգոյրս պատրեալ⁴ ըզ-
նոսա՝ առ ինկեանս դարձուցին առնուլ⁵ կանայս, զորս
ընտրեսցեն. և արարին այնպէս՝ անցեալք զուխտիւն

¹ Մեր օր. և ույր նոյս Նոյսէ: — ² Մեր օր. Ելանելոյն ՚ է որու-
թին: — ³ Որ. օր. Իմե իրեւս անէամ: — ⁴ Մեր օր. և ՚ անդոյս դարձի-
քին դնուս: — ⁵ Մեր օր. ունել իսնայս:

Աստուծոյ, որ եղեալ ընդ նոսա—մի՛ առնել¹ խնա-
մութիւն ընդ նոսա:

Եւ ասն՝ զինի հազար ամին ելիցն 'ի դրախտէն
որդիքն կայենի եղին իւրեանց թագաւոր՝ Ասմիրոս²
անուն, նոյնպէս և որդիքն Ամթայ՝ Աղորոս անուն, որ
եղիտ զթիւն կենդանակերպիցդ և զմոլորակացդ. և 'ի
սմանէ անուաննցաւ քաղրէութիւն, որ է հմայու-
թիւն աստեղաց: Եւ անտի թունն տասն թագաւոր,
և ժամանակ նոցա հազար հարիւր և ութսուն ամէ:
Ենովս հարիւր և իննսուն ամաց ծնանի զլայնան:
Կայնան հարիւր և եօթանասուն ամաց ծնանի զլա-
ղաղիել: Մաղաղիել հարիւր վաթսուն և հինգ ամաց
ծնանի զբարիեթ: Յարեդ հարիւր վաթսուն և երկու
ամաց ծնանի զլանոք: Ենոք հարիւր վաթսուն և հինգ
ամաց ծնանի³ զլամկք: Դ ամկք հարիւր ութսուն
և ութ ամաց ծնանի զլոյ: Եւ եղեալ⁴ եօթն հա-
րիւր յիսուն և երկք ամաց՝ մեռաւ յառաջքան ըզ-
հայրն քսան և ինն ամք: Դ հազար վեց հարիւր վաթ-
սուն և վեց ամի ելիցն Աղամայ ծնաւ կոյ, յորում
ժամանակի բազմացան չարիք և յաճախեցին անիրա-
ւութիւնք. զի նախ եգիտ սատանայ իւր վէն զորկա-
մոլութիւն, ապա զինասիրութիւն, ապա զսպանու-
թիւն: Եւ զայս արար սատանայ, զի 'ի շատ խառնիցն
լինին կանայք անձեռունդ⁵, և կենդանիքն սպանանեն
զմիմեանս և բառնայ մարդկութիւն. քանզի քսան

¹ Մեր օր. որ երիտ նոյս՝ ք' առնառը խնամութիւն ընդ նոսա: — ² Ո.
օր. Սամիրայ անուն: — ³ Աստուծօր յերկութին օրինակս մեր ոչ յեշի ա-
նուն Մաթուսաղայի: որդւոյ Ենոքայ: — ⁴ Մեր օր. և ելիտ եթին հո-
րիոր: — ⁵ Մեր օր. ապա զսպանութիւն, և ինդանիքն սպանանեն զմիմեանս:

այր մեռանէր վասն միոյ կնոջ, և ընդ կանայսեմ մայն
ունէին գիւաղաղութիւն, ասէ սուզր հայրն Խփրիմ։
Իսկ ինսակը տեսառն ընդդէմ չարին գրազում խառնան
առնէր պատճառ ծնանելոյ հսկայիցն անձոռնեաց։ Եւ
գէ 'ի կանանցն եղեւ կամաց¹ ախտն՝ 'ի ծնանելն ըգ-
յաղթանդամ կորիւնան՝ մեռանէին մարքն և ապրէ-
ին ծնեալքն։ որ և աճեցեալք և 'ի կցոս իւրեանց
հսկակին հայեցեալք² հպարտացեալք յո-իտենէց որ+
անռանէին զինքեանս։ Ա ամն որոյ զի Աստուած բազ-
մակեաց³ արար զնոսա, զի փոխանակ գրոյ լինիցին
զաւակացն և շատո⁴ ծնանիցին։ Այքա վիսացեալք բը-
նաւ ակն ոչ ունէին մահու⁵, զոր կարծեալ արարչնն
և առեալ յաղտեղեալ անձանց նոցա զհոգւոյն շնոր-
հըն՝ ասաց։ «Եղեցին տարիք դոցա հարիւր քսան,
և հոգի իմ՝ մի մնացէ առ դոսա⁶։ և հարիւր քսան
ամն ոչ հսաւրակաց մարդկան յայնմ հետէ, այլ արանց
ժամանակին ներումն ապաշաւանաց⁶։ Եւ եղեալ
«Եղի հինդ հարիւր ամաց՝ անքամբաս կենօք յանա-
պատի բնակելով կուսութեամբ, հրամայէ Աստուած
կին առնուլ և որդիս ծնանել և արկդ շնել, որ վե-
րարիրի ջուրց։ Եւ եղեւ ինքն վիցհարիւր ամաց՝ ա-
պաշխարութիւն տուեալ ժամանակին։ և զի ոչ ա-
պաշխարեցին՝ կարծեաց զժամանակն⁷, զոր ասեն ինն
հարիւր վաթսուն և երկու ամացն Ապթուսաղայի»

¹ Ուում. օր. և զի 'ի ինդանեացն եղեւ յարոց։ — ² Որ. օր. բազմո-
ւոց արար զնոսա։ — ³ Անք օր. և զոր ձնանիցն։ — ⁴ Որ. օր. ուն + է-
սոցիւլք բառավիճ ու սակէն բահու։ — ⁵ Անք օր. և հոգի սոսուց էմ
ու մասոցէ 'ի դոսա։ — ⁶ Որ. օր. ներումն յապտղաւանաց։ — ⁷ Որ.
յարիւր զժամաց։

յաւեկեալ և անցեալ՝ի ներքոյ ջրոյն. վասն որոյ 'ի վեց
հարիւր ամին եղեւ ջրհեղեղն և կորոյս զամէն : կեն-
դանիս՝ բայց յայնմանէ, որ ընդ Առի կային 'ի տա-
պանին ընդ ութ բանականնան :

Այլ զթիւ յամելոյն Եղամայ 'ի դրախտին ոչ ոք
կարէ գիտել², մի՝ զի ժամանակագործ արեգակնս այս
ոչ սպասաւորէր դրախտին, և երկրորդ՝ զի որքան ան-
մեղ էր Եղամ³, ընդ անմահման էր նորա վիճակն, որք
չեն ընդ տարիեօք, իսկ զկնի յանցմանն ոչ յամեաց 'ի
դրախտն, զի ընդ մահու վճռաւ եմուտ. և Եստուծոյ
մեռաւ՝ գերազմանի պէտք էին և դրախտն անմահից
էր տեղի, վասն որոյ յերկիր հանեալ՝ մատանէ ընդ ժա-
մանակաւ⁴: Եւ անտի համարէ Առդին զտարիմն 'ի
ձեռն Առվախսի, որ լինի ըստ եօթ անասնիցն թարք-
մանութեան՝ յելիցն 'ի դրախտէն մինչև ցջրհեղեղն
երկու հազար երկու հարիւր քառասուն և երկու ամ,
և ըստ Երբայիցւոցն հազար վեց հարիւր յիսուն և վեց
ամք՝ պակաս եօթն հարիւր ութսուն և վեց ամքք: Եւ
զպատճառն ասեն, թէ կնասսէրք էին Արէայքն՝ կարձե-
ցին զտարիս ամուսնանալոյց առաջնոցն, զի մի ոք ար-
գելքէ⁵ զնոսա 'ի տղայութեան առնուլ կանայս, քան-
զի անմիաբանութիւն նոցա նախ քան զամուսնանալն
է: Զի զԵղամ հարիւր և երեսուն ամաց ասեն ծնա-
նել զլէթ, և Ակթ հարիւր և հինգ ամաց ծնանել զլր-
նովս: Իսկ յետ ամուսնութեան զժամանակն զոյգ բե-

¹ Որում. օր. և խորոյ զամենայն լինդաննու: — ² Որ. օր. «Հ իորիւր ա-
ռել: — ³ Որ. օր. զի որդոն Արամ անմել էր 'ի դրախտին, ընդ անմահու: —
4 Արե օր. մարնի ընդ ժամանակոս: — ⁵ Արե օր. զի գ որդուր զնոսու 'ի
դրախտիւն:

րեն եօթանամնիցն, և 'ի Յարեղէն և 'ի Մակթուսա-
ղայէն և 'ի Դամեքայն Հարանին դարձեալ, որ ա-
ռաւել յանդիմանէ զնոցա ստութիւն. զի թէ կը-
սերքն շատ պահեցին զողջախոհութիւնն, քանի՞ ա-
ռաւել աւագքն և լաւքն¹:

Երդ՝ Նոյ լեալ հինգ հարիւր ամաց ծնաւ զլիեմ,
գլխամ և զՅարեթ, որովք ապրեցաւ 'ի ջրոյն, որ եզւ
'ի վեց հարիւր ամին իւրոյ: Եւ զկնի ելիցն 'ի տա-
պանէն եկաց² այլ ևս երեք հարիւր յիսուն ամ և
ծնաւ՝ ասեն, որդի մի այլ՝ Մանհիտոն անուն, և դու-
տրը մի՝ Աստղիկ անուն, որոց բաժանեաց զամենայն
աշխարհս, նախ յերիս հատեալ բաժինս ըստ երից
որդւոցն, որք ելին 'ի տապանէն — յլուրոպիա, 'ի
Լիրիա և յլսիա: Եւրոպիա մանեւ ասի, քանզի
մասնեաց Նոյ³ զարեմուտոս՝ կցելով 'ի նա յարեելից
յլումայոն լեռնէ, և ետ զնա Յարեթի, որ ձգեցաւ ևս
մինչև ցլերինս Կասրից և Կովկասու՝ և լցին զիղզիս:
Եւ մասն ինչ յարեմուից հատեալ՝ ետ Մանհիտոնի,
որ խնդրեաց յոսկերացն Ադամայ, զոր ունէր Նոյ 'ի
տապանն, և ետ նմա զլուռունս ծնկացն և գնաց. որ և
եղիտ զհաւահմայութիւն և նա է հայր բնակչաց Իիւ-
րիտանացւոց⁴: Եւ Լիրիա է բաժին ասի, որ է մեծ
սահմաննակողմն հարաւոյ⁵ յլուգիպոտոս, և ամենայն
Հնդկաստան և Եթովպիա, զոր ետ Վրամայ. և զեր-
կիրն խնկարեր, որ կոչեցաւ Երջանէ Արտեփու՝ ետ Աս-

¹ Մեր օր. լոր զանցքն զողջուստանիւն առափել առափն և լուսին: —
² Որ. օր. և զնէ ելիցն է բաղանին այլ ևս երեւ հորիւր: — ³ Մեր օր.
տանցք հունեց նոյու: — ⁴ Մեր օր. Բնդրիտանացւոց: — ⁵ Որ. օր. և
գուգան իուզն հարաւոյ:

տղըկայ գատեր իւրոյ¹, ուստի եկն տիկինն Ապայ. զի
յայնմ հետէ կանայք ժառանգեն զնա: Իսկ Եսիա
առուծութոյն ասի, որ է արեւելք՝ տայ զնա Անեայ՝
Կարմիր ծովէն և յեւկիլայ և 'ի Պաղեստինայ և յԵ-
սորւոց² մինչև ցՊարթես և ցՎՀրկան և ցելսն ա-
րեու: Տայ նմա և զոսկերս նախաստեղծիցն արկեզք,
զոր 'ի բռնանայն Վրամայ 'ի վերայ նորա՝ թաղէ 'ի
Գողգոթայ և 'ի ԲԵթղէ՛էմ: և եղ նզովս, զի մի' յա-
փրշտակեսցեն զմիմեանց:

Խնդութիւն և խաղաղութիւն արարածոց քոց և
բարի բաժին՝ Տէր ողոլմութեանց³. — Քեզ պատիւ և
գոհութիւն յաւիտեանս, ամին:

Յետ աշխարհաւեր ջըոյն յերկրորդում ամին ծը-
նաւ Անմ զՄրփաքսադ 'ի հարիւր և երկու ամին իւ-
րոյ: Մրփաքսադ 'ի հարիւր երեսուն և հինգ ամին ծը-
նաւ զԼայնան: Այ բազմացցց զքաղղէութիւն և ե-
գիտ զկախարդելն աստեղաւէք, վասն որոյ որդիքն իւր
աստուած համարեցան⁴ զնա և արարին նմա պատ-
կեր կենդանութեան և պաշտեցին զնա: Կայնան հա-
րիւր քառասուն ամաց ծնաւ զԱպայ: Ապայ հա-
րիւր երեսուն ամաց ծնաւ զԵրեր: Երեր հարիւր ե-
րեսուն և չորս ամաց ծնաւ զՓաղեկ, որ է բաժանում.
քանզի անհաւան յեալ վիճակացն՝ տուելոցն 'ի 'Եռ-
յէ, վիճէին՝ մինչև դարձեալ բաժանեցին ըստ բազ-
մին և ըստ սակաւին աճման ազգի մարդկան: Եւ ա-
պա միաբանեալք ընդ միմեանս սիրով՝ խորհնեցան զը-

¹ Որում. օր. Աբոբետ և Ասորիոյ բարերն իւրոյ: — ² Մեր օր. և Ա-
սորեց: — ³ Մեր օր. ոեր ողոլմոց: — ⁴ Մեր օր. Ասորուսի համարեցն:

նալ յարեելս տեսանել զդրախան, զոր լուեալ էին՝
թէ անտի ելեալ էին նախաստեղծքն։ Եւ իբրև չո-
գան զշատ աւուրս, և ահա ծով լայնանիստ անջըռ-
պետեալ էր զնա յերկրէ. և դարձան անտի՝ խորհե-
լով՝ ի մնութիս, եթէ վասն մեղաց ջուրն աւերեաց զեր-
կիր և անց ծովն ընդ մէջ դրախտին, և մեղքն այն այս
սօր գտանի ՚ի մեզ¹ և ոչ պակասէ յաշխարհէ։ Եւ
արդ եկայք շինեցուք մեզ աշտարակ պահել զմեզ²՝
գալ պատուհասի մեղաց ջրոյ։ Եւ էր Փաղեկ ամաց
հարիւր երեսուն և չորից և ծնաւննամ Ուաղաւ։ Եւ ե-
կեալ իշխանացն աշխարհի յերկիրն Աննարի՝ ի դաշ-
տըն Քաղանէ՝ արկին հիմն քաղաքի և շինեցին զնա
վաղվազակի։ Եւ մկսան ապա շինել զաշտարակն յա-
ռաջին ամին Ուագաւու՝ տսեն, ոսկեղէն և արծաթե-
ղէն սարողք, շուրջն դնելով աղիւս՝ խորովեալ հրով-
զանկեալ բռով, կրով և կտրով³, արձակահիմն խո-
րառմէջ լայնափողոց բացեալ պատուհանաւք լուսա-
բերգք. ասեն և ակունս լոււարձակս դնել առ պատու-
հանաւքն։ Ենիսանջ վաստակօք զամառն և զձմեռն
գործէին և հողն ձեռն տայր⁴։ և շար իմն մըջմանց՝
յամենայն կողմանց եղողաց և իջողաց այր զայր դրբո-
ռէր և կին զընկերն իւլ։ Եւ ոչ ոք ասէր, թէ ես շատ
գործեցի քան զքեզ, այլ թէ դու շատ գործեցեր քան
զիս, զի դեռ անախտ և անցաւ ունէին դընութիւն։
Եւ մինչեւ ցքառասուն ամին Ուագաւու ոչ առին պա-
րապ գործոյն՝ մինչեւ հասուցին յօդն անոտես, յորւ

¹ Մէր օր. էրունէ ու մուլ։ — ² Ու. օր. իրու և իսպարուլ։ — ³ Մէր

օր. և հողայն յերս բայց։

ձուտն և մղձկուտն եւ 'ի սատակողն, յոր թռչուն ոչ
վերանայ, և թէ ձկոի՝ թեակիզեալ անկանի: Եւ
ասեն, թէ զոսկին 'ի յատակացն սկսեալ տարան ընդ
մշն մինչեւ 'ի վեր և հալէր 'ի ջերմութենէն, և մար-
դիկն ջանային ևս հնարիւք անկէզ մնալ. և ոչ կա-
սեալ 'ի գործոյն՝ մինչեւ ինքն Տէր ողորմեալ դա-
դար տայր՝ առնուլ յանօգուտ ջանիցն: Եւ գտա-
նին զրոյցք 'ի տանն Կերրովթայ, եթէ նախ հրեշտակ
եկն առ Կերրովթ, որ իշխան էր և որսայր շինողացն
կերակուր, և ասէ ցնա. «Ես եմ Հրեշտակ Աստուծոյ՝
կողմապետ արեելից. — այսպէս ասէ Տէր Աստուծ
Երկնի և երկրի. Վլուցեք դադարեցէք 'ի գալոյդ առ իս,
զի ոչ կարէք. այլ ես եկից առ ձեզ 'ի ժամնակի և
տաց ձեզ սանդուղն՝, որով կարէք գալ և դուք առ
իս»: Եւ ոչ լրտան հրեշտակին: Վպա ինքն ասաց ցէ-
ակիցն իւր՝³ «Եկայր՝ մեք իջցուք և բաժանեսցուք
զլեզուս նոցա»: Եւ զի ստեղծուածք ձեռաց նորա՝⁴ 'ի
ցատմանէ զարհուրեալք, փախչէին առ նա, ոչ պատ-
ժեաց զնոսա, այլ հոտով՝⁵ դրախտին արբեցոյց զնո-
սա, զի հանդէպ կայր դրախտին զլուխ բրդանն՝⁶: Եւ
այսպէս միիթարեալք զմայլմամբ յանձառելի բուր-
մանէ հոտոյն՝ մոռացան զառաջին լեզուն: Եւ չարար
զնոսա վաստակ միւսանդամ՝ քակելով, այլ հողմոյն
հրամայեաց գործ, և ոչ զոք սպան 'ի նոցանէ՝ զի ոչ
շրջեաց, այլ հոսեաց: Եւ շատ ինչ բարի եղեւ. մի՝ զի
ծանեան մարդիկ զեւրեանց տկարութիւն, և դար-

¹ Ո. օր. գործոց բայր: — ² Մէր օր. և բաց յեզ առնդունիքու: —

³ Մէր օր. զոս ինք առց գիտին իւր: — ⁴ Մէր օր. ոյւ հրու դրժ-
ոք: — ⁵ Ո. օր. զի հոնդէպ իւր գրախուն էլուսին բրդանն:

ձեալ՝ զի պատմառք իմաստից և գեղեցկութեան՝ ի խո-
շըր լեզուէն առաջնոյ և՝ ի կօւտածե՝ փափկագոյն հել-
լինացւոց և սաստկագոյն հռովմայեցւոց, հոնն սպառ-
նական և ասորին աղաջական, պարպիկն պերճական և
ալանն գեղեցկածե, գութն՝ ծաղրական, եղիպտա-
ցին խարափածայն և հնդիկն ձնուող, և հայն ևս ա-
մենազարդ և համեզական. և որպէս ազգի ազգի գոյնք
գեղեցկութիւն առնեն² և զանազանութիւնք հասա-
կաց, այսպէս և լեզուաց զանազանութիւնք: Եւ ա-
ռաջին լեզուն մնաց առ Խրերայ³, որ ոչ միաբանե-
ցաւ⁴ ընդ այլն: Եւ որպէս մեղքն բաժանեաց յեր-
կու տուն զմարդիկ՝ ՚ի Ասյենին և ՚ի Անթայն, նոյն-
պէս և աստ երկու եղեն ազգ մարդկան՝ Խրեր և հք
տանուտէրքն՝ որպէս զի Աստուած միազօր համակ
քաղցրն՝ ՚ի մէնջ հարկեալ և տանջէ՝ ևս և կոչե Աստ-
ուած և Տէր. և թէ ՚ի յարութեան հասարակ՝ յլ Խ-
րերայն⁵ խօսի: Բայց զայս է ասել, եթէ ցեղացեղ
և բազմակարօտ մեր բնութիւնս և յոդնանուն երբ
պարզի և մաքրի՝ անկարօտ լինի, զեզուս հրեշտակաց
առնու՝ ասէ սուրբն Խղիշէ, որով ընդ Աստուած և
ընդ միմեանս խօսին: Ա. Յ. Տէրն ելից զկարօտութիւն
մարդկան՝ զիտայն տուեալ աշտարակ մարդկան յեր-
կինս ելից⁶ և զաստիմանս առաքինութեան զօրինա-
կըն⁷ Յակովը ցուցեալ: Եւ անդ իսկ կոչեաց հո-

¹ Մէր օր. հուներն ձագային: — ² Բ. օր. և Գոյն ևս ոքիազգորդ և
զանազանութիւնն հասուց: — ³ Մէր օր. Զայ ուր երեր: — ⁴ Բ. օր.
որ ու Գոյնայոց: — ⁵ Մէր օր. և մի ՚ի յարութիւնն հասուրով ՚ի յերերոյն
իւսի: — ⁶ Մէր օր. աշտարակ մարդկան յարելից: — ⁷ Մէր օր. և զաստի-
ման առաքինութիւնն զատկանուին Յակովը ցուցեալ:

գին, որ բաժանեաց զլեզուսնոցա՝ հրեշտակս Աստուծոյ փոխանակ մարդկան, զի յօժարեսցին առ հրեշտակս կանել: Լացոյց՝ ասէ, սահմանս ազգաց, ըստ թուոյ հրեշտակաց Աստուծոյ թուեաց՚ի հրեշտակս, և յայլ ամենայն լեզուաց կացոյց վերակացուս՚ի հրեշտակաց Աստուծոյ, զի մի օտարասցին ամենեկին յԱստուծոյ հիթանուք:

Ի՞այց Ռէկ՝ հպարտացեալ յանձոռոնի հասակն իւր, որ էր վաթսուն կանգուն², հնազանդեցոյց ինքեանն զամենկայն իշխանս՝ որպէս աստուծոյ, և ապա արձակեաց՝ բաց՚ ի ձայկայ, որ է որդի Խորդումայ, որդւոյ Յարեթի, որդւոյ Նոյի, որ ոչ պաշտեաց զնա աստուած: Եւ զի եկն՝ ի վերայ նորա ծանր ամբոխիւ՝ և ապան զնա ձայկ՝ նետիւ հարեալ՝ ի սիրտն³՝ պղնձօք տախտակեալ: Իսկ որդիքն Վամայ՝ ի գնալն յերկիրն կալուածոց իւրեանց տեսին զՊաղեստինէ և զկողմանս Յորդանանու, զի պարարտ և յուռթի էր, բնակեցան անդ⁴ ուժով Ռէլայ՝ ազգականին իւրեանց, և զրկեցին զորդիսն Ամենայ. և եղեւ պատերազմ սաստիկ: Եւ և որդիքն Յեկտանայ՝ Արայ և Եւկլայ և Աւկիր⁵, իմացան զկազմուած զինուոց և ինզրէին իւրեանց տեղէ ընդարձակ, զի աձեացն՝ ի բազմութիւն: Եւ յերեսաց նոցա գաղթէին մարդիկ յամրոցս ինքնագործս: Եւ ապա սկրսան շինել բերդս: Եւ պատերազմողքն գտին մեքենայս առման ամրոցացն, մինչև ձանձրացեալ ազգացն⁶

¹ Մեր օր. Խուեց հոփէն: որ իւեց զլեզուսնոց: — ² Որ. օր. հոսոյ իւր կոմուռան խնդուն: — ³ Որ. օր. հոքուլ զիրոն: — ⁴ Մեր օր. Բնավեցն և անդ: — ⁵ Որ. օր. և Սոփէ: — ⁶ Որ. օր. Քինէ յանքրանու ազգացն:

յլնտիր առնեն նոցա զերկիր զօր և կամեսցին։ Եւ առ Ասրայն զինկարեր երկիրն, զոր Ասրայ կոչեաց. և Աւիիր զաշխարհն ոսկեհանաց, որ է Նողիկը. և Եւիլայ զերկիրն պատուական ականց, և անուամբ իւր կոչեաց Եւիլատ։

Այլ Առագաւ հարիւր երեսուն և երկու ամաց ծնաւ զլիերուք։ Այլուք հարիւր երեսուն ամաց ծնաւ ըզ-նաքովր։ Եւ շինեաց Այլուք զլիյում։ “Նաքովր եօթանասուն և ինն ամաց ծնաւ զմարայ։ Խնարայ եօթանասուն ամաց ծնաւ զլիյրահամ։ Յայնմ ժամանակի ասեն լեալ զլմազոնս, որ է կանանց զինուորութիւնք. քանզի զիին ոմն ասեն յազգէն Խորդումայ ժառանգ մնացեալ թագաւորութեան ազգին”¹ Հատեալ արու զաւակացն։ Եւ էր քաջասիրտ և արի և առերէր զազգս բազումն։ Իւ եղեւ գժտութիւն ՚ի զօրացն և կոտորեաց զնոսա և սոտացաւ զօր ՚ի կանանց, և նոյնպէս առնէր՝ եղեալ զաթոռ թագաւորութեան խրոյ յլշիոն քաղաքի²։

Ծիշեսցուք համառաւտիւք և զմեր նախնին զՅաբեթ, որ զկնի ջրոյն ծնաւ զԳառմիր՝ ուստի Գառմիրը, և Արագոդ՝ յորմէ կեղաք և Գառզատացիք, և Անեղա՝ որ զՄարս շինեաց, և զՃորէլ՝ յորմէ Բռէնալք և զՄոսոդ՝ որ առ զԼիրիկիա³, և Խիրաս, յորմէ մերն⁴ Եպքանաս⁵։ Եւ Խորդում ծնաւ զՆայկ և զեօթն եղ-

¹ Մեր օր. ժառանգ Թայեալ յազին և թափառութիւնն։ — ² Մեր օր. և սուսաւ զըս ՚ի խնանց, և այնպիս առներ եղեալ զմիռու թափառութիւնն իւրոյ յալիտան գոզսիք։ — ³ Բ. օր. որ առ զԼուորին։ — ⁴ Բ. օր. որ Գրի Ալտօնան։ — ⁵ Առանօր ՚ի մերում օր. առնանի այս բան խառնագնդոր և նորիուն յառանայունք և ՚ի թալլոյ վիւն և ունքինցիք, ովուն հոռովայեցիք և լոռինացիք, զըս ու աւելորդ համարեցաք յառաջ բերել։

բարս նորաւ՝ դժբարթլոս¹ և զկազիաս և զայլմն, ողք
ժառանգեցին զհիւսիսի: Եւ ՚ի Հայկայ Արամաննեակ,
յորմէ կոչեցաւ լիտոն Արագած: Եւ յԱրամաննեկայ
Արմայիս, որ շննեաց զԱրմաւիր: Եւ Արմայիս ծնառ
զԱրմասիա, յորմէ կոչեցաւ Մասիս լիտոն: Եւ Ար-
մասիա ծնառ զԳեղամ: որ շննեաց զԳեղարքոնի:
Գեղամը ծնառ զՄիսակ՝ յորմէ Ահենիք և զՀարմաց,
որ ծնառ զԱրամ, յորմէ ամենայն ազգ կոչէ զմեզ
Աբեն: Օ ՚ի սա ընդարձակեաց զահմանս Հայոց,
որ զկապաղովկացիս և զպոռախն և զկլիմայն ընդիւ-
րմ նուռածեալ՝ Արմաննեակ կոչէր: Եւ յԱրմաննեկայ
և ՚ի Պոնտոս առաջին Հայը, և ՚ի Պանտոսէ ՚ի Քա-
ղաքն Մելտենի երկրորդ Հայը, և անտի ՚ի Ծոռփաց
գաւառն երրորդ Հայը, և անտի ՚ի Քաղաքն Մար-
տիրոսաց և յԱղճիս չորրորդ Հայը, և զենպհա-
կան աշխարհն իւր կոչէ Մեծ Հայը: Եւ սա ծնառ
զԱրայն գեղեցիկ, որ մեռաւ ՚ի Ծամիրամայ՝ թող-
լով զորդի զԱնուշաւան: Որոց կարգի ազգն այսպիս՝
Պարեստ, Արբակ, Օաւան, Փառան, Առուր — յա-
ւուրս Յեսուայ, — Յանակ, Յամբակ, Առնակ, Կոր-
այր, Վաստակ, Կարգուակ, Յուռան, Ընծակ, Գլակ,
Հաւան, Օարմայը, որ յԽիւսիսն պատերազմին ընդ
կթովպացւոց զօրուն մեռանի²: Պերճ — յաւուրս
Դաւթի արքայի, — Արրուն, Հոյն, Յուսակ, Կա-
պակ, զոր պսակէ Վարբակէս Մար, որ հանեալ
զթագաւորն³ ՚ի Արդանապալլեայ տիրէ Ասորես-

¹ Բուռմ. օր. զՔարիլու: — ² ՚ի մերում օրինակի ՚ի Յառան՝ էն մինչ
ցիւռանկ պակասի: — ³ Եւ ՚ի մերում և ՚ի Ռումենցովեան օր. եգեալ
կոյ զԲագուսուն, զոր զԲագուսուսնիւն ընթեռնուլ պարտ է:

տանի և ‘Ախնուելի’։ Եռ սա եկին որդիքն Անկքերի-
մայ և պատուեցան ևս ’ի Պարոյրոյ, զոր յաջորդէ
Հրաշէ՝ որդի իւր, որ էր ընդ ‘Արուգողնոսորայ
յլարուսաղէմ և ած զ՛ ամբատ ընդ իւր ’ի Հայս,
յորմէ աղգն Ռազրատունեաց։ Եւ յետ Հրաշէի
Փառնուազ, Պաճոյճ, Խայինակ, Փովայ, Հայկակ,
Խրուանդ, որ ծնաւ զմեծն Տիգրան, որ սպան զՄժ-
դահակ և զԼիրեսաս ըմբոնեաց և արձակեաց։ Բար,
Տիրան, Վահագն, Եռաւան, յորմէ առաւեղեանք,
Ներսեհ, Օարեհ, Երմոդ, Պայգամ, Վան, Վա-
հէ, զոր սպան Եղեքանդր մակեդոնացին *։

Խակ ’ի Վամայ, որ մնաց մեզ ասել՝ ‘Վուշ, Մե-
սարիմ, Կերրովդ, որ է Ինչ’։ ‘Ախնոս’ այրն Ը ամի-
րամայ։ Եսասցուք և զկարդ թագաւորացն ^Հ ‘Կեր-
րովթ’ի Բարելոն Հիւամձու թագիւ պասկեալ և ոչ

* Անփոփոք պահեցաք առանիօր զկարդ և զուղղագրութիւն յատուկ
անուանց, որպէս և գտաք խէ յերկոսին գրչոգիր օրինակ մք, և
ոյն՝ զի ընթերցացք բարդառել կարացեն զայնո ընդ շարի հայկազուն
նահապետաց, զոր յառաջ բերէ Սովուս Խորենացի յիւրում՝ Պա-
տութեան։ Առ գիւրութիւն մերց ընթերցանելեաց գիցուք ’ի տառի-
տու զայդոսիկ անուանուգ, որ և զայս ունին կարդ առ քերթողհօրն
Սովութիք. — , Անուշաւան, Պարեա, Արբակ, Ջառան, Փանաս, Ցուր,
Հաւանակ, Վաշտակ, Հայկակ, Ամբակ, Ասեակ, Շաւարչ, Նորայր,
Աստամկար, Գոռակ, Հրանտ, Ընձաք, Գշակ, Հօրոյ, Զարմայր,
Պերճ, Արբուն, Բաղուկ, Հայ, Յուսուս, Կայրակ, Եկշորդի, Պարսոր,
Հրաշեայ, Փանաւաս, Պանյան, Կոռնակ, Փաւաս, միւս Հայկակ, Եր-
ուանդ, Տիգրան, Բար, Տիրան, Վահագն, Առաւան, Ներսեհ, Զարեհ,
Երմոդ, Բագամ, Վան, Վահէ։

¹ ’ի մերում օր զինի անուանու Բել Եդեալ անուանեմբ զհետապայ ա-
նուանու՝ „Բամիք, Անիբիո, Արբիլ, Քոյուզ, Գու Արմել, Կինո”։ —

² Զինի բառիո Բագուարացն ’ի մերում օր գրի „սուսին Բագուարացն
Ներուիթ”։

կուածու 'ի 56 ամին Աերուքայ: Աս շինեաց զ՛ը օշ
քաղաք, որ ասեն զ՛լ սպահան, և սա սպանաւ 'ի չայ-
կայ: որդւոյ Խորգոմայ: Եւ թագաւորեաց Խնիրու¹
քաղղէացի. յաւուրն սորա գտաւ արուեստ ոսկեհա-
նութիւն և արծաթագործութիւն: Եւ յետ նորա
թագաւորեաց Ասմիրոս՝ յազգէն Աեմայ, ամն եօթա-
նասուն և երկու. սա սկսաւ² դահեկան և դրամգոր-
ծել անուամբ զրոյ³: Եւ առ սովաւ գտաւ քանդը-
ւածն նկարոյ և կազմագործութիւն և չափ և կշիռ
և ամենայն բարեկարգութիւն⁴: Օ սմանէ առէ ԱԿ-
նանդրոս մոգ, Աթէ երկը աշխ ունէր:

Դաքսան և հինգ ամին Կաքովրայ էր ճգնութիւն
Յովբայ, որդւոյ Օ արեհի, որդւոյ Ուագուէլի, որդւ-
ոյ Խսառայ, որ զամն երեսուն և ութ պատերազ-
մեալ ընդ սատանայի՝ յաղթեաց համբերութեամբ
և փառաւորեցաւ:

Յեօթն ամին Խարարայի թագաւորեաց Կրփիազատ
ամն տան և ութ, և զինի Ա իլս աթուրացի ամն
վաթսուն և երկու՝ Հանեալ զպատիւն 'ի Տարելոնէ
յԱթուր, որ է Կինուէ. բայց Վսարոս ոմն թագա-
ւորեաց 'ի Տարելոն և Աահիրոն եղբայր սպան զնա
վան հանելոյ 'ի նմանէ զլայնան կուռքն, որ քրմա-
պետ էր⁵: Աստ շինեցաւ Դամասկոս յԱրամայ հի-
թացւոյն: Եքրահամու մօրն Մալքաթու⁶ էր անու-
նըն: Եւ յետ տան ամի ծնանելոյն Եքրահամու ծնաւ

¹ Առում. օր. ունի Ցիրոս: — ² Մեր օր. և նո մաս դահիւն: —

³ Եերկոսին օր. կայ անուամբ գրոյ: զոր ընթեռնուլ պարս է իւրով: —

⁴ Օր. օր. Բարեկոյնութիւն: — ⁵ Մեր օր. զոր դրապիր: — ⁶ Օր. օր.

Մոյտովու:

Թւարայ զլիարրայ 'ի Զմրութայ և կնոջէ իւրմէ և ոչ
'ի մօրէն Երրահամու՝ որպէս ինքն առաց ցԵրիմե-
լէք², թէ քոյր իմ է՝ ասէ, 'ի հօրէ և ոչ 'ի մօրէ: Եւ-
լիալ Երրահամ տասն և հինգ ամաց՝ սկսաւ³ խնդրել
զԱստուած մինչև ցեօթանասուն ամն: «Քանդի պա-
րարտ և բազմաշահ երկիրն Վաղրէացւոց գրգռեաց
զնոսա յամենայն չարիս, յորում այց արար Եստ-
ուած և արածել հրամանաց ձայից բազմաց զանդո
և զայգիս նոցա բազում ժամանակս: Եւ իւրաքան-
չեր ոք⁴ սակաւ ինչ վաստակէր և պահեր իրրե զուա-
րածոցս, և անկան յաղքատութիւն: Եւ Երրահամ
էր պահապան 'ի հայրենիս իւր, և ուսանէր 'ի գիշե-
րի զաստեղագիտութիւն և 'ի տիւն վաստակէր 'ի պա-
հեն զանդս⁵, և զամենայն զոհս և զուխոս և զարդա-
կառարելով պաշտեցեալ դիցն իւրեանց՝ և ոչ լինէր
զիւրութիւն: Զնոյն և Երրահամ առնէր և մտա-
խոհ լինէր յինքեան, թէ չէ պատուհաս 'ի մերոց
պաշտելացս, վասն զի ոչ կարեն բառնալ, այլ և ոչ
յարուեսֆէ տատեղացս պարտ է հանաշել, զի 'ի շարժ-
ման կան միշտ և 'ի ներըռյ հալիկի: Եւ յայտ է, թէ գոյ
սմն կառավար սոցա՝ մեզ անծանօթ: Եւ ապա ըս-
կսաւ պաղտառանաւք ասել. — «անծանօթ Եստուած,
ամենայնի արարիչ⁶ և այտ թռչնոցս, դու հալածեա
զոսսա». և նոյնժամայն անյօյտ եղեն: Եւ ասաց
Երրահամ. — «ահա գտաք զԱստուած, աւրհնեալ⁷

¹ Եւր օր. 'ի քանիքայ: — ² Ո. օր. սոց ոռ Աթենէլու: — ³ Ո. օր.
սոսնէ ինդրիւ: — ⁴ Եւր օր. և իւրուանէր սոխու: — ⁵ Ո. օր. 'ի
զանդս զյոնդոս: — ⁶ Ո. օր. յամիսայի որտիւ: — ⁷ Եւր օր. ահոյէ և
ուերասիւն ժո:

է տէրութիւն քո, և փառք քո լցցէ զառենայն երկիր»: Եւ պատմեաց 'ի տան հօր իւրոյ՝ և անփոյթ եղեւ նոցա զիրացն:

Յայնմ ժամանակի մեռաւ Ա իլոս թագաւորն և առ զթագն՝ Ամնոս՝ որդի նորա, որ շնուաց զկուռս հօր իւրոյ ոսկեղէն և ընդարձակեաց զԸմբուր քաղաք և յանուն իւր կոչեաց Ամնուէ: 'Ի սարա ժամանակին շնուաց Անկքիսեղեկ զԵրուսաղէմ: Եւ Երարահամ ոչ գաղտարէր 'ի խնդրելոյ զերեսումն Սատուծոյ. և լուսու նմա, և ըստ ասնելոյ նորա յայնեցանմա և ասէ. — «Աշլ յերկրէ քումնէ և յազգէ, և տարայց գքեզ 'ի զրկեալ զիճակն ձեր, և քեզ և զուակի քում տաց զնա»: Եւ առաց զբանն հօր իւրում և ել ընդ նմա և եկին մինչեւ 'ի խառնան և ստացան անդ տուն: Եւ շնուաց անդ թարայ մեջիան կռոց. և այրեաց զնա Երրահամ: և Շոան եղբայր նպաս կամեցաւ շեֆուցաննել և այրեցաւ անդէն: Բմանք ասեն, թէ պիշտակէնն նա հնարեցաւ² և մեռաւ 'ի մեռանէ: Եւ գարձեալ լինի առ Երրահամ: ձայն Ստուծոյ ելանել 'ի խառանէ. և ել ըստ բանին աենուն: Անն այլ եկին առնել³ Երրահամ և որդի Բվուկստէս անուն, զորս թողեալ զամենեսին գնաց 'ի Պաղետափնէ եօթանաժումն և հինգ ամաց, և ութ տուն և եօթն ամաց էջ յլրդիպտոս և ել անտի անսմոռաց 'ի տեառնէ: Եւ հարիւր տանն և հինգ ամաց լիալ՝ ած զորդին 'ի զենումն. 'ի հարիւր քսան և ութ ամին առ գիրետուրա

¹ Առում. օր. յունիլին: — ² Մեր օր. Աւ զէսիլոն հոսքիցու: —

³ Որ. օր. այլ լին առնել:

և վեց որդի ստացաւ 'ի նմանէ. 'ի հարիւր եօթանա-
սուն և հինգ վախճանեցաւ յերեսուն և եօթն ամին
Յակոբայ: 'Ի քառասուն ամին առ Խաչակ զլե-
րեկայ և 'ի վաթսուն ամին յղացաւ և գնաց հարցա-
նել 'ի Մելքիսեդեկայ, և նա ասէ. — «Երկու ազգ է
յարգանգի քում և երկու ժողովարդ»: Յեօթանա-
սուն երկու ամին Սահակայ 'ի ասաներորդ հարստա-
թիւն իշխանացաւ Արգիպոս Շմիք և ատառուած
կարծեցաւ. զնա Սարապիս օմանկը ասացին: Եւ ի
հարիւր երեսուն և եօթն ամին Սահակայ գնաց Յա-
կոր 'ի Խառան առ Լ արան, և ութսուն ամաց առ
զլ իս զդուսոր Լ արանայ: Յաւուրս Յակոբայ Փա-
րաւոն թագաւոր Եղիպտոսի օրէնս և գատաւորս եղ,
և Ակգեգիս շննեաց զլշլեպիտ յՆատիկէ: Յակոբ 'ի
հարիւր ¹ ամին եղ առ Խաչակ հայր իւր: և մետա-
սան ամաց եր Ղ կի, զի յութսուն և բնն ամին ձը-
նաւ զնա, և յեօթն և տան ամին վաճառեցաւ Յովա-
սէփ: յերեսուն ամին եկաց առաջն. Փարաւոնի ² 'ի
հարիւր երեսուն ամին էջ Յակոբ յԱզիպտոս, հա-
րիւր քառասուն և եօթն ամաց մեռաւ Ղ կի, քա-
ռասուն և վեց ամաց ծնաւ դլահազար: — Ամանկը լո-
փորհանքն Յորդյ աստ ասեն: — Աահար վաթսուն
ամաց ծնաւ զլմասմ, Շմբամ եօթանասուն ամաց
ծնաւ զՄովսէս, Յակոբէփ հարիւր տան ամաց վճա-
րեցաւ ³ 'ի վեց ամին Եմկասմայ: Եւ յաւետեացն Եմ-
տուծոյ եղիւր հարիւր վաթսուն և վեց: յօրում ա-

¹ Մեր օր. Յուրէ հորիւր ժուռ աֆն: — ² Մեր օր. Յուրէ հորիւր
ժուռ լիորիւր:

մ թագաւորեաց յՆդիպտոս Վեբրոն ամն երկրտա-
սան. և յետ նորա Մենափիթիս ամն քառասուն և
երեք. — սա առներ գետասոյզ զտղայսն Խարայելի,
յորմէ ապրեցաւ Մովսէս՝ բարձեալ զնա Իմերմոթեայ
դստեր նորին թագաւորին, որ եղեւ կի՞ Վանիթարայ
թագաւորին Մեմփիս քաղաքի: Եւ երեք հարիւր
յիտուն ամ էր յաւետեացն Եստուծոյ և տասնամեայ
լիալ Մովսէս՝ տուաւ յուտումն յանէսն և յամրէսն:
՚Ի քսաններորդ երկրորդ ամին Մովսիսի սկսան զկա-
տկոխութիւն որդիքին Խարայելի: ՚Ի քսան և ութ-
ամին Մովսէս իշխան եղեւ և շինեաց զքաղաքն Իմեր-
մուալօլիս¹ անուամբ Իմերմութեայ, զոր և Մառիս
կոչէին: Իսկ յՆդովլպացւոցն, որ էի՞ հարկատուք յՆ-
դիպտացւոց՝ ապստամբեալ ասպատակեցին և գերե-
ցին զլրդիպտոս և զմայրգիրն Մովսիսի: Եւ գնա-
ցեալ Մովսէս պատերազմեցաւ տասն ամ, և առ ըզ-
թագուշի նոցա զգիներաս և զմայրն իւր և դարձաւ
յՆդիպտոս: Եւ նախանձեցաւ ընդ նմա այրն Մա-
ռեայ, որ է Իմերմոթիս, և ՚ի մեռանելն Մառեայ
թաղեաց զնա Մովսէս: Եւ առաքեաց այրն նորա
ջրասանթիս՝ չարչարիչն Խարայելի, սպանանել ըզ-
Մովսէս. և սպան զնա Մովսէս և փախեաւ ՚ի Մա-
դիամ: Եւ յանէսն և յամրէսն առին զորդիան Խա-
րայելի և տարան զնոսա Հնգետասան աւուր Շանա-
պարհ ընդ անապատն, և շինեցին զդրախտն իւրեանց
զշնգիտասան տարի: Եւ ՚ի կատարման շինուածին
յորդւոցն Խարայելի առին աղայս ինն հարիւր ութ-

¹ Մեր օր. Բերուպտէս:

սուն և զոհեցին դիւաց։ Եւ հաւաքեցան առ նոսկա
և եղին պահապանս զբախտին և յայնմշետէ առաւ-
ւել հնազանդեցան դեք կախարդաց։ Եւ չոլք հա-
րիւր դեք՝ ասեն, ոչ հնազանդեցան, մինչեւ կրկին
զոհեցին յանուն նոցա և ապա եկեալ առին՝ի հա-
ւանութիւն։ բայց զըուատ ամիսն անհնազանդեալ՝
գործեն զկամն իւրեանց՝ տանելով զոմանս ՚ի մարդ-
կանէ։ Իսկ Առովակս առ ՚ի կնութիւն զլիեպփովը՝
դուստր Ուաքուէկի որդւոյ Գաաթանայ, որդւոյ Յեկ-
տանայ՝ որդւոյ անսի Գետտուրայ, և ծնաւ ՚ի նմանէ,
երկու որդիս։ Եւ աստ՝ ասեն, առ Գեւկալիոնիւ
Զըհեղեղ ՚ի ինետալիա, և առ Փայեթանիւ յԱթով-
պիա հրայրեացք և այլ բազում ապականութիւնք ՚ի
տեղիս տեղիս՝ որպէս Պղատոն պատմէ։ Իսկ Գեւկա-
լիօն Պառնասացւոց կովմանցն թագաւորէր։ Առովակս
լիալ եօթանասուն ամաց՝ արժանի եղեւ երևմանն Ես-
տուծոյ։ Եւ հրամայէր գնալ յԱգիպտոս և հանել
զլարայէլ, և նա յապաղէր զտասն ամ։ Եւ եղեալ
ութսուն ամաց՝ գնաց յԱգիպտոս ՚ի չորկք հարիւր
երեսուն ամի աւետեացն Եստուծոյ յեօթանասուն ա-
մէն Եքրահամու։ երկու հարիւր քառասուն և հինգ
ամ կացին յԱգիպտոս ¹ և տասն հարուածովք հա-
րեալ զլագիպտացիքն՝ ստիպով հանին զորդիմն Խպա-
յելի՝ յերկք հազար ութհարիւր քառասուն և երկու
ամի ելիցն ՚ի դրախտէն։ Եւ ելին ՚ի հինգ շաբաթոջ՝
և ՚ի կիւրակէի անցին ընդ ծովն Կարմիր։ Եւ ասաի

¹ Մեր օր. Երիւս հարիւր հինգ ամ գնալն ՚ի հունելը Յաւաբոյ յեֆիորոն
և Երիւս հարիւր ժարուածուն և հինգ ամ յացն յեֆիորոն։

կոչեցան Երբայեցիք, Երբայն ։ անցէ թարգմանի. և առին նոր լեզու պարզեց և այնու երգէին գորհնեսցուքն և էր նման հայրենի լեզուին։ Դւ եօթն ամիս շարժեցաւ Եղիպտոս և տապալեցան յալով շենուածք. և ելն արտաքս 'ի շինուածոցն բնակիչքն։ 'Դ նմին ամի պարտեցաւ Ամաղէկ 'ի Յեսուայ։ — Եւ 'ի նոյն ամի յամսեանն երրորդի ել 'ի լեառն Ամա Առովսէս։ — Ապոլիմոս՝ իմաստասէրն երբայեցի, ասէ, թէ նախ Առովսէս յԱստուծոյ իմաստնացեալ՝ արար գիր քսան և երկու, և այնու գրեաց Աստուծ զոտան պատգամն և ետ ցԱռովսէս. և նովիմք գրեաց Առովսէս նախ զլրէց գիրմն և ապա զքսան երկու արարածան 'ի Ծաննդոց գիրմն և զայլ երիս զիրմն։ Եւ զօրինակ արարածոց զգալի խորանաւն եցոյց², որ գործեցաւ եօթն ամիս ընդ եօթնօրեայ արարածոց։ Եւ ունին հինգ գիրլքն Առովսիսի զըոյցս երից հազարաց և եօթն հարիւր երեսուն ամաց ըստ Եւաերեայ։

Կստուծածանօթն Առովսէս կատարեցաւ հարիւր քսան ամաց, և առ զգաւազան նորա Յեսու ։ Եւաեայ ամս քսան և եօթն։ 'Ի վեցերորդ ամին Յեսուայ Պանաւու եղբայր Եղիպտոսի՝ թագաւորի Եղիպտացւոց, յիսուն դստերօք զյիսուն որդիս եղբօր իւրոյ կոտորեաց, և Եիմրու՝ զերծեալ թագաւորեաց, զոր ասեն⁴ ամենայն ուստիք քաջացեալ, զի իմաստուն էր։ Յութ և տասներորդ ամին Յեսուայ Փիւնիկ և Կտորմոս 'ի թակրացւոց յԱսորիս եկեալ՝ թագաւորե-

¹ Մեր օր. զէ եբերայն անցէ նորդանէ։ — ² Մեր օր. զուէ իորանան իմայուացայ։ — ³ Ու. օր. 'ի վեց ամին Յեսուայ Դուռանո։ — ⁴ Մեր օր. զոր ամենայն ստորին։

ցին, և աշխարհն կոչեցաւ Փիւնիկէ և տուն կադմեայ: Եշւ սոքա բերին անդ զիմաստութիւն՝ որպէս Ավելուպս էած՝ ի Մ'եմփիս քաղաքէ բնակիչս յԱթենս, և եղեւ տուն իմաստից: Եշւ Ավելուպս, արար գիր Յունաց, զոր այլք զԼադմոս ասեն:

Կատարեցաւ Յեսու հարիւր եօթն ամաց և դատաւոր եղեւ Գողոնիկէլ ամս քառասում: Եփրիկանոս ամս երեսուն դնէ՝ ի մէջ Յեսուայ և Գողոնիկէլի, և Յոյնք յիսուն ամ ասեն Գողոնիկէլի, զի ութ ամ ծառայեցին Քրուսայ, զոր սմա հաշուեն: Եստթագաւորեաց Երգիացւոցն Պելապոս, ուստի Փիշադոս էր բարուսախօսն ամենայն կենդանեաց: Օկնի Գողոնիկէլի ծառայեցին Խսրայէլացիկն Նքրումայ՝ արքային Մ'ովլաբու, ամս եօթն և տասն, զոր կցին յամսըն Եւովդեայ², որ դատեաց զԼարայէլ ամս ութսուն: Եստթաւ չորս հազար տարին յԵղամայ: Յետ Եւովդեայ ծառայեցին այլազգեացն ամս քսան: Եշւ զդրացաւ Ասմեղար և սպան՝ ի Փղշտացւոցն վեց հարիւր այր մածով արօրոյն³: Եշւ դատեաց զԼարայէլ Բարակ Դ'երովլայիւ ամս քառասուն՝ յարելով զծառայութիւն այլազգեաց: — յաւուրս սորա Յովն կացեալ սպարապետ Աթենսացւոց՝ Յոյնք անուանեցան և նորա: Յաւուրս սորա հարիւր իմաստասէլք տեսին զմի տեսիլ՝ ի միում գիշերի եօթն արեգակն, զոր Ասրիկ կինն մեկնեաց՝ ի վերայ եօթն դարուց⁴ և ըզվեցերորդն՝ ի Կիրիստոս մեկնեաց, որոյ ճառագայթն

¹ Մեր օր. և Եղին գուն իմաստից: — ² Մեր օր. ուր Լուգին յամս նուովդեայ: — ³ Մեր օր. մածով արօրոյն: — ⁴ Իր. օր. մինեաց՝ ի Երան եօթն դար թնդացաւ:

թագուցաներ զայլն։ Օկնի Ռարակայ իշխացին Մա-
կեդոնացիք ամս եօթն։ Եւ դատեաց զլարայէլ Գէ-
գեռն ամս քառասուն՝ յարելով զայլազգեացն։ —
Դեղազ¹ Հիւսն և նկարիչ աստ երևեցաւ, որ ասեն՝
թէ շարժէր պատկերն զոր գործէր թուեցեալ։ Ըզ-
գէդէսնի եօթանասուն որդիքն կոտորեաց Եքիմելէր
և դատեաց զլարայէլ ամս երիս. և զինի նորա իձավ-
ղայ ամս քսան և երկու։ — Եւ Ներակլէս՝ ասեն
զիլիոն աւար հարկանէր² սպանանելով զլնտէս³,
զոր երկրածին համարէին։ — Յայիր Գաղագացի ամս
քսան երկու։ յետ սորա ծառայեցին այլազգեացն ամս
ութ, ոմանք ութ և տասն ասեն և յայլն յարեն
Յեփթայի ամս վեց։ — Եզկրանդրոս զլինէ և առ և
տնկեաց, և տասն ամ պատերազմ եղեւ վասն այնու. և
յառնուցն զիլիոն և Ներակլէս խոցեալ ընկէց զինքն
՚ի հռւըն։ — Եսերոն ամս եօթն։ և յետ նորա Եւ-
լոն տասն ամ, որ չկայ եօթանամնիցն, այլ Երրա-
յեցոցն։ Եքդոն ամս ութ։ — Եւ թագաւորեցին
Նոոմայեցիք, — առաջին թագաւորն Անիաս անուն։
Օկնի Եքդոնի⁵ ծառայեցին Փղշտացւոցն ամս քա-
ռասուն, և ապա յարեաւ Ամամոն փրկել զնոսա ամս
քսան։

Դ քսաներորդ Հինգերորդ ամին սորա եղեն իրքն
Նոութայն։ — յաւուրս սորա⁶ մեռաւ Օկս և

¹ Երկուին օր. Գեղազ հուն։ — ² Մեր օր. և գելուին չի Այսու ո-
սոր հարիանէր։ — ³ Բ. օր. ոպանանելով զանդեաց։ — ⁴ Երկուին օր.
Եղեալ տեսանի Այլուտնդրոս զիլինէ որ և գնիւց, զոր քստ մեզ՝ այս-
պէս ընթեռնուլ պարտէ։ — Այլուտնդրոս զիլին իտու և տնդեաց։ —

⁵ Մեր օր. վիէ Լաբբոնէ։ — ⁶ Բ. օր. յամարս յայր մեռաւ։

թաղեցաւ 'ի Արխտէ, — զոր ասեն կեցեալ ամս ութ՝
հարիւր յիսուն, զի յաղագս բազմակեցութեան Օկա
կոչեցաւ, որ 'ի ծննդենէ Դիմա ասիւր: — Եւ Եր-
բայեցիքն քառասուն ամ ասեն ¹ զլյամնոնի դատա-
տրութիւն: Յոհաննէս յետ Աամոնի կարգէ զոմն
դատաւոր Խմագոր ² անուն քառասուն ամսւ: բայց
Եփրիկանոս ասէ, թէ զքառասուն ամ ոչ գոյր դա-
տաւոր և էր խաղաղութիւն: Ճեղի ամս քռան ըստ
եօթանասնիցն և ըստ Եսորւոց՝ քառասուն: բայց
գտցես ³, զի սուրբ առաքեակքն չորք հարիւր միսուն
ամ կարգեն մինչ 'ի Աամուել. և այն լինի՝ յորժամ
զլյաւուղայ ամքն և զլյամուելին ոչ առնուս 'ի հա-
մար: քանզի դատեաց զլյարայէլ Աամուել ամս քա-
ռասուն ըստ Երբայեցւոց և ըստ եօթանասնիցն քսան,
վի 'ի քսան ամի՞նովա խնդրեցին թագաւոր: Իայց Աա-
ւուղայն՝ որչափ կմնդանի էր Աամուելնմա էր համա-
րեալ 'ի կեանցն Աաւուղայ, որ չէր հաճոյ Եստու-
ծոյ՝ բաց երկու ամացն: Աաւուղ թագաւորեաց ամս
քառասուն:

'Ի տասն ամի թագաւորութեան Աաւուղի ծնաւ
Դաւիթ, և 'ի քսան երեքն՝ օծաւ. և քսան և ութ
ամաց էր 'ի տպանանելն զլյողիաթ: Յերեսուն ամի
ծննդեանն Դաւիթի մեռաւ Աամուել, և զինի հինգ
ամի մահուանն Աամուելի սպանաւ Աաւուղ և Յոհ
նաթան: Եւ թագաւորեաց Դաւիթ ամս քառա-

¹ Մեր օր. Եբայեցիւ ժամանակ ամին: — ² Մեր օր. Եմակուն ա-
նան: — ³ Մեր օր. Բայց կիրացիւն:

սուն։ 'Դ տասն ամի թագաւորութեան իւրոյ եհան զտապանակն՝ի տանէն Նքիաթարայ. և էր քահանա յափետ Նքիաթար և մարգարէք՝ Դադ և Ասափ և Նաթան և խնամեր զՂաւիթ. յերիսուն և ութ ամի թագաւորութեան իւրոյ ընտրեաց Դաւիթ երկու հարիւր ութսուն և ութ անձինս 'ի Դ և տացւոց անտի և արար քսան և չորս գասս՝ երկոտասան այր 'ի գաս մի՝ սաղմոսասացս և սպասաւորս տապանակի Տեառն։ Եւ կեցեալ ամս եօթանասուն՝ վախճանի, տուեալ զթագն Աղողոմնի ամս քառասուն, և էր երկոտասան ամաց։ Եւ յառաջին ամին եղեւնման Որբովամ 'ի Նամայէ կնոշէ Ամոնացւոյն։

'Դ չորրորդ ամի թագաւորութեան իւրոյ սկսաւ շինել զտաճարն։ 'Դ չորկը հարիւր ութսուն ամի ելանելց նոցա յերկրէն Եղիպտացւոց ըստ Թագաւորութեան զրոց եօթանասնիցն ասացեալ, զոր Երրայեցիքն՝ չորկը հարիւր քառասուն ասեն, բայց անսղալ այսպէս է՝ քառասուն ամ Մովսիսին, քսան և եօթն ամ Յիսուայն, որ է վաթսուն եօթն ամ. և չորկը հարիւր յիսուն ամ Դատաւորացն ընդ ծառայութեամբ այլազգեացն, որ է Հինգ հարիւր հրնգետասան։ Յետ որոց Ամոնէլ և Աւառող քառասուն ամ, և քառասուն ամ Դաւիթին լինի Հինգ հարիւր բննատուն և եօթն, և չորք ամ Աղողոմնին.— և լինի միանգամայն ամք վեց հարիւր և մի։

Եւ չափ տաճարին վաթսուն կանգուն, և քսան լայն, և հարիւր քսան բարձր։ Եւ շինեաց քաղաք

¹ Մեր օր. և որ Եբայեցն։

եօթն։ Եւ առ սա եկն դշխոյն հարաւոյ և գովեաց ըզ-
պաշտօնեայս տաճարին։ Օքասն և չորս դասն Դաւ-
թի կարգեալն, զոր Առղոմնն երկուսասն դաս յօրի-
գեն։ Եւ դարձան եկին առ սուրբն Ամհակ և կատարեն գհրամանն։ Յետ այսորիկ առաքէ զվարդան առ Առաջ գհաշտութիւն խնդրել և թագաւորեցացանել Շարտաշեր՝ որդի Առաջապհոյ, զօր և արարն իսկ Խակ Մալիս ասէ, թէ զինի խռարով թագաւորեցաց Յաղկերտ զորդի իւր զշապուհ ամս երիս, որ և 'ի համբաւ մահու հօրն գնացեալ' մեռանի ՚ի զօրացն, և ասեն՝ մնաց երկիրս անիշխան և շփոթ ամս մեռապան։ Եւ ապա թագաւորեց Շատաշեր, որ և ատեցեալ եղել 'ի նախարարացն¹ վասն գաղկը գործոյ իգամալութեան։ վասն որոց աղաճն զմեծն Ամհակ բնկենուզ զնաւ։ Եւ 'ի չհաւաքնեն նոռ րա՝ ինքեանք երթան 'ի դրւուն Առամայ, կոչել ապան Շարտաշեր և յղել 'ի խուժաստան²։ Եւ ընկեցեալ զաւրբն Ամհակ՝ կարգեն 'ի աեղենորա զԱռւրմեսկ³ չարախօսակից իւրեանց, որ ոչ յամեալ տպրի մի՛ հաղածի։ Եւ զնեն զԱրգիշոյ ասօրի ամմի։ Եւ ապա զշամուել 'ի նոյն ցեղէ աղքիսինզը⁴ և վատավաքը, յորոց տաղտկացեալ⁵ նախարարացն Հայոց՝ հայ լածեն և աղաչեն զաւրբն Ամհակ առնուզ զաթուն, որոց ոչ հաւանէր։ բայց 'ի վարդապետութենէն բընաւ ոչ դադարեր⁶, այլ գիեցուցանել հոգեւոր գառանցն զերկնաւոր ազգիւրն 'ի տուէ և 'ի գիշերի։ Ամանք զինի Իշքիշոյի և մուելի ապեն առեալ Ուրբ մակայ զաթուն ամս եօմն⁷։ Էմիլ սրբոյն Ամհակայ

¹ Մեր օր. որ և առեցեւ եղել նախարարացն։ — ² Որ. յղեւլ 'ի խուժաստան։ — ³ Որ. օր. և ընթցեւ զաւրմեն Սոհով խրին զԱռարշան։ —

⁴ Մեր օր. այցելելոյն և վարութար։ — ⁵ Որ. օր. որոց դադուցեւուլ։ —

⁶ Մեր օր. ու դարեր։ — ⁷ Մեր օր. ու ազգ։

արտրեալ դպյան ժամանակս 'ի գաւառին Բազրե-
ւանդայ 'ի գեօպն Շալուք 'կատարի 'ի Վրիստոս և ամ-
փոփի յԵշտիշատ : Օ ինի ստուկման Ա ռամայ և
ախրելոյն Յազկերտի ' որդւոյ նորա, զինի ապա վե-
ցից ամնոց կատարի սուրբն Ա ներով 'ի Ա աղարշա-
պատ և զնի յ(Օ)շական զիւղ, խաչանման լոյս երկնո-
ւոր կալով 'ի վերայ դագաղացն՝ մինչեւ եղաւ 'ի գե-
րեզմանի : Բայց զաթոռն տեղապահութեամբ ինա-
մէր Յովսէի ' աշակերտ Ա ներովքայ 'ի Ա սոց ձո-
րոյ 'ի գեղջէն Հողոցմանց : Եւ ասեն՝ Ա ուրմանի կա-
տարէր զձեռնադրութիւնն մինչ կենդանի էր՝ զան
եօթն : Իսկ նախարարացն 'ի մի վայր ժաղովնալ՝
կացուցանեն տեղապահ թագաւորութեան զուրբն
Ա արգան :

Օ այսու ժամանակաւք դարձան 'ի թարգմանո-
թենէ Ղ ևնդ, Խրիւն և Էքճան, որ զիսկեցան 'ի
ժողովն Երփեսոսի, զոր արար ' Խւէողոս 'ի մետասան
ամի թագաւորութեան իւրում վասն Ա եստորի չարի :
Եւ բերին անտի կանոնս ² վեց գլուխա : Բայց գունդն
Հ այսոց էր որ՝ Հ նազանդէին Պարսից, էր զի՝ ընդդիմա-
նային պատերազմաւ յորժամ վասն Հաւատոյ ոյժ ³
հաստնէր, քանզի Ը աւասապ Ա րծրունի և Ա նդոյ՝
աւագ նախարարքն, ուրացեալք զհաւառոս շինն 'ի
Դուին մեհեան Արմզդի և տուն կրտի և քրմապետ
գնեն զԸ երոյ ⁴ զորդի Ա նդոյի . զոր լուեալ Ա ար-
գան գայր իւրով գնդաւն և սատակէր զԸ աւասապ և

¹ Ուում. օր. արտրեալ թեուրոսի : — ² Ա. օր. և բերին անդ խնան
նց : — ³ Ա էր օր. Հան հուսուրոյ նոյն հոսունիր : — ⁴ Ա էր օր. դնէն
զԸ երոյ :

զմարզպանն Աշխան վախտական առներ և զպիրծն
Անդոյ յատրուշանն հրոյ արկեալ՝ այրէր, և զ՛ երց
՚ի վիրայ բագնին կախէր զփայտէ, և զտեղին շննէր ե-
կեղեցի անուամբ սրբոյն Գրիգորի: Եւ զուրբն Յով-
աչի ձեռնադրեն կաթողիկոս, որ արար զժողովն ՚ի
Ը ապահի վանս¹, ուր զոււգանոց կանոնն կարգե-
ցին: Օ հնի երկուց ամաց եկեալ գունդ ՚ի Պարսից և
ըմբռնեալ զնա և զլահակ և զ՛ եւնդ և զայլս՝ եղին
՚ի բանգի որպէս զիւրատատուս Ա արդանայ հեռա-
գոյն որսացեալ ՚ի յըմբռնելն զուրբն. զոր և խմբու-
թեամբ ընկալան զկապանս վասն Վրիստոսի և ոչ յօ-
ժարեցան հանել² զնոստ մինչեւ ցժամանակն: Ա ամն
որց ՚ի մի վոյր եկեալ իշխանքն Հայոց՝ զննն զՎիտ
պատրիարք, և ՚ի Կուին փոխին զաթոռն հրամանաւ-
նորին Յովսեփայ, յորմէ մանաւանդ հնազանդեցան
սրբոյն Ա արդանայ նախարարքն Հայոց ամեններեան,
որովք տայր պատերազմ ընդ Պարսս զամն ինն և տա-
պին՝ յալթեալ քառասուն երկու պատերազմաց մին-
չեւ ցկատարումն իւր մարտիրոսութեամբ աւրհնու-
թեամբ պրեյն Ասհմակայ, որ ՚ի ժամ վախճանի իւ-
րոյ յամենեանն նաւասարդի յերեսուն՝ յաւուր ծնրե-
գեան իւրոյ աւրհնուեաց զնա և զեղբարս իւր՝ զՀմա-
յեակ և զՀամազասպեանն³, նոյնպէս և սուրբն Ա ես-
րովք յիւրում կատարմանն՝ յերկըտատան մեհեկի ամ-
սոյ, որոց աղօթիւք և աւրհնութեամբ պարտպեցան
և պատկեցան: Վահնդի ընդ այն ժամանակս եկաց ՚ի

¹ Մեր օր. ՚ի Շառք Լոն: — ² Մեր օր. և ուշեւրեցն հանել ըն-

ու: — ³ Բ. օր. զՀամազասպեան:

գերեւ՝ Հազմբապեառթեան Յազիքրտի չարտամիան
Արեսէն, և չօգաւ, առ նա մեպուհն Դարաց վաւ
ղեան, որ էր վիճայ Ա ասակայ՝ Ավանեաց իշխանին
՚ի նոյն ազգէ՝ պտիցեալ և հայածեալ աներոյն իւշ
ըսյ; որ և ուղացեալ զԱրփատոս զբուեաց վնա ՚ի
յանցն զօր անցցց ընդ ձայս, որ և ՚ի նոյն խորխո-
րառն սպառանայի անկանէր աներ նորին Ա ասակ², —
և եղեն պատմառք պնդրան ազետից, որ էանց բնաց
ձայս, զօր յընգարձակ պատմառթիւնան է առանանից
Եւ վկայեցին Ա արդանեանքն հազար երկու հարիւր
երեսունքն ՚ի հրոտից երեսուն ՚ի մեշասառն Հազա-
կերտի. և զինի երկուց առնաց սուրբ երեցն Ապանէղ
և տարբ տարկաւագն Եղբահամ ՚ի հրոտից եմթն և
սուրբ եպիսկոպոնն Բասենոյ Քամթիկ³, որ յառաջա-
գոյն տարեալ ՚ի Խուժաստուն դառն տանջանկառք ՚ի
տասն հրոտից: Եւ սուրբ Կաթողիկոսն Յավակի. և
սուրբն Ասհակ և Պ և նոնդ և երեցն Մուշէ. և սուրբ
երեցն Եղաէն և սուրբ տարկաւագն Վայքաջ — մե-
ցեքեանն սոքա կառարեցան ՚ի քսան և հինդ՝ Հրո-
տից յԵպաք աշխարհի ՚ի փառա Սաղուծոյ, և երժա-
նելք մոգպետն՝ մարգաց ՚ի տասն: Սողնիկն ասէ, թէ
ստանդեցաք զվեշտասան Յազիկրտի երկը ամ Մար-
կիանոսի: Յորում աւուր սուրբն Մովսէս⁴ և Մամբ-
րէ և Պատիմ եկեալ յոււսմանէ՝ հոգացին զառն կա-
թողիկոսարանին: Եւ թուի, թէ ՚ի լինել ժողովոյն
Վաղեղոմի վախճանեալ էր Պիւս և չէր նստեալ

¹ Մեր օր. +անդէ ընդ այն բանական ՚ի էսէն հաղորդակիրակիւն:

² Ո. օր. անկանէր անէր Ա-առաք: — ³ Մեր օր. Թամի: — ⁴ Մեր օր.
՚ի տառն և էօնն հրոտից: — ⁵ Մեր օր. յորում Պուշտ և Մութրէ:

Յահան Ամանդակունիք: Եւ բերեալ առ սոսա թուզթ
դաւանութեան՝ ոչ ընկալան, զի արտապօյ էք ամե-
նայն սրբոց հայրցն աւանդից։ այլ չոգան Առովսէս և
Դաւիթ, թէ հնար իցէ՝ օգնել ու զղափառութեան։
Վասն զի գտանին այսափիսի բանք առ մեզ, թէ Դա-
վիթ խօսեցաւ յերկար ընդ Յորմաղայ և ընդ գրան
երեցն Պողքիրայ և ընդ Ամամբուկի արթեափիսիապասին
Արքնթացւոց¹ և կարիկացն և յամօթե եղեն։ Եւ ա-
պա յոտն եկաց Անկիտոս մետրապոլիտն Ամակեգու-
նացւոց և ասէ յԱռովսէս։ «Գիտեմ զքեզ և զա-
շակիրտքգ² քո՝ — ի մանկութենէ կրթեալ էք և թե-
քեալ՝ ի ճոռում բանս կոկոզարանից և կրկզոյնիցն։³
Վիլսոնիսայից և ոչ զի կարէ յաղթել ձեզ՝ այլ նա-
խանձու վառեալ էք, զի ոչ կոչեցաք զձեզ, զի չէրկեն-
դանի պատարիքարցն ձեր»։ — Եւ ասէ Առովսէս։ «ա-
պաքէն ճանաչես զմեզ, զի անդրանիկ իսկ էաք եկե-
ղեցւոյ և դատաւողք հայրապետանոցին՝ և ընդէ՞ո ոչ
կոչեցէք⁴ զմեզ և զբազմահմատութիւնս մեր նախատինս
ասես։ Ի՞այց պատճառ ժողովյն ձեր չէ ծածկեալ
յումեքէ, այլ մեք զծշմարառութիւն ոչ թողումք։ — մի
բնութիւն ասել մարմնացելցն։ «Էսէ Անկիտոս։ «որ-
պէս ասես զմինն յատկացեալ՝ ասես զրոյի ի հօրէ և
միացեալ՝ ի մարմնի»։ Առովսէս ասէ։ «Ոչ բաժանեալ
ի հօրէ և միացեալ՝ ի մարմնի»։ և այլ այսափիսի բանք
բարումք։ Առաջի կարծեցաք այսափիսի գմել զժամա-
նակն — զվեց ամ⁵ կապեալ Գրիգորայ զաթեռն՝ կա-

¹ Անք օր. Դասէն իսեւցու յերտը ընդ Յոհանալու և Խորիսուն և յո-

մբ եղեն։ — ² Անք օր. և ըստմբրու ժո։ — ³ Անք օր. Խորիսուն և

⁴ Անք օր. և ընդէ՞ո աւ իսէցէ զեզ։ — ⁵ Անք օր. զի ամենամի և զի զուա-

մը իսլեւ զանուն գիտուայ։

տարի։ Եւ յաջորդէ զաթուան նորա՝ Յոհան Ման-
գակունի իմաստատէր և լի հոգւածին Եռառեց, որ
բարիոք² յօրինեաց զիարդ ձեռնազբութեան և զժա-
մակարդութեան և զճառս խրառաց։ Եւ սա թարդ-
մանեաց զերկորդ Կորնթացի թղթոյն և զըսոհան և
ոյլ բազում օգտակար գործոց ՚ի կեանս իւր։ Կեաք
՚ի կողմն Յունաց սան զԳյուտ կամոզիկաս և զըս-
հան ՚ի Պարսից ՚ի միում ժամանակի։ Եւ տքաք եք
ճգնաւորն Անտոն, որ և Խամթուշ, Թողեալ զամե-
նայն ինչ վասն Քրիստոսի Ա արոսիւ հարազոտին
երթեալ կրօնաւորէր ՚ի տեղութն³, որ այժմ ասի
սուրբ Խամթուշ։ Խակ զինի վճարման սուրբ նահա-
տակացն մերոց չարն Ա ասակ զինն և զորդիսն երեք
Հայեկի ՚ի գուռն տանէր՝ որպէս զորդիս մահապար-
աց, զոր իննզրեալ⁴ Եշուշացի Ա բաց բդեշխնին ՚ի
Յազկերտէ՝ տայ նմա զանակնունելիս պարզեն. որ և
աւագն՝ ՚ի նոցանէ՝ Ա ահան, սպարապետ եղեւ Հա-
յոց։ Վանկի սատակեալ Յազկերտի՝ Պերող որդի
նորա, սպանեալ զեղբայրն իւր, թագաւորէ և հաշ-
տութիւն առնէ աշխարհիս, և զԱ ահան կացուցանէ
հարկահան արքունի⁵։ Եւ ՚ի քսու արանց նեղեալ՝
տկարանայ ՚ի հաւատոցն. և զինի հարեալ զնս ՚ի
սիրտն՝ զղանայ, և աւաստամբեալ յարբայէ հարկանէ
զգորմն Պարսից յորվ անզամ։ Եւ Ա արազմազեան
աիրեալ Ահմեաց՝ վասն ուրացութեան ՚ի բազում
աւուրս նեղեալ ՚ի գիւաց, խեղդի անվեղք. յորում ա-

¹ Մեր օր. և յուղորդե վաս Յահան։ — ² Մեր օր. Ա բարիոք յօրինոց։

³ Ո. օր. Երմեւլ կը նուսուցէր ո՞ւ ե՞ւ ՚ու լուս։ — ⁴ Ո. օր. Ա ինդըւնց
Աշուլոց։ — ⁵ Ո. օր. Խոցոցանէ հարիսան որդոց։

ուր սպանաւ ուրացողն Վ ազգէն և այլ բազում ու-
րացողք ընկալան աստէն զառհաւատչեայ գեհնոյն:

(Յետ այսորիկ զօրավարն¹ Պարսից ԱՇՀրան գայ
բազում զօրօք 'ի վերայ Վ ախտանգայ Վ բաց ար-
քայի և յոէ աղաւանս առ Վ ահան օգնել նմա, և
գնաց յօժարութեամբ. և 'ի խմբել պատերազմին վատ
զօրդն² Վ բաց փախեան թագաւարաւն հանդերձ, այլ
և վատօք 'ի Հայոց: Եւ նահատակեցաւ սուրբն Վ ա-
սակ՝ եղբայրն Վ ահանայ, որոյ երեւքն փառաւորեալ
փայլէն որպէս ԱՌովսիսն 'ի ժամ կազմելցյն, յորս
ոչ կարէին հայել տեսողքն³. և իմացան, թէ մեռա-
նելոց է յայնմ աւուր: Պսակեցաւ⁴ և սուրբ սեպու-
հքն Ախնեաց Հայոց յամնեանն հոռի 'ի վեշտասան
'ի Իագուան, զոր ըմբռնեալ ԱՇՀրան հարկանէր և
հարիւր ուրանալ զհաւատոն և կեալ մեծութեամբ. և
լուեալ ընդդէմ պատասխանի՝ մեռանի վասն Վրիս-
տոսի և պսակի. նոյնպէս և քաջ սպարապետն Աա-
հակ կատարի 'ի ժամ պատերազմին 'ի վերայ սուրբ
ուխտին օրինացն:

Օ կնի պյուրիկ սպանաւ Գերող 'ի Հեփթաղաց
եօթն որդւալք: Եւ թագաւարեցուցին զՎ աղարշ
եզրայր նորա. և կոչեաց զՎ ահան և ետ նմա զգօրա-
վարութիւն Հայոց. և յետ այնորիկ եթող⁵ 'ի նա
զմարզպանութիւն: Օ կնի Վ ազարշու նատի կա-
ւատ՝ որդի նորա. և յետ նորա Խոսրով՝ ամն քա-

¹ ԱՆ. օր. յեր այսորի զբանան զորից: — ² ԱՆ. օր. կուր զբան
զորից ժոխուն: — ³ ԱՆ. օր. ու ու ժոխուն ուսուցի: — ⁴ ԱՆ. օր.
զո-
խուցուն և ուսուցի սիստեմ: — ⁵ ԱՆ. օր. և յեր այսորի բողն ՚ի նո
վարդապետութիւն:

ռասուն և ութ։ Խակ Աշան շինեաց զեկեղեցին Երտաշատու՝ զաւերեալսն՝ ի Պարսից, յորում ժամանակի երանելին Տանթայ յԵրշաւունեաց պատկեցաւ՝ ի Օառնաւուխայ զօրագլխէն Պարսից և այլ և բազումք ընդ նմա։ Խակ տէր Յոհան կաղեալ զաթուն ամն վեց. և զինի նորա տէր Շաբդէն ամն եօթն, և զինի նորա տէր Մուշէ ամն ութ, Աահակ ամն եօթն. և յետ նորա տէր Վրիստափոր վիխսովայ ամն եօթն¹։ Խակ Ա ահանայ բարւոք կացեալ վախճանի, և փոխէ զեշխանութիւնն նորա եղայր իւր Ա արդ ամն չորս²։ Օվահան կէսք քանան ամ և կէսք երեսուն և մի ասեն կացեալ իշխան³։ Եյլ զտէր Վրիստափոր յաջորդէ տէր Ղ և ոնդ ամն երկու. և տէր Ներսէս ամն ինն։ Դ ժամանակս նորա առաքեաց Խոսրով թագաւորն Պարսից հրոսակս, զի կալցն զԱ արդ. և եղւ մեծ պատերազմ՝ ի դաշտին Խազամախայ⁴, և կոտորին զօրքն Պարսից աղօթիւք սուրբ Հայրապետին Ներսիսի։ Եւ յայն ժամանակս սուրբն Յիզարուզտ, որ է աստուածապրեցոյց⁵, կատարեցաւ՝ ի Դույն՝ ի մարդզանին Ա ահանայ, զի զինի Ա արդայ Պարսիկը իշխէին մարդպանէք. և զմարմին սրբոյ վկային ամփոփեալ սուրբ Հայրապետին Ներսիսի առընթեր կաթողիկոսարանին շինեալ վկայարան կոփածու՝ ի վերայ նորա։ Դ սոյն աւուրս Եղքաս Ենկեղաց զգասս ճալտասսաւ

¹ Մեր օր. իսէ տէր Յոհան Խալեալ պահուուն առն վեց, և զինի նորա Սահման առն եօթն, և յետ նորա տէր Քրիստոնէոր առն եօթն։ — ² Մեր օր. իսէ Ա ահանայ բարիւուն վայրէանէուն էունի զինեանունիւնն։ Որ. օր. իւր վարդու առն սրբ։ — ³ Որ. օր. և իսուն երեսունն ու իսունեւ էւնեան։ — ⁴ Մեր օր. ի դուռ դին խոսպանիոյ։ — ⁵ Մեր օր. և յայն ժամանակս սուրբն Յիզարուզտ, որ է սուրբ առաքուուրուր։

նաց բազմացոց։ Օ, կնի տէր՝ Եւերսիսի տէր Յովլ-
հաննէս ամն Հնգետասան։ և յետ նորա տէր Մ'ովլ-
սէս յԱղիվարդայ ամն երեսուն¹։ Այս 'ի տասն ամի
հայրապետութեան իւրոյ և յերեսուն և միամին խոս-
րավու՝ որդւոյ կաւատայ, և 'ի չըրկրտասան Յուս-
տիանոսի, որ զսուրբն Առփի շնիւաց, եղ թուական
ձայոց² և տումար, յորում ժամանակի լցեալ էր շըր-
ջանակն հինգ հարիւր երեսուն և երկու ամաց։ Եւ-
մարզպանն ձայոց Մ'էժէժ Գնումի³, որ կալաւ զիշ-
խանութիւն ամն երեսուն և մի։ Եւ 'ի զիր թուա-
կանին էին Պետրոս⁴ եպիսկոպոս՝ քերթողն Ախւնեաց,
և Եւերշապուհ⁵'ի Տարոնոյ և Երդիշց 'ի Սամնոյ, զոր
եպիսկոպոս ձեռնադրեաց Մ'ովլսէս, որ և զիւրին —
որ էր ազգաւ Վ լրացի⁶ 'ի գաւառէ Խջաւախսաց 'ի
զեղչէ Ակուտրի⁷, և զիտէր զդպրութիւն հայ և վը-
րացի՝ ձեանադրեաց Վ լրաց կաթողիկոս. և եղեւ յե-
տոյ քաղկեդոնիկ⁸, քանզի 'ի տղայութեանն զնա-
ցեալ էր 'ի Յոյնս 'ի Կողոնիա գաւառ և բնակեալ 'ի
զեօլն՝ Կիկապօլսի յեզր Գայլ գետոյ, ուր և վարժե-
ցաւ⁹ յոյն դպրութեամբ։ Եւ յետ Հնգետասան ա-
մին եկն Մ'ովլսէս 'ի Դուխն և կացոյց զնա վանաց ե-
րեց սրբոյ կաթուղիկէին, այլ և քորեպիսկոպոս Այ-
րարատեան գաւառին ամն եօթն։ Եւ յորժամ մե-
ռաւ կաթողիկոսն լրաց, առաքեցին իշխանք աշխար-
հին առ տէր Մ'ովլսէս ըստ առաջին կարգի, զի տացէ

¹ Ուսւմ. օր. և յիշ նորու ուն Մ'ովլսէս ամն երեսուն։ — ² Եւերիսմ օր.
Եղիւր Բառական Հայոց և բառամք։ — ³ Որ. օր. Մ'էժէժ Գնումի։ — ⁴ Մ'էր
օր. և 'ի բնէր Բառականին Պետրոս Խովիսոս։ — ⁵ Մ'էր օր. որ եր. աղբա-
կէ Արցոց։ — ⁶ Որ. օր. 'ի բնէր Խովիսոս։ — ⁷ Մ'էր օր. Քաջերանական։ —

նոցա առաջնորդ, և զնա կամեցաւ տալ որպէս՝ ի տա-
նէ իւրմէ¹: Եւ երթեալ նուածեաց զամենայն երկի-
րըն: Եւ ապա եկն առ նա Խուժիկ մի նեստորական,
որ Ավա կոչեւր, այսինքն՝ խատութիւն, որպէս և ե-
ղեն, որ էր 'ի Առղոնիսց 'ի գեղջէն Օռւտառիմսց մօտ
‘Եփոպօլսոյ², որ լեալ էին միմեանց ուսումնակիցք
և աղանդակիցք՝ զնա ձեռնազրէ եպիսկոպոս և կո-
րնչի նովաւ և ամենայն աշխարհաւն. զոր իմացեալ
Մովսիսի եպիսկոպոսի, որ 'ի Յուլտաւ, որ այժմ
ասի Գանձէնք՝ ծանուցանէ պատրիարքին Մովսի-
սի: Եւ նա զրէ առ նա թուղթ յանդիմանութեան
և սպառնալեաց. — և նա բնաւ ուրացաւ յերկիւղէ
սրբոյն զաղանդն: Եւ զինի ժամանակաց մեռաւ պատ-
րիարքն յերեսուն ամի հայրապետութեան իւրոյ, և
Կիւրիոն յանհոգս եղեալ՝ ընդունի զժողովն՝ Քաղիե-
գոնի: Խոկ Խոսրով թագաւոր Պարսից մօտ 'ի վախ-
ճանն հաւատաց³ 'ի Վրիստոս. և կոչեցեալ առ նիքն
զերանելի կաթողիկոսն, զոր տէր Գիւտ էր ձեռնա-
զրեալ հանդերձ այլովք եպիսկոպոսաք 'ի զնալն⁴ իւ-
րում առ Պերող արքայ, որ յանդիմանեաց զմոլորու-
թիւն Պարսից՝ ցանկալով մահում լլրտեցաւ յԵրանաց
և հաղորդեցաւ և զինի սակաւուց կատարեցաւ, և թա-
ղեցին զնա քրիստոնեայք յարքունական գերեզմա-
նըս: Եւ առ զժագնորա որդի նորա Որմիզդ⁵, որոյ
նենգ գործեալ՝ սպանին զնա յիւրում դահըճի: Եւ
առնու զժագն որդի նորա Խոսրով, յորոյ վերայ յառ-

¹ Մեր օր. և խամեցաւ դաւ 'ի դանէ իւրմէ: — ² Մեր օր. 'ի գեղջէն
Զաւուուքնոյ հօթ Նիկոյ ուօլուոյ: — ³ Մեր օր. հաւատաց: — ⁴ Բ. օր.
հանդերձ այլովք 'ի հնուն իւրասմ: — ⁵ Մեր օր. որդի նորա Որմիզդ:

նէ Ա ահրամ գլուխ գօրացն և առնէ զնա փախստական. և նա զնայ՝ ¹ առ Մօրիկ կայսր, և գտեալ 'ի նմանէ օգնութիւն՝ դառնայ և տիրէ հայրենեացն: Եւ լինի երախստահատոց՝ թողով 'ի Մօրիկ զՄիշագետս և 'ի Հայոց զաշխարհն՝, որ Տանուտերական գունդն կոչի՝ բաց յոտտանէն Դունայ և յերկուց գաւառացն, որ է Ոտն Աասեաց և կողմն Եղագածու՝ թողու 'ի Մօրիկ 'ի լեռնէն, որ կոչի Բնծակի սար՝ մինչև ցԱռէստ առ ան և ցՀացիւնս. որ յանդզնեալ՝ գեղեալ անուանն յարբայէ, փոխէ. — զՄըմնին՝ կոչեցեալ 'ի նմանէ, որ է Առաջին Հայք՝ ⁴ Երկրորդ Հայք զնա կոչէ, յորում մայրաքաղաքն Անեաստ. և զԱպաղովիիա, յորում մայրաքաղաքն Անեարիա՝ Երրորդ կոչէ Հայք և առնէ զնա եպարքի. և զՄելտենի, որ ունի զհոմաննուն իւր գաւառ՝ կոչէ զնա Առաջին Հայք. և զՊոնտոս, յորում մայրաքաղաքն Տրավիդոն՝ մեծ մասն կոչէ զնա Հայոց. և ըզ-Չորրորդ Հայք, յորում մայրաքաղաքն Մուփարդին՝ Յուստիանու նիստ զնա գրէ 'ի դիւանն ալլունի. և զաշխարհն Կարնոյ, յորում քաղաքն Բէհոդուպոլիս՝ մեծ մասն Հայոց կոչէ. և որ 'ի մեծ Հայոց մասրն կը առ նոսա 'ի կողմանց Բատսենոյ մինչև ցահամանս Ասորեստանի՝ Ահծ Հայք անուանէ. և զկողմանս Տայոց ստհմանաւաքն իւրովք Խորագոյն Հայք կոչէ ⁵. — զայսոսիկ անուանս գրէ 'ի դիւանի:

¹ Մեր օր. և նո երբայ առ Մօրիկ Խոյք: — ² Բ. օր. Բողովէ 'ի Մօրիկ ՎԱՀԱԳԻՆՈ և զՀայոց աշարհն 'ի Հայոց աշարհն, որ: — ³ Բ. օր. յանդինէ անուանս յարեց Քոին զարժին Խոյքեւ 'ի առնէ: — ⁴ Բ. օր. Քոին զարժին Խոյքեւ 'ի առնէ սոսովին Հայք՝ Երբորդ Հայք զնա Խոյք: — ⁵ Բ. օր. և զԱպաղով Դասեայ Կերտութիւն Հայք Խոյք:

Յաւուրս այսոսիկ Ամբատ Բագրատունի քաջա-
պէս խոնարհեցուցանէ ընդ ոտիւք Խոսրովու զամե-
նայն թշնամիս նորա . և նորա պատուասիրեալ՝ տայ
նմա զմարզպանութիւն Վ. րկան աշխարհի, ուր եր-
թեալ գոտանէ զազգս Հայոց գերեալ և բնակեալ՝ ի
Խուրբաստան յանապատին մեծի, որ Աագաստանն
կոչ՝ մոռացեալ զլեզու և զդպրութիւն . որք տեսեալ
զԱմբատ իրախ լինեին և նորոգէին զլեզու և զգիր:
Եւ զերէց մի՝ Հարել անուն, տայ ձեռնադրել նո-
ցա եպիսկոպոս մեծի հայրապետին Մովսիսի և հաս-
տատէ զնոսա վիճակ սրբոյն Գրիգորի: Եւ առեալ
հրաման յաղբայէ գայ տեսանել զերկիր իւր . և եկեալ
՚ի Դուին սկսաւ շինել զփայտաշէն Գրիգորն՝ ի Վ. ար-
դանայ սրբոյ: Եւ պահնակը բերդին բողոքէին՝ ի դու-
ռն, թէ մնասակար է բերդիս . և ելանէ հրաման քա-
կել զբերդն և հեռագոյն շինել: Եւ ինդացեալ Աըմ-
բատ՝ ի փառս Քրիստոսի շինէ զեկեղեցին կոփածու
վիճք և տայ ձեռնադրել պատրիարք զտէր Եպրա-
համ՝ զեպիսկոպոսն Ոշտունեաց, որ շատ ջանա-
ցեալ թղթով՝ ի ձեռն Պետրոսի ոչ կարաց դարձու-
ցանել զԱմբիրին յուղափառութիւն: Ա. ան որոյ
արարեալ ժողով՝ ի Դուին՝ անիծեցին՝ զԱմբիրին հե-
րեսիովտայ:

Եւ Մօրիկ կացոյց իւր կողմանն կաթողիկոս զՅո-
հան ոմն, որ նատէր՝ ի գեօղն Աւան՝ շինեալ անդեկեղեցի
— այր սուրբ որ բնաւ չէր խոտորեալ² յաղանդն Յու-
նաց: Յայնմ ժամանակին ախարարքն Յունաց սպանին

¹ Անը օք. արտել ժողով՝ ի Դուին ամբին զեկեղեցի Գրիգորոս:

² Բ. օք. և բնաւ չորդ լուսաւոր Յունաց:

զՄօրիկ¹ և եղին թագաւոր զՓովկաս, որ և եկեալ՝ի
Իամէն՝ ջանայր նուաձել զւայս : Եւ ընդ առաջ եր-
թեալ Աշոտ՝ հարկաներ անշափ կոտորմամբ հրամա-
նաւ խոսրովու, և առնու զլարնոյ քաղաք և փոխէ ըզ-
րնակիչն Ճ՛Հմատան՝ տարեալ զՅոհան կաթողիկոս
զկնի, որ կայր ՚ի գազտի անդ . որ անդէն վախճանեալ՝
բերեալ գնի ՚ի գեօլն Եւան², որ կալաւ զկաթողիկո-
սութիւնն ամս քան և վեց : Եւ սուրբ պատրիարքն
Եպրահամ փոխի զկնի երկք ամի յաթոռոյն և յա-
ջորդէ զնա տէր Կոմիտաս ՚ի գեղջէ Աղցից :

Իսկ յիշանաց կարգի զկնի Մէժէժայ Պարսիկը
կացին .— նախ Գենշապուհ, որ զշուն մոլութիւնն
շատացոյց . և յետ նորա³ Վարազդատ ոմն, և ա-
պա Առուրէն՝ ազգական խոսրովու, որ շնայր ընդ կա-
նայս իշխանացն . ընդ որ զայրացեալ Վարդանայ՝
որդւոյ Վասակայ Մամիկոնյ, սպան զնա և առեալ
զընտանիս իւր գնաց ՚ի Կոստանդնուպօլիս : Իայց
Ճերակ սպանեալ զՓովկաս թագաւորեցուցանէ զոր-
դի իւր և ինքն խաղայ յարեմելս : Եւ Կոռեմ աւերէ
զՅցնս հրամանաւ խոսրովու քինախնդիր մահուանն
Մօրկայ և գերէ զԼարուսաղէմ և զփայտն փրկական
և զօպքարիա պատրիարքն Երուսաղեմի :

Յայնմ ժամանակի պատրիարքն Կոմիտաս ըն-
դարձակէ զվկայարան սրբոց Ճռիկսիմեանց և պա-
տահէ սուրբ նշխարաց նոցա, և լինի ոչ սակաւ միսի-
թարութիւն քրիստոնէից . և էր կնքեալ մատանեաւ

¹ Մեր օր. յայն ժամանակ նախարարէն Մօրկայ ողումի զնա : — ² Մեր
օր. որ անդին Հայունեալ՝ բերաւ գնի ՚ի հիւն Առան : — ³ Որ. օր. և
յերաց նոր Վարազդատ ոմն :

սուրբ Գրիգորի և սրբոյն Այահակայ, զոր ոչ իշխեաց
բանալ, այլ զիւլն եղ ՚ի փերայ: Եւ չափ հասակին
Ճռիվսիմեայ տասն թիզ և չորս մատն: Եւ ասեն
զսուրբ Գրիգոր ինն թիզ և զջրդաս մետասան թիզ:

Ըստքեաց Ներակլ դեսպանս պատարագաւք առ
Խոսրով խնդրել զիւազաղութիւն, որում ոչ ետ պա-
տասխանի: Եւ բարկացեալ Ներակլի՝ առնու ընդ
իւր զեղբայր իւր զիւէոդոս, երկիցս հարկանէ զոգուն
Փարսից առ Անտիոքաւ և երթայ ընդ Նայ ՚ի վե-
րայ Խոսրովու, և զնա ոյժ առեալ Կառատայ որդ-
այ առաջնոյ Խոսրովու՝ սպանանէ¹ զԽոսրով. և
խնդրեալ սէր ՚ի Ներակլ՝ թողու ՚ի նա զԱՄԻՉագե-
տըս: Եւ դառնայ Ներակլ և գայ ՚ի Կարնոյ քաղաք:
Յորում առուր յաջորդեալ էր² զսուրբ աթոռն Կո-
միտասայ տէր Քրիստովիոր. և հանեալ զնա—զի առ-
նէր Խուովութիւն ՚ի մէջ խշտանացն, — դնեն զլրզը
Նգայի, զոր կոչեաց թագաւորն ՚ի Կարնոյ քաղաք. որ
վասն տգիտութեան իւրոյ քաղկեդոնիկ եղեւ՝ առեալ
զաղտը³ և զերրորդ մասն Կողըայ գին հաւատոյն: Եւ
՚ի դառնալն նորա կշտամբեաց զնա Յոհանն քարդա-
պես կաթոզիկոսարանին՝ ասելով. «Եիրաւի Եզր կո-
չեցար, զի յեզր ելեր յուղափառութենէ»: և ինքն
շոգաւ յԱղուանս ՚ի գյուկի Գարդման գաւառի և
ճանեցաւ խիստ վարուք: Այս գրեաց զերիս գիրս՝ զա-
նուն իւր ոչ դնելով ՚ի նոսա. զմինն կոչեաց Խուու
և զմինն ճառագոյ արձար և զմիւնն նոյեմու: Եւր սորա

¹ Մէր օր. և երեսյ ընդ Հայո ՚ի Քերայ Խոսրովը՝ սպանէ զխոսրով:

² Մէր օր. յորու յանուրդեալ էր զանուն ամսուն կոմիտասյ: — ³ Մէր օր.

առեւ զժողուց և զերրորդ ճան Կողմայ. Ու. օր. առեւ զժողուց:

աշակերտ մի՝ Ասրգիս անուն, որ զլարելին տիստանայր, զոր հալածեալ մերժեաց յինքենէ. զոր սմա համբաւեն տգէտք:

Յաւուրս յայսոսիկ մեռանի կաւատ արքայ և թագաւորէ տղայ որդի նորա Նքտաշիր: Եւ լուեալ ձերակլեայ՝ յորդորէ զխոռէմ¹ առնուլ զթագն՝ սպանանելով զազայն, զոր և արար իսկ. և ետ զիսաչն սուրբ՝ ի ձերակլ: Եւ սպանեալ զօրացն զխոռէմ՝ տան զթագն՝ ի Ռոր՝ դուստր Խոսրովու: Եւ զկնի նորա Օամբիկ քոյր նորա, և յետ նորա Որմիզդ թռոքն Խոտպովու, զոր խեղդամահ արարին և եղին ըզ Յագիկերտ թռոռն Խոսրովու²: — Եակ ձերակլ զիսաչն յերուսաղէմ տարեալ՝ կանգնէ՝ ի տեղուջ իւրում: Յորում ժամանակի կարգէ զօրավար ձայոց զՄհմէժէմ, զոր սպանեալ Գաւիթ Աահառունի՝ ինքն լինի իշխան հրամնաւ ձերակլի զամ երիս. որ շենեաց զեկեղեցին Մրենոյ և ասպա անարգեալ յիշխանացն հալածեցաւ. և անկաւ շիտթ մեծ՝ ի ձայս՝ ըզմիմամբք ելանելով: Յորում աւուրս ընդարձակեաց Եզր զվկայարան սրբոյն Գայիհանէ³: Եւ տէր Քրիստովոր շինեաց միայնարան՝ ի յիտն Աասեաց և առաքինանայր բազում ջանացող աղօթիւք: Յորում աւուրս ժողովեալ յերգեսիա երկոտասան հազար ձըրէայ՝ ասպատամբեցին՝ ի ձերակլեայ, որ և երթեալ պաշարեաց զՄուհայ, և առեալ զնա՝ արձակեաց կենդանի զՀրէայսն յո և կամիցեն⁴ ոչ լսելով թձէու:

¹ Մեր օր. և լսեաւ ձերակլոյ բորբոքէ զխոռէմ: — ² Որ. օր. և յենուան Որմիզդ թուն խոսրովու: Իս ձերակլ զխոռն: — ³ Որ. օր. ընդույժուց եղր զԴայունէ քիսյարուն: — ⁴ Որ. օր. յոր և յամցան:

դորոսի եղբօրն, որ կամեցաւ սատակել զնոսա: Եւ գնացեալ անտի ընդ անապատ՝ չոդան 'ի Տաճկաստան առ որդիսն Խորայելի՝ որպէս առ ազգայինն և կոչէին յօդնութիւն, և կէպ ախորժէին և ոմանք ոչ վասն այլ և այլ աղանդոյ նոցա՝ որպէս երթեմն Եղիպացւոցն ըստ զանազան պաշտամանց նոցա:

Յանժամամ ապա այր մի յորդւոցն Խորայելի, որում անուն էր Մահամատ Թանգար, որ էր ծնեալ¹ 'ի քաղաքին Մաղիսանայ մերձ 'ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ՝ յազգէն, որ կոչք Երիել՝ որդի Աքդրայ, որ մեռաւն՝ որք թողեալ զնա. որ և յարեցաւ² 'ի վաճառական մի և եղել 'ի տան նորա յառաջագէմ: ՄԵռուալ վաճառականն և տիրացաւ տան տեառն իւրոյ՝ առեալ զիին նորա: Եւ երթայր ուղտովք յԵղիպտոս. և պատահաց նմա միայնակեաց մի Ասրդիս անուն, յաղանդոյն Արիոսի և Իմրինտոսի, որ և ուսոց նմա 'ի Հին մատենիցն զԱստուած և զՖղայութեան գիրս Տեառն մերոյ: Եւ 'ի դառնախն 'ի տուն՝ քարողեաց զոր լոււան. և հալածեցին զնա աղդըն իւր, և եկն յանապատն Փառանու: Յորժամ եկին երկոտասան հազար չըկայք և առեալ պատճառըս 'ի նոցանէ՝ քարողեաց որդւոցն Խորայելի զԱստուած Աքրահամու, և եղել երաշխաւոր նոցա, որ թէ պաշտեն զնա՝ ժառանգեն զերկիրն, զոր ետ Աստուած Աքրահամու: Եւ լոււան նմա և ժողովեցան յԵւելեայ մինչեւ ցԱռւր, որ է հանդէպ Եղիպտոսի: Եւ զերկու-

¹ Առում. օր. որ ննեալ 'է հազարին Մարիսայ: — ² Մեր օր. որի ննեալ զնա նիւ և յարեցաւ 'ի Հանուառին է:

տասան հազարսն ըստ ցեղիցն Խարայելի բաժանեցին՝
երկոտասաանից նահապետաց՝ հազար հազար արկին
յինքեանս և եղեն երկոտասաանից նահապետացն բա-
ժին՝ ազգապետ գնելով ինքեանց, յորոց անունն կո-
չցան իսկ — “Արէովթ, Խեգար, Արդայ, Ար-
սամ, Արսմայ, Խորւմայ, Ամաէ, Վոշէ¹, Դադ,
Քանան, Յետուք, “Արէս Խեգարայ: — Եւ գնացին
բանակս բանակս յանապատէն ֆառանու Արարովթ
Առվարու և անցին յայնկոյս Յորդանանու ՚ի վիճակն
Ուուրենի: Եւ զօրն Յունաց էր յԵրարիա. հարին
զնոսա և փախեաւ Քահոդորոս եղայր կայսերն մազա-
պուրծ: Եւ դարձան իշխանքն² յԵրարիա և բնակե-
ցան ըստ ցեղից ցեղից: Եւ ժողովնեցան առ նոստ ա-
մենայն մնացեալքն յորդոց Խարայելի և եղեն զօր
մեծ: Եւ յղեն բանս առ կայսր՝ թողուլ զերկիրն,
զոր ետ Կատուած Կրթահամեւ: Եւ արար նոցա ընդ-
դէմ պատասխանի: Եւ գումարեաց զօրս եօթանա-
սուն հազար ՚ի ձեռն նեղինւոյ միոյ հաւատարմի և
պատուիրեաց երթալ յԵրարիա ՚ի վերայ Խամայելի,
ուր և տատակեցան իսկ և լրան մեծութեամբ բանակ-
քըն Ահմետի: — Եւ էր թիւս մեր վարթառն և
հինգ: — Եւ զի յաջողեաց նոցա խրատն Ահմե-
տի՝ խնդրեն ՚ի նմանէ օրէնս և նա զտեղի մեհենից օ-
ձիցն, զոր պաշտէին՝ կոչեաց Ելքառուքա, որ է Դա-
տու Ասուս-ծոյ: Եւ կոչեաց զբնակութիւն քաղաքին
իւրոյ Տուն Աբրահամու: — Եւ ՚ի զօրանալ քրիստո-
նէութեան զկաւու Պատմակոսի՝ շնորհանայ, որ նա

¹ Մեր օր. ըստ ցեղիցն Խարայելի երկոտասաանից նահապետացն: — ² Ո.
օր. Քոյի: — ³ Ո. օր. և դաշտան բնիւանին յԱրքէնայ:

ինքն է և եփեստու կաղ՝ տարնաղ ընկեցին յանապատ,
զոր գտնալ Տաճիկը տարան ՚ի մեհեանս օմիցն, և
քուրմք օմիցն ոչ կամեցան անդ դնել. այլ հանեալ
արտաքոյ՝ արարին տեղի ՚ի միոյ ոտից ՚ի վերայ վիմի
և անդ եղին, զոր գողացան Կթովացի վաճառաւ-
կանք վասն ոսկւոյն¹, զոր ձուլեցին Խսմայէրացիքն։
Եւ եղեւ պատերազմ պաստիկ ՚ի մէջ երկուց ազգա-
ցին։ Աշխնչեւ մոռացան զայնմանէ՝ ասաց, թէ Եր-
բահամու ոտնահետն է, յորժամ եկն ՚ի տեսանել
զորդին իւր զիսմայէլ։ Եւ քանզի յորս էր Խսմայէլ՝
հարցանէ ցկին նորա, թէ «Ո՞ւր է այր քփ»։ և նա
ասէ. «Գնա՝ աղջատեալ ամեոր»։ Եւ առէ Երբա-
համ. «Յորժամ գայ ՚ի տաւն՝ ասաց ցայր քուր-
խեա զգուռն տան քս»։ Խսկ յորժամ եկն Խսմայէլ
և էառ զհոտ հօրն՝ եհարց ցկինն և նա ասաց զոր
ըստան։ Եւ իմացեալ Խսմայէլ՝ եհան զիմին և այլ
էառ մինչեւ ցեօթներսրդ կինն, որ մատթեաց զԱքրա-
համ իթանել յիշն և օծցէ զոտսն։ Եւ իջոյց՝ ասէ,
զմի ոտն ոչ իջոյց՝ ՚ի գրաստէն, զի երդումն տուեալ
էր Առողի, մի իջանել՝ երկուցեալ թէ ընկի ընդ
չագալոււ։ Զայս առասպեկեաց Ա՛ահմետ և հրա-
մայնաց յամենայն կողմանց առնել անդ երկրպագու-
թիւն, և զվեմոնին ասաց շնորջ զալ միտուանի և ա-
սել — լէայ լէայ, և որպէս թէ պատասխանի ումեկը
առնել — այ այ, առաս առաս։ Եւ մնցեալ ՚ի ձորն՝ անա-
սուն սպանանեն, և ելեալ ՚ի գրաստ գիախչին մինչեւ

¹ Անք օք. զոր բազացան Նիովուացիւ Հանուսուսն, զոր յանկիցն Խոմ-
յելոցիւն։

՚ի ըլուրն Մաքա: Եւ ՚ի պահսչելն հանգերձ անկանի
կամ զուշմարի¹ —ու ոք իշխէ յետո հայել: Եւ ՚ի մէջ
երկուց վիմոցն ընթանալով, զոր կոչեն Սոբայ և Երևան²
վիմ: ՚ի վէմ երթան եօթն անդամ՝ անհանգիստ, և
քարինս ձգեն և Մահմետ՝ ասեն, այսպէս արար և
ուսոյց:

Այս միոտանի վաղելն վասն ռոնահետին է, և ՚ի
ձորն անասուն կոտորելին և փախսելն՝ ասեն, թէ զո՞չ
արար ամենայն դիւաց Մահմետ, զի տեսիլ ցուցաւ
նման նման, և երեւաղ նման դեք՝ փախսեաւ: Եւ յեր-
կու վիմումիջին շրջելն և քար ձգելն լիւզ են վէճք նո-
ցա պաշտելիք նախ քան զկուռուն: — և ՚ի պաշտելն
Մահմետի ըստ սովորութեան՝ շուն կառարի ել յնդ-
դէմ նորա և նա ձգեաց նման քարինս, և զնոյն հրա-
մայեաց առնել: Եւ օձք և սողունք, զի ոչ սպանա-
նին³ զի պաշտելիք են նոցա: Եւ շուն կոտորելն այն
է՝ որ ասեն, թէ ՚ի մեռանելն Մահմետի չկամեցան
թաղել՝ ակն ունելով, թէ յանէ երեքօրեայ նման
Տեառն մերոյ՝ և շունք կերտն զերեան, և յորժամ
իմացան⁴ կոտորեցին զշտնն: Եւ յառմէն տարի ՚ի
նոյն ամիսնեն՝ Հրամայիցին զնոյն առնել: ՚ի առ-
սոյց ասել — «մի է Շատուած և ոչ ոք է նմա ընկեր, և
Մահմետ ծառայ նորա»: Եւ որ ասեն Արէի միոյ
քանիւ, թէ մարգարէքն խօսեցան որպէս վասն Վարի-
տոսի և վասն Մահմետայ՝ զայն ասեն, որ Ետայի
տեսանէր երկու հեծեալս իշոյ և ուղտու: Եւ յաւուր

¹ Մեր օր. և ՚ի քույզը հանդերձ անվանէ յուր զույքի: — ² Ու օր.
Սոբայ և Երևայ: — ³ Մեր օր. զի ու աղամանին: — ⁴ Ու օր. և ՚ի նոյն
ամիսնեն հրամայիցին զնոյն առնել:

միում յանկարծակի դիւթութեամբ անյայտ եղեւ
Արահմետ և յետ սակաւու երեսալ՝ ասէ. «Խաղա-
ղութիւն ընդ ձեզ և ողորմութիւն Եստուծոյ և շը-
նորհք»։ Եւ նորա զարմացեալք ասեն. «Բւստի՞ գաս
և զի՞նչ է նոր ողջոյնդ և զո՞ր Եստուծոյ շնորհք բե-
րեր մեզ»։ և նա, ասէ. «Խառ զիս Եստուած՝ ի Ա-
քա՝ ի տուն հօր իմց և ձեր՝ Կրրահամու¹, և պատ-
մաց զկամն իւր, և ՚ի վաղիւն առաքելոց է մեզ զօ-
րէնս»։ Եւ առեալ երինջ մի ծնեալ՝ ՚ի տեղի ժողո-
վյն, մեկնեաց յորթոյն և գրեաց զոր ինչ կամէր, և
յեղջեւրս նորա կապէր²։ և ՚ի ձեռն հաւատարմաց
առաքեաց յանապատ և ՚ի վաղիւն հրամայեաց ար-
ձակել։ Եւ ինքն հաւաքեալ զամբօխն՝ մնայր. և եկն
կովն բջելով և քոտալով, և հերձեալ զամբոխն՝
խնդրէր զորթն։ Եւ հրամայեաց ունել զնա, և ա-
ռեալ զթուգթն՝ համբուրեաց և ասաց՝ յԵստուծոյ
եկեալ. վասն որոյ մինչեւ ցայսօր գրեալ են ՚ի սկիզբն
կուրանին Սուրբն ալբախոյ, որ է «կովու օրէնք»։ Եւ
հրամայէ եօթն անգամ կառարել աղջմս լուացմամբ։
Եւ փօխանակ փողոցն Խարայելի՝ ՚ի բարձուէ կանչել՝
զկայ առեալ, թէ «Եւ ՚ի վերայ լերինդ Ախոնի՝ աւե-
տարանիչդ»։ Եւ Մուդին կոչեն զճայնողն, որ է «հա-
ւատաղիր³»։ և զմատն յականջն ածել, թէ որ կա-
մաւ և որ ակամայ լսէ ականջովն։ Եւ զԲրիստոս
Ռան Եստուծոյ և Հոգի կոչեաց։ Եւ սքանչելք զոր ա-
սեն թէ առնէր—զլուսինն բերեալ՝ ՚ի վայր՝ ասեն, չորս

¹ Արե օր. Եսու զիս ասուսան՝ ՚ի Առաջի բան հօր մրում Սբրոհո-
մա։ — ² Արե օր. և իսպիոց յեղինու նորս։ — ³ Ու. օր. ու հասպա-
րադիւ։

կտոր առներ և դարձեալ բոլորեալ՝ յերկինս առաքէր: Իւյց նաև քաղըթ էր իշխան Խամսյելի¹, և ապա գտեալ զլյահմետ՝ հաւանի նմայամենայն բանս:

Եւ յորժամ զօրացան նոքա, երկուցեալ յերիւսաղէմացւոց՝ զիսաչն տէրոնի և գամենայն սպաս և կեղեցեայն հանեալ՝ ի նաւ՝ տարան՝ ի Կոստանդնուպոլիս և ի Բնիքեանկը հնազանդեցան Խամսյելի, զի կայսրըն² այլ ոչ կարաց զօր գումարել՝ ի վերայ նոցա: Եւ նոքա բաժանեալ յերիս մասոնս՝ մի յեղիպտոս և մի ՚ի Յոյնս և միւսն ՚ի Հայս: — և եղեւ ամենիցուն յաղթել: Եւ ոքք ելին ՚ի Հայս ընդ Ասորեստան հասեալ ՚ի Գուին՝ առին զնա և սպանին որոց ոչ գոյրթիւ, և գերեցին երեսուն եօթն հազար անձինս ՚ի ժամանակս իշխանութեան թէկողորոսի Աշտունոյ³, որ զինի Գաւթի՝ և բիւր մի ՚ի նոցանէ: Հարին զՊռոկոպոս կոպոս⁴ զօրագլուխն Քունաց, որ նստէր ՚ի սահմանս Հայոց վեց բիւրիւ:

Յորում աւուր մեռաւ Եզր և յաջորդեաց զաթուն՝ Երսէս եպիսկոպոս Տայոց զկնի տասն ամին Եպիքիք: բայց յափշտակութիւն եղեալ յանհնարինս կոտորելոցն՝ խորհեցաւ փախչել, իբր ոչ բաւական մեծի աստիճանին: Եւ աղաչեցեալ՝ ի բազմանց⁵ դադարէ: և հաւաքեալ զբազմութիւն դիականցն՝ թաղէր, և ՚ի նմին տեղուջ շինէր զհրդեհեալ վկայարան սրբոյն Ապրդսի: Ը ինէ տաճար որբութիւն և ՚ի վերայ վե-

¹ Մեր օր, բայց նոի ուղաբեկը էւեան Խամսյել: — ² Օր, հանեալ ՚ի նու՝ ՚ի Ասորանդանութիւն: — ³ Մեր օր, և յոյն այլ ու յորոց: — ⁴ Մեր օր, ՚ի ժամանակս Թէկողորոս Լույսանց: — ⁵ Մեր օր, հայն որ ընդունեածոս: — ⁶ Օր, օր, և ուղանել ՚ի բովաց:

ըսպին և աղիանէ հիմն տաճարի մեծի յանուն պր-
ռյն Գրիգորի յառապարի, և դնէ 'ի ներքոյ սեանցն
չորից զհասարակ նշխարս սրբոյն Գրիգորի. և զգը-
լուխն 'ի զզրոցի եղեալ՝ պահէ 'ի պէտս բժշկութեան
ախտածետաց: Ենդ դնեն և զնշխարս Ծիզորուզտայ
և զուաւթի վկային: Եւ զսուրբ Գրիգորի նշխարն
առնեն բերեալ 'ի ձայս Գրիգորոյ Մամիկոնոյ 'ի գը-
նայն նորա դեսպան 'ի Կոստանդնուպօլիս՝ տուեալ
ժնա կին ոմն յաւագաց, զոր ունէր առ իւր: Եւ նո-
րա գաղտ հանեալ 'ի ծով և անցեալ գայ բերէ անզի-
տելիք քաղաքին զգանձն անանց մեծութեան: Եւ
զծնօտն տայ Էղուանից 'ի խնդրոյ Գուանշիւայ և
քեռ իւրոյ, որ էր կին Գրիգորի:

Յայնմ ժամանակի կայսրն Կոստանդին դաւեալ
'ի մօրէն Մարտինեայ՝ սպանի, կացուցեալ զորդի
իւր ձերակեակ թագաւորեցուցանէ զԿոստանդ որդի
Կոստանդեայ: Եւ զի ապստամբեալ էր Ա արազի-
լոց՝ աղաջէ վասն նորա հայրապետն Անրսէս¹, և
դնէ զնա կուրապաղատ ձայոց. որ և յառնուլ զեշ-
խանութիւն՝ մեռաւ և թաղեցաւ 'ի Դարօնս առ հօր
իւրում քաջին Ամբատայ 'ի պատիւ հօրն. և զինէո-
դորոս Ուշտունի զօրավար²....

Իայց Մահմետ կաղեալ քառասուն ամ զիշխա-
նութիւնն՝ սատակի: Եւ զինի նորա առին զիշխա-
նութիւն Բւմար, Ամր և Արուբաքը³:

Եւ սպանին զՅաղկերտ՝ թոռն Խոսրովու, և բար-
ձին զթագաւորութիւն Պարսկից, որ և տեսեաց ամս

¹ Յերկութիւն օր. ոզուցի Հան նորա հոյքսպատիւն ներփակ:

² Յերկութիւն օր. պակասին բառք թէ: — ³ Ո. օր. Ռամաք և Բաբատէ:

շորս հարիւր ուժառն և մի . և զինի նոցա առ զիշ-
խանութիւն Մաւի : — Եւ Ա կոստանդիանոս՝ թառն
Ճերակվեայ , ընկենու զօնէողորս միշխանութենէ և
հրամայէ գօրավարին Խիլիկիոյ՝ եւանել ընդգէմ Մա-
ւայ : Եւ Ա արդ որդի Քահորդորսի նննդ գործեալ
գօրացն Յունաց՝ կարելավ զիսելս կամրջացն ՚ի վերաց
Խփրատու՝ի փախենն Յունաց : — Եւ կացոյց Մաւի
Խշանն Ճայոց զԴրիզոք Մամիկոնեան . և եգ հարկ
Ճայոց Հինգ հարիւր գահեկան : Ոմանք առնե՞ի Բարս
դանաց բերեալ քըլմանդակ մարմինն Գրիգորի Լու-
սաւորչին . և եկեալ Խարայէլ հրամանաւ Ա արագ
Գորդատոյ՝ Եզրանից իշխանի , և խնդրեալ զճնօտ
Լուստորչին տաքեալ եղ՝ ՚ի Գլխոյ վանս կոչեցեալ
աեղոյն² : Եյլ զի՝ ՚ի հարկէ հնագանդեցան Ճայք
Ճադարացւոցն , եղանէ բարկութեամբ կայտն՝ ՚ի
Ճայս՝ և ՚եերսէս կաթողիկոս ազերսելով պանի իջու-
ցանէ ՚ի Շատին՝ ՚ի կաթողիկոսարանին . և հաղորդին՝ ՚ի
միասին կայսրն և կաթողիկոսն և կան ուժ օք՝ ՚ի խոր-
հրդեանն ըստ Յունաց առվորութեան : Եւ քարոզ-
ցին զժողովնաքարիկեդոնի : Եւ եպիսկոպոս ամն՝ ՚ի վայր
իջեալ՝ ՚ի բեմն եմուտ ՚ի մէջ ամրոխին³ , և զինի հար-
ցեալ կայսերն ցեպիսկոպոսն , «թէ ընդէլու ոչ հազար-
դեցար ընդ քում պատրիարքին» . և ասէ . օգոս իսկ
եղեւ պատճառ , զի յառաջ քան վերկու ամ ժողով
արար և նզովեաց զամենայն հերձուածոց . և առա-

¹ Մեր օք. զբանաբն Ակնեայ , Ար. օք. զբանաբն Ակնեա : — ² Ար. օք.
Ունաւ աբն՝ ՚ի Թորուայ Բերել զիրէնոր , զբանաբն Կապուա-
ցն ուղբեալ եղ՝ ՚ի Գլխոյ վան Խնդրեալ դիւնոն : — ³ Մեր օք. և նովո-
դաւ ան՝ ՚ի Եղա Էլու-է ՚ի Բուժ ա՛բորին :

ւել ևս զժողովն «Քաղկեդոնի»։ Եւ մեղադրեաց յոյժ
թագաւորն՝ վասն նենգութեան նորա։ և ապա հա-
ղորդեցաւ եպիսկոպոսն և աւրհնեաց զթագաւորն և
թագաւորն ջնա։ Եւ 'ի գնալ թագաւորին երկուցեալ
'Ներսէս Աշտումեաց տեռանէն գնաց'ի Տայս։ և զինի
վեց ամի դարձաւ՝ լուեալ զմահ Բաէոդորոսի։ Եւ շե-
նէ իւր կայս առընթեր մեծ եկեղեցւոյն և կացուցանէ
ամբոխութիւն երկու մարդոց ըստ օրինի քաղկեդո-
նականութեան²։ Եւ ածէ ջուր 'ի Քասախ գետոյ և
տնիէ անտառս և այգիս։ Այթմեծվողով առնէր՝ և
տասն հարք զտօնվարդավառին փոխեցին³ և ոչ կարա-
ցին առնուլ զմիմեանցն։ ապա հրամայեաց ընտրել
գործանն և զայն միայն ուսանել, զոր և արարին 'ի ձե-
ռըն պրոյն Բարսղի՝ մականուն Շոն կոչեցելոյ, որ էր
առաջնորդ սուրբ ուխտին, որ Դապրավանք կոչէ'ի գա-
ւառին Ընտոյ։ որում ասեն, թէ եօթն անգամ ե-
տես ԴՔրիստոս պքանչելի համարձակութեամբ, վասն
որոյ Շոնընտիր կոչի շարականն, որ այժմ պաշտի
յեկեղեցիս մեր։ Եւ մինչ դեռ էր 'Ներսէս 'ի Տայս՝
Բաէոդորոս Աշտունի շինեաց զկողնն Եղթամարայ։
'Ի Դապրավանից տարան զիւան, որ յանուն սուրբ
Եստուածածնին, որ արդ Ա արձիոյ կոչի⁴՝ յայն-
ժամ Շոնեացն կոչիւր։ Եւ տարաւ վնաս Աարգիս Շո-
նեացն 'ի գողութ յերեսաց այլազգեաց, ուր արար
պքանչելիս ձեռօք Տիմոթ⁵ վարդապետին — զկինն Դե-

¹ Բուամ. օր. և Գլուխուցագ յոյժ բագաւորին կամ նվաճութեան նորին։ —

² Ո. օր. կամ ժամանակաշին։ — ³ Մեր օր. զուն կորդուալուն և ինն
հորդ գոիւցն։ — ⁴ Ո. օր. ոք Ա ար Հիս իոն։ — ⁵ Մեր օր. Յառա Տի-
մոթ Ապուալութեան։

մեարեայ արքային Այլաց յաւրկութենէ առաղջ ա-
րարեալ ամենեւին, վասն պայ և առին 'ի և այս 'և է
պրոյն Մ'կարտվաց արհնեալ, և կամ Բ'արտղի պր-
բաց Շ'ամին — և անի գիր հայերէն յաջ թենու և ախ-
ճանեալ 'Ներսիսի մեծ պատրիարքի՝ թաղի յիւրում
ձեռակերտին. և առու զաթուն Ենաստաւ, որ էր
յլ'կոռւոյ սենեկապես 'Ներսիսի, որ նորին հրամա-
նաւ շնչեր զատքը Գ'րիգորն՝ մինչ էր նա 'ի Տայք:
Յաւուրս սորա՝ շինեաց Գ'րիգոր Մ'ամեկոնեան զկա-
թուղին Երժոյ և զվանքն Երջավարդայ. և Էնաս-
տաս շնչե զեկեղեցին Ելոռւոյ՝ եղբայրանոց զնա յօ-
րինեալ և հիւանդանոց: Եւ Գ'րիգոր² իշխանն եկն
Առաջան Պերսիկ յազգէ թագաւորաց և խնդրեաց
զբարիստոս. և ետ զնա մկրտել Ենաստաւայ և եղեալ
ինքն նմա կնքահայր՝ կոչեաց զնա³ յանուն հօր իւս-
րոյ Դաւիթ և ետ նմա զշագ 'ի Ալուսյոն: Յայնմ
ժամանակի էր Ենանիս Հ իրակունի, որ առեալ հր-
բանն յԵնաստաւայ յօրինէ տումար հանուպազորդ, որ
մինչ խնդրէր պատրիարքն ժողովով⁴ հաստատել
կատարի: Եւ յաջորդէ զնա Դարսյէլ զինի մից ամ
պաշտելցն Ենաստաւայ: Յաւուրս սորա զլ'առարցաց
ոմն զօրագլուխ Ցածկաց որ 'ի և այք վանեալ հայրձէ
'Ներսի իշխանն Այլաց: — Խարայէլ կացեալ յամթու
աըն սուրբ⁵ ամս սուրբ⁶ վախճանի. և առնու զքօղն
սուրբն Առհակ, որ էր 'ի Զորոյփոր յաղբումփացն:

¹ Թ. օր. յաւուրս վթեաց Դրէսոր: — ² Մէր օր. Յա որ Շնէր և
իւնան ին Սուրբան: — ³ Ո. օր. և իւնան բան և ու նորուոց և զնա
համա հօր իւրայ Դաւիթ: — ⁴ Մէր օր. որ գնչ ինդրէ զարդիորդն հոգի
հայութեց: — ⁵ Ո. օր. Խարայէլ Խոյեալ, յամթու ամս յամթու:

Յեօթն առին տրա արշաւեցին խաղերը՝ ի և այս
և սպանին զԳրիգոր իշխանն և գերեցին զՀարտու-
րընիւրեանց : Եւ առնու զիշխանութիւննշութեամ-
բառաւունի՝ որդի Ամրատայ : Խակ Մաքի իշխանն Խ-
ամսյելի խորհցաւ բառնալ զԹագաւորութիւն Յու-
նոց որդէս զՊարսիցն . և կազմեաց երեք հարիւր նաւ-
մեծ և յամենայն նաւ հազար այր , և հազար նաւ փոքր
և յամենայն նաւ հարիւր այր՝ և արձակեաց զնոսա
ընդ ծավ՝ և բնդն ընդ ցամաք հասանէ՝ ի Քաղիե-
զոն : Եւ կորեան ամենայն նաւքն և բնդն վախճառ՝ ի
զիշերի և զերծաւ և մեռաւ յԵսորիս : Եւ առ զիշխա-
նութեան Մրուան որդի իւր , և առաքեաց ոստիկան
զՄահմատ ոմն՝ ի և այս , որ աւերեաց զՄեան կողի և
զերեաց զորս՝ ի նմա , և խարեւութեամբ կազմակաց
զաւըր . Գրիգոր՝ ծառայ մի սպանեալ և ընկեցեալ
ի խորավիտ մի . և ապա խնդրեալ և գտեալ՝ զիւժ-
ինդիրը ընելին ծայրակառոր արարեալ զկրօնաւորն և
քառասուն այր զփայտէ կախեալ : Եւ զնացեալ Մահ-
մատի : այս ոստիկան առաքէ՝ ի և այս՝ Երազահ ա-
նամն , որ կառեցաւ բառնալ զազառագունդն և այսոց և
զիսհակ կաթողիկոս կապեալ՝ առաքէ՝ ի Դամակաս ,
և զիշխանն և այսոց՝ զԱմրատ . և զանըրն Պատիթ ,
խաչ՝ ի փայտի : Եւ մնացեալ իշխանին և այսոց՝ Արմ-
քառ և Աջուան արք , կամեցան փախչել՝ ի Յոյն ,
որոց հետամուտ եղեալ խամսյելացեքն հնդ հազար
հասին՝ ի Ա արդանակերտ և կոռւեցան և սրախողիսող
արարին առ հատարակ յիշխանացն մերոց օդնութեամ-
բն . Ըստուծոց , զորոց զունչըն հատեալ՝ առաքէ առ

¹ Ք. առ արքային վեց՝ ի նույն բան՝ ի տարածութեամբ :

կայսր և առնու զպատիւ կուրապաղատութեան զինի
Էշոտի, որ շինեաց զԱրօնի եկեղեցին յանուն փրբէ:
չական պատկերին, զոր երեր որդի նորա 'ի մոիցն ա-
րեու մասսամբ ¹ և 'ի նաւակատիսն գրեաց զորս ըստ
պատկերին: Եւ զնա փոխէ Ամբատ Ռագրատունի:
և գնացեալ 'ի Տայը ² ամրանայ 'ի թուղարս ³: Եւ
լուեալ զայս Երդմելիք հրամայէ Մահմետի, որ էր զո-
րավար նոցա՝ ելանել 'ի Հայս: զոր լուեալ Ամհակայ
'ի կապանսն՝ գրէ աղաջանս, զի հրամայեացէ Մահմետ
առ ինքն գնալ, որ և հասեալ 'ի Խառան և հիւտն-
դացեալ գրէ առ նա աղաջանս թողուլ Հայոց զյան-
ցանան, զոր և արարն իսկ, և ոչ եկն չարութեամբ
յաշխարհս: Ամսնկը զԱկրայ ոմն ամիրապետ ասեն, որ
չոգաւ առ նա Ամհակ և գրեաց նամակ հաշտութեան
և հանդերձ սուրբ մարմնովն առաքեացյերկիրս ⁴ զինի
քսան և եօթն ամի պատրիարքութեան, զոր յաջոր-
դէ Եղիայ զսուրբ աժոռն:

Մեռաւ Երդմելիք և առ զտեղի Ալիթ՝ որդի
նորա, որ հրամայէ Մահմետի բառնալ զազատան Հա-
յոց 'ի Կամսայ ⁵ ու մեմնէ, որ էր հրամանատար 'Կախ-
ջավանայ: որ խարէութեամբ հաւաքեալ ⁶ զնոսա
զոմանս յեկեղեցին Խրամայ և զկէսն յեկեղեցին 'Կախ-
ջավանի՝ այրէ զնոսա 'ի հարիւր յիսուն թուականին:
Եւ զգլխաւոր նախարարն զիայտէ կախեալ չարչա-
րէին, և զկանայս և զորդիս նոցա խաղացուցին 'ի գե-

¹ Մեր օր. զմբ եբեր որդէ նորա 'ի հրէցն որեւու հասկամէ: — ² Յեր-
կոսին օր. և բնացեալ 'ի Տայն: — ³ Մեր օր. ահանայ 'ի թուղարս: —
⁴ Մեր օր. առագեցաց յերին: — ⁵ Մեր օր. 'ի խմայ առաջնէ: — ⁶ Մեր
օր. 'որ խաթեստիւմնէ հասացէ:

բութիւն, ընդ որս և զԱ ահան որդի տեառն Գող-
թան¹, որ մարտիրոսացան։ ԶԱ լիթ փոխէ Ալէմանն
եզրայր նորա. և զնա Ումար, որ զսուրբն Ա ահան
նահատակեաց։ Խակ զինի այրելոյ իշխանացն՝ Ամբատ
կորապաղատ և ընդ նման նախարարքն գնացեալ յլշ-
գեր՝ առին 'ի կայսերէ զքաղաքն Փոյթ և բնակե-
ցան անդ. և զինի յաւարի առեալ զնա և զապաս ե-
կեղեցւոյն՝ եկին 'ի Հայս։ Եւ բարկացեալ Յունաց՝
նզովս կարգեցին նոցա և 'ի զատկի տօնին կարդան։

Հայց մեծն Եղեայ երթեալ յլշղուանս զԱներսէս
Բակուր՝ զդաւանողն Վաղիեղոնի ժողովոյն և զտի-
կինն համախոչ նմա 'ի ձեռն Ումարայ պքսորէ անար-
գանօք և ձեռնազրէ ուղղափառս 'ի տեղի նորա և ին-
քըն դառնայ 'ի Հայս և կատարի զինի չորկթասանն
ամի աստիճանին։ Եւ յաջորդէ զնա Յոհաննէս իմաս-
տամէրն², որ 'ի ներքոյ ագանէր այծեայս ցփսիս և 'ի
վերոյ պճնազարդեալ պաճուճէր զանձն, և ոսկի մա-
նզր աղացեալ վիշէր ընդ ծաղիեալ ալիս մուրվացն։ զոր
լուեալ Ումարայ՝ կոչէ առ ինքն և եօթն անգամ ար-
քունական զգեստիք խիլայէ զնա և առաքէ 'ի Հայս.
որոյ եկեալ ճգնէր 'ի պահս և յաղօթս և 'ի լուսաւոր
վարդապետութիւնս։ որ և արար ժողով 'ի Անազ-
կերտ Հայովք և Եսորեօք և սրբեաց զհաւատս³ 'ի
մարդարաւան աղանդոյն, եթէ ուրէք համարձակէին
յլշղը խոտորմանէն։ Յայնմ ժամանակի գրեաց Ու-
մար առ Ե ևոն կայսր շատ ինչ բանս և զայն ևս, թէ
լուեալ է մեր, թէ եօթանասուն և երկու բաժին են

¹ Մէր օր. որդէ բոն Գողթան։ — ² Մէր օր. յանշուն վահանակո-
իւնապահ թէ։ — ³ Ու. օր. և ոբիւոց զինու 'ի բարբարասան ուղարկոյն։

քրիստոնեայք : Եւ նա զրեաց պատռակիանի , թէ երւ
կոռուսան են — Ծոյնք , և ուսուք , Բարելացիք , Եղիսա-
տացիք , Եմովազացիք , և նդիկք , Եսորիք , և ոյչք ,
Արակիմուք , Պարսք և Եղուանք . իսկ գուք ընդէլ՝
ամէ , կոչք Վրուզիք , Արրիք , Թօւուապիք , Խնարիք ,
ԱՌուրջիք , Խառլիք՝ անտառուած , Զբդիք , որ ուրանան
զէութիւն աստուծոյ և զյարութիւն և զատացեալ քո
մարգարէն Հարիրիւ : Եւ այն երկու՝ ոմն առէ զձեզ և
ոմն ոչէ խոռվասէր՝ : Եւ ձեր զրեանն՝ Ումար և Երու-
թուուար և Առուշիման Պարսիկ , զոր և աջաջ ազգա-
պեսն Պարսից շրջել ջանաց՝ և մերս նոյն է , զի՞ի
սուրբ և ողբայն է : Եւ ՚ի գերութեան ամենայն պրեանն
ոչ կորեան , այլ մնացին առ ցրուեալն» : — Եւ յոր-
ժամ՝ զը զրեաց զըովանդակն՝ միտքան գտան հոյն :
Եւ է ըստ արիարեստացն համարոյ , թէ պէտ եօթն՝ կը-
կնի ոչ առանց մեծի խորհրդոյ : Իսկ սուրբ պատրիարքն
Յոհաննէտ և Հան յաշխարհէս Հայոց զուարածեալ յոյ-
նըն յամենայն տեղին հրամանաւ Ումառայ՝ : Եւ զիշ-
խանն դեսպան ասեն արձակեալ ՚ի և եռնէ Ա ասից ա-
նուն առ Յոհան , թէ ընդէլ առնես զրանդ զայդ : Եւ
Հիւանդացաւ իշխանն , և ածեալ յոլով բժիշկս ըսա-
կարացին օգնել և մերձ էր ՚ի մահ . և ձեռն եղեալ
սուրբն Յոհան , ողջացաւ առժամանայն : Եւ տեսնաց
զաքանչելինն՝ հաւասարաց ՚ի Հայոց ուղղափառութիւն
և ոչ եռ գարձաւ ՚ի Յոյնս , այլ եզեւ կրօնաւոր և ճը-

¹ Յերկուսին օր . ո՞ն առէ զիեղ և ոչ ո՞ն ոչ և խոռվար : — ² Յեր-
կոսին օր . և զիեր էրեանն : — ³ Մեր օր . Խեղիտ հնդ իշնէ ու սուսն
հնէ խորհրդոյ : — ⁴ Օր . օր . հրամանաւ յամանայ :

նեցաւ՝ ամս հնգետասան յայրին, որ Առողջապահն կոշեցաւ անուամբ նորաւ ։ Եւ զիստըն առ ինքն ունէր խօսանն ՚ի գալք ՚ի Առառնեց . — այսպիս ըստաք՝ և գուընկայ, թէ կտժիս՝ պիրավ : — Յոհան զինիք մետասան ամսաց կատարի և յաջորդէ գամետան Դաւիթը յԵրամորից գեղջէ, որ լիսկ միշտ ՚ի տան կաթողիկոսութեան յամաւրց² անտի Ծրգատայ, որ շինեաց եկեղեցի՝ անդ առնելով գաւուք կենաց իւրաց զան երկրտասան, ներփառ ՚ի զեզեն ազգէն Տաճկաց որ ՚ի Դաւիթն : Եւ զան յաջորդէ Ծրգատ յԽթմայ գեղջէ՝ պար յաւ և առապինաջան, որ եզէ ՚ի սարդեց աղօթից սորու իսպատաթիւն զան քան և երկու :

Դակ զիւմար փոխէ Խզիս՝ սցը չպար և այսափիք, որ զիստը և զպատիքը երարձ յերկրէ և զիսոզ ազանանէր, մինչեւ խեղջեցաւ յայացն չպարէ : Եւ եկաց յեւ նորա Հեղմի, որ առափեաց զեղբայր իւր Ապիմ մինչեւ ցԻկիթանիա ոզիս եօթն քիւր : Եւ միւսանգամ գնայ գործեալ և ծովասայզ լինի ՚ի գորութենէ իւս շին յիառան քիւր արմանց : Եւ կայսր արձակեաց զՄըսլիմ պատմեկ զփառաւ Ըստուծոյ : Ծրծակէ Հեղմը ըզ Արուան պողի Ահմենափ ՚ի Այս, որ եկեալ կայոցց զԱշոտ Բագրատունի կուրապապատ և կամ պատրիկ պաել . և մասսային նման Ամբատ և Դաւիթ և Գրիգոր Ասմիկնեանք : Եւ գնացեալ Արուան ՚ի Արաշան քազարն զարձաւութեամբ : Օկնի Հեղմայ նստաւ Ալիթ զազրագործ ; որ և Հրամանաւ կուռապիցն սպանաւ³ : Եւ եղաւ Առկէյ-

¹ Որում. օր. և գնացաց առ Շնիդուան : — ² Յերկողին. օր. յաւարաւութ Ցըրպայ : — ³ Ու. օր. որ և Գրամեան պատմաւ :

ման և ապան զնա Մրուանքել ինքն ափրեաց : Եւ տպարին
ձայոց զօրուն՝ ամի ամի հարիւր հազար զահեկան
արծաթիս² : Եւ էաւ Մրուան զլամասկու և խոյ-
տառափեաց զնոսա . . . զի կապէր զմարդ : Ի չորս շիջու
և տաշէր զերեան նոցա՝ ի վերայ երկց և չորից տմէ
բարշտութեանց³, որէ սպանութիւնն ընչեց ցանկու-
թիւնն և ժշգու ցանկութիւնն և չորրորդն՝ յԱստուծոյ
ոչ ունեին ակն պատուհասի : Օ այսու ժամանակա-
ապատակառ թիւնն խարհեցան իշխանկն ձայոց, և ոչ
կամեցան պատրիկն Եշտա . և կայխալ իրազացրացին
զնա Մամիկոնեանկըն Գրիգոր և Դաւիթ : Ասէ նախա-
նի թագաւորացն ձայոց⁴ և Արքու : Խշանեն ապա-
երկու Երգլացք՝ որդիք նէշմաց, և երկու ամ պարեն-
ըազմին ընդ Մրուանայ կուտրմանի պայ յոց, որ ի
միում նուազի անկան ի զօրէն երեսուն հազար և
սպանաւ . Մրուանք : Եւ տիրեցին Երգլացք, որ և ի
մեռեց պահանջեին հորիս . և առաջեցին ի անյն
զիզիս՝ դառն նեղիք, և ապա զիայքր, և սպան դառն
սան կատազի . ընդ որ զառնորոցեալ Մաշեղ Մամիկո-
նեան՝ սպատակեալ սպան յիսմացին երկու հայ-
րիւր այր, և սպա վեց հարիւր : Եւ սպա իսպեսալք
ի մոնղանէ միոցէ, որ տեսիլս և երազս սուտու սպատ-
ակը և ասէր, թէ կատազրեալ են ժամանակը Խանու-
յելի, — ժազավեցան հինգ հազարը, որոց գլխաւորքն
Մուշեղ և Սմբատ :

Խսկ զկնի Տրդատայ միւս պի Տրդատ յաջորդէ բդ.

² Բուռմ. օր. և դաշն Հայոց զքրութիւն ամ ամ : ³ Մեր օր. հո-
բեր հազար դահնեանի անդիւոյ : — ⁵ Մեր օր. ամբողջութեան նոց : —
⁴ Մեր օր. նուինի թափառքն Հայոց և Այսոյ :

տուրբ աթոռն ամս երիս . ապա Ախսն եպիսկոպոս Եղիշ-նեաց՝ այր տուրբ և պանչելագործ , որ զյորդառաս աղքիւրն ցամաքեալ առ առորոտով Ախմն կոչեցեալ ընրինն գաւազանաւ հարեալ բխեցոյց , որ զինի ուժ ամի կատարի : Եւ առնու զաթոռն տէր Խառըի յլ զառպատրշոյ , զոր ասեն թէ մայրն աղքատութեամբ տնուցանելո զնա բայցօթեայ մուրականութեամբ ցըր-տահար 'ի ձմերայնի և արևակէղ յամարայնի . զոր 'ի սաստել ումանց 'ի զրան հայրապետանոցին՝ ասաց . «ոչ դիտէք թէ պատրիարք անուցանեմ զորոցյա իմ»՝ որպէս և եղեն — նախ եպիսկոպոս և ապա պատրի-արք շնորհաւքն Աստուծոյ՝ , որ և զինի երկրատապան ամի կատարի : Ըաջորդէ զաթոռն Խանկաննոս ամս երիւ . և ապա Յոր ամիսս վեց , յորոյ աւուրս 'ի զեօնն Բագրեանոդ վասն ոսկեղէն զարդուց եկեղեցւոյ զապարտեալ յօսափիկանէն՝ սպանան քառաւտուն այր՝ և առաւ յարովութիւն զանձուց : Իսկ զինի Յորոյ Ասպառն յանորդէ զաթոռն , որ էր 'ի Գառռնոյ՝ ա-ռաջնօրդ տուրբ աւխոտին Մաքենոցաց , որ և 'ի Օքեակ երթեալ 'ի գաւառն . Ծիրակայ՝ մուանէ 'ի խոց և ճպնի յոյժ , ուստի հանեալ տանեին յաթոռն . և տե-սեալ զնա յոյժ ներգեւեալ 'ի ճպնութեանցն ասեն . «Յո՞ երթաս» . և ասէ . «Անել զերես գեղով ընդ այլ հայրապետան» . որպէս և եղեն՝ զինի ամի միոյ վախճանեալ՝ նկարագրի ընդ այլն՝ : Եւ յաջորդէ զնա Գէորգ յլ Հարազածոտանէ :

Խակ յետ Արդայի Մահմետ՝ որդի նորա , առաքէ

¹ Առում . օր . և այս դարձերէ նորհաց Ասուածոյ : — ² Մեր օր . ողունին բարականան այր : — ³ Մեր օր . Հայինեալ նուիր ընդ այլն :

առ 1 եռն երկու գրիւ մանանեխ և զդր զի՞նի, և չիտրաց վնասեկ՝ Բայց անկելոցն՝ ի մեծ պատերազմին մնացողքը էլնայտքիկ՝ — երկու որդիք Ամբատայ՝ որդւոյ Եշտի, սրոց անուանքն Եշտ և Ծ ապուհ, և Ասմաւելի եղայր մի՛ Ծ ապուհ տնուն, իսկ ԱՌուշեղայ չորս գատերը և երկու որդիք, անդրանիլին՝ Ծ ապուհ անուն, որք անկան յերկիրն Ա տապուրական, զորս զերկութին եսագան ԱՌշուուժան Երժրունի՝ որպէս թէ՝ ի պատճեռու հօր նոցա¹ եղեւ աղէտն մեծ. և մի՛ ի քերց նոցա եռ զի՞նքն յամունաթիւն Գ ահասպի ու մեմն Խամայելացայ²՝ ի թիկունս առնելով զնա: Իսկ որդիքն Ամբատայ՝ Եշտ և Ծ ապուհ, հասարակ բաժանեցին զշայրենիս իւրեանց: Եւ զի Յ ահատզն յափշտակենոյ եր զմասն ինչ Արշարունեաց և խորհիք տիրեղ՝ ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին՝ զայն առին յինքեանո Եշտ և Ծ ապուհ. և եխալ զկողամքը Ծ իւրտիայ՝ հարին զզօրս Խամայելին որ անդ, և գրաւեցին յինքեանո զի իւրակ, զԵշտք և զբաւառն ջայց: Եւ այսպէս ըստ բախտին եխալ Եշտի քաջի՝ շինէ զկամախ և բնակեցուցանէ՝ ի նմա զընտանիս իւր, և ինքն նմանեալ նախնւոյն իւրոյ Ամբատայ՝ որդւոյ Դիւրտատայ, իշխանի Ամբատաւանայ, որ է բերդ՝ ի Աղեր գաւառիւ Քաննզի յաւուր միում պաշարեցին զնա թշնամիլին՝ մինչ կայր յաղոթն. և տեսեալ՝ ոչ խափանեաց զխօսելն ընդ Աստուծոյ մինչև ցկատարութն. և ապա եխալ ընդդէմ նոցա³ կտրեր յերկուս

¹ Ուում. օր. որդիս նի պարհուու հօր նոցա: — ² Ու. օր. Զահոռք ամեն. Խամայելացայ նիսան առնելով գու: — ³ Ա՞ր օր. և աղո և ը ըդ: նոցա:

զգինաւոր նոցա, որում անուն էր 1 խղաւան Արդ-
լոյ¹։ և հարկաներ իբրև արս հինգ հարիսր։ Առ առ
բողոք կալեալ² արդին Գնաւնեաց՝ թափել զնոսա
յիամսյէլացւոցն, որոյ երթեալ հազար արամի յլու-
ղիովեա զաւառու, և առ ինքն գումարեալ զամենացն
ազգն աղլիսիւն խրեանց՝ տանիք բնուկեցուցանե՛ի ջայր։
Յայնմ ժամանակի աղմկեալ Խամսյէլացիքն ընդ մի-
մանն՝ համազչիր երկիրտ Հայոց։ Եւ ական գործանալ
իշխանքն, յիւրապատճշիւր տեղիս։ և առյու իշխանն Խա-
մայեկի Խշոտի՝ որուոյ Խշորներեհի, որդուոյ³ առա-
կայ, որդուոյ Խշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Արդ-
րաց, որոյ երթեալ հնազանդեցուցանէ բնուկեան։ և
կայսրն առաքէ նմա պատիւ կուրսարազտապթեան։
Խակ Զ աշառապն ապատամբեալ յիւրմէ իշխանէն՝ դայ
նստի՝ ի Դուբին բանաթեամբ որդւով խօրով՝ Արդ-
լոյիւ։ Իբրև ետես զայն կուրսապաղաւան Աշոտ՝ առա-
քէ առ կայսրն Լ և ան օգնել Հայոց ։ և չիք նա պա-
րապ. զի Ա՛կբայլէ ոմն ջանացեալ սպանունել զնաւե-
ոչ յաջողեալ գործոյ, իմացեալ կայսերն։ կամեցա-
սպանանել զնա և աղաչեցեալ ՚ի թագուհայն մինչեւ
անցցէ մեծ զատկին օր՝ եղաւ ՚ի բանդի։ Եւ էր բան-
դապանն բարեկամ Ա՛կբայլին, որ կաշառեաց զմանկ-
լաւիքն⁴, որք են սենեկապանք արքային և մօտակայք։
Աղքա յանկարծակի սրովք դիմեցին ՚ի վերայ կոյսերն
յեկեղեցին ՚ի ժամ պատարագին, և նորու փոխացենալ
առ սեղանն՝ բոււան եհար զնամանէ։ խիկ նորքա անու-

¹ Մեր օր. Ավարտն Աբուլոյ։ — ² Մեր օր. առ առ Քողոժեւ ուզիք
գնունեաց։ — ³ Մեր օր. որ Խուսենոց զմանկացիւ։

զորմանթեամբ իրր գաղտնք սպանին՝ զնա՞ի տեղւոցն։
և թագաւորեաց Ակացիկ։ Եւ ելանէք ՚ի խնդիր
մեծի գորավարին Անուելի Ամիկոնոյ։ և նորա ա-
ճապարեալ հարիւր յիսուն արտօմբ անկանի ՚ի Կա-
մակ և անասի առ Ամամուն իշխանն Խամսյիլի, որ ըս-
տանեալ զերպայրն Աահմետի՝ ինքն տիրէր Տաճկացն
Եւ նորա յոյժ պատուեալ զնա՞ կտրեաց ռոճիկս աւ-
տուրն հազար երկը հարիւր և մեց կշիռ արծաթոյ, և
զօր ըստ օրէ պարգևեմն անչափ և անեշիռ։ Իայց կու-
րապարատն Աշոտ տիրեաց ՚ի Կազզուայ մինչեւ ցՖիխտ
լեռնաւկողմամբն հանդերձ։ Իայց տունն Գահապ-
պայ գորացեալ ՚ի Դուկին իբրև հինգ հազարաւ՝ կա-
մեցաւ զնալ ՚ի Ցարոն² յիշխանութիւն Աշոտի՝ որ-
դույ Աբատայ։ իսկ ողջախոհն այն և քաջ հաւա-
տացեան երիտ հարիւր հեծելովք և երկը հարիւր
հետեակաւք ել ընդդէմ նոցա՝ չմնացեալ հաւաքման
գորացն, կոտորեաց ՚ի նոցանէ երկը հազարս և հա-
սկալ ՚ի բանուկս նոցա էառ զտմենոյն մեծութիւնո
նոցա, և դարձաւ ինդութեամբ՝ պատուորելով ըզ-
պիրիսուու։ Եւ Ը ապուհ երբայր նորա առագատա-
կեալ ՚ի կողմանու Դունայ՝ առեալ աւար քածզում,
դառնայր և թափեցաւ զօրն ՚ի քաղաքէն զհնու նորա,
այլ և քաղաքացիքն դիմեալք ՚ի վերայ Աքումելիթին՝
սպանին զնա և ածին ՚ի դուռն քաղաքին՝ և դարձեալ
զօրացան։ և իմացեալ զեղեացն՝ չքոտեյան և կորեան
՚ի միջոյ։

(Յառաւրան յայնոսիկ գայլը և պիսկոպոս մի՝ Ապի-

¹ Աեր օր. անողոք էազանութեաւի սպանին զնա։ — ² Ա. օր. Տաճու-
ն Ցորեւու։

կուռայ անուն, առ Եշոտ և ջանայր դարձուցանել զնա յաղանգն Վաղիկեղոնի, զոր լուեալ Իշւրաստ ոմն վարդապետի ԱՇԽագետս՝ առաքէ զարկաւագն Կառնայ, որոյ եկեալ մարտնչի ընդ Ապիկուռայ և յաղթեն նմա զօրութեամբ սուրբ ։ ոգուցն։ Եւ հալածէ զնա իշխանն և հաստատի ևս առաւել ՚ի հառատս պրոյն Գրիգորի։ Յետ այսորիկ վախճանի ՚ի մահին Եշոտ, և առնու զիշխանութիւն Ամբատ որդի նորա ամ մի։ Եւ ապա մարտուցեալ ընդ չորից հազարաց հինգ հարիւր արամիք՝ պատկի ՚ի Քրիստոս յամայելականացըն. և եղբարք նորա Դաւիթ և Ատհակ և Մաւչեզ և Քագարատ առեալ զմայրն իւրեանց՝ չողան ՚ի Առափորին առ Խալափ ամիրոյն և սիրով ընկալեալ եղեն ՚ի նմանէ։ Խակ Աւագա ոմն ՚ի տանէն Զահապայ չորս հազարօք կուռեալ ընդ Եշոտոյ և ընդ եղբօր իւրում Ը ապհոյ՝ մեռաւ Ը ապուհ ՚ի պատերազմին։ և զինի երկու ամաց մեռաւ Եշոտ ՚ի առան իւրում, և առ զիշխանութիւն Ամբատ որդի նորա և խնամիք զմայցեալ որբան ՝ որդիսն Ը ապհոյ, ընակեցուցեալ զնոսա յԱնի յապահօս։ Խաղաղութիւն արարեալ ընդ Աւագայի՝ առնու ՚ի նմանէ զպատիւն հայրենի ասպարապետութեան, և ամուսնաւորեալ ընդ քեռն Դաւիթի ծնանի երկու որդիսն՝ զԵշոտ և զԸ ապուհ, որոց քոյրն տուաւ յամնունութիւն Բագարատոյ՝ որդւոյ Եշոտի կուրապազատի։ Եւ Դաւիթ՝ եղբայրն Ամբատայ, շինէ զՈՃբերդ։

Յաւուրս յայսոսիկ այր մի յազգէն Պարսից եկեալ ՚ի Բաղդատոյ, Բաք անուն, արկանէր զքագումն ՚ի սուր սուսերի յազգէն Խամայելի՝ գերելով զքազումն,

և ասէր զինքն անմահ։ և 'ի միում նուազի ստուկէր երեսուն հազար՝ 'ի պատերազմեն իւրում¹ ընդ իսմայելի։ Եւ եկն մինչև ցԳեզարքունի և մաշէր սրով զմեծ և զփոքր։ Եւ Ամուն էր 'ի կողմանս Յունաց² զամն եօթն և առնոյր զանհակելի ամուրն լուկուայ³ և դառնայր 'ի Միջագետս։ — Եւ Ամուռէլ երթայ դարձեալ 'ի Յոյնս։ — Մեռաւ Ամուն և առ զիշխանութիւնն Ապուսահակ եղբայր նորա, որ և առաքէ զԼփշինն ամենայն ուժով 'ի վերայ Իարանայ 'ի Նայս և ինքն կոտորէ զզորմն Իարանայ⁴։ Աահու որ դի Ամբատայ ըմբռնէ զԲարան և առնու յԼփշինն պարգևս հազարիցս հազար կշու արծաթոյ և այլ ևս հարիւր հազար առնու 'ի նմանէ. և զԲարանայ կըտրեալ զոտս և զճեռս⁵ հանէ զնա 'ի փայտ։ Եւ երթայ Եփշինն յերկիրն Յունաց, յաղթէ կայսերն, առնու զԼմուրրա քազաք. և գերեալ զնա՝ դառնայ խազաղութեամբ։

(Յաւուզա յայնոսիկ Աբլիւթ ոմն 'ի տանէն ֆահասպայ ել չորս հազարիւք յերկիրն Աիւնեաց. և ել Իարգէն ընդդէմ նորա երկու հարիւրք և ջնջեաց զնա խապառ։

Իսկ 'ի կարգի պատրիարքացն յաջորդէ զԳէորգ Յովիսէփ ամս մետասան. և զնա Դաւիթթ ամս երկուտասան, — յորում աւուր ոստիկան ոմն ել 'ի Նայս՝ Աաւանուն, որում ընդդէմ դարձեալ⁶ մեռան Արմ-

¹ Ուսւմ. օր. սորութեր երեսուն հազար՝ 'ի պատերազմ իւրում։ — ² Մեր օր. և Մատուն եր՝ 'ի խըման Յունաց։ — ³ Մեր օր. ամուրն լուզուա։ —

⁴ Յերկոսին օր. 'ի վերայ Բաբանաց և Ափընն սոսուե 'ի Հոյս և ինըն իտորի պարունական Բաբանաց։ — ⁵ Ո. օր. և զբաժանաց յորի զորս և զնեա։ —

⁶ Ո. օր. ընդդէմ դարձան։

բատ և Աահակ՝ Վիւնեաց տէրն : — Իսկ գՅօվսէփյա-
ջորդէ Յովաննէս՝ այր սուրբ և պարկեշտ, որ զինի
ութ ամի չարախօսեալ զնա առ Ռազարատ իշխանն
Տորոս լերին՝ Խորհի ընկենուլ զնա . և պատուհասին
՚ի տեառնէ չարախօսքն : Եւ ոստիկան ոմն եկեալ՝ Ռ-
պուսէթ անուն, կապեալ առաքէ զԲազարատ առ
ամիրայն : Իսկ ամբոխն Տորոսի շարժեալ՝ ՚ի բարկու-
թիւն՝ սպանին զԱպուսէթ . զոր լուեալ ամիրայն գու-
մարէ զօր բազում՝ ՚ի ձեռն ընդոծնոյ իւրոյ Ռուղայի՝
տուեալ պատուէր զնախարարս աշխարհիս կապանաւք
առ նա հասուցանել . որոյ եկեալ կատարէր զհրամա-
յեալն . քանզի մուեալ՝ ՚ի Տարոն ըմբռնէ զորդիսն Ռա-
զարատայ գերելոյ՝ զԴաւիթ և զԱշոտ ¹ և զգեղեց-
կազիտակն ² Ատոմհարիւր յիսուն արամբ, բռնադա-
տէր ուրանալ զՔրիստոսի աստուածութիւնն . որում
ոչ հաւանեալք՝ դառն տանջանաւք սրոյ և հրոյ և
խաշիւ պսակեցան ՚ի Կրիստոսէ, որ օր քսան և հինգ
էր մեհեկի ամսոյ : — զոր տօն կարգեաց սուրբ պատ-
րիարգն Յօվհաննէս, և ինքն վախճանեցաւ զինի քսան
և երկու ամի հայրապետութեան իւրոյ : Եւ առնու-
զուրբ ամուն Օպարիաս ՚ի գեղջէն Զագայ ³ : Եւ
Ռուղայի կալեալ զեխաննան ⁴ Վիսական՝ զԱ ասակ և
զեղբայր նորա զԱշոտ և զմեծ իշխանն Ատրներսէ՛ ՚ի
գաւառին Խաշենոյ և զիշխանն Վարդմանայ զԱրտ-
րիծէ, և երթեալ յԱւտի ⁵ ըմբռնէ զԱտեփաննոս կոնն
տանէ ՚ի ՚Կութին բռնութեամբ ուժոյ սպանեալ զի՞ու-
նար՝ զեղբայր Ամանուչէի²։ Եւ գնացեալ Ամանուչէի
առնու զօր ՚ի դրանէ Պարսից արքային և գայ սպա-
նանէ զլուզելն ՚ի վերայ գերեզմանի եղքօր իւրոյ, և ըզ-
Դութին տայ ՚ի ձեռու Պարսից։ — Յայնմ ժամանակի
պատրիարքն Իարսեզ՝ նեղեալ յազգի ազգի շփոթ-
մանէն, գնայ յաթուն իւր յԱնի. և իսկոյն հասանէ
խնդրակ ՚ի տէր Գրիգորիսէ Պալշաւէ, որ և Վահ-
րամ Ա կայասէր կոչեցեալ, «Եթէ հասեալ է ժամա-
նակ իմ, եկյուղարկեա զիս առ Տէր»։ — և նա ոչ յա-
պաղեալ՝ յուսով վերջին աւրհնութեան։ Եւ պատա-
հէ նմա փորձութիւն ինչ ՚ի ճանապարհին³ ՚ի բերդն
Ամեծկերտոյ⁴ մօտ ՚ի Իալու — ՚ի Յունականաց որ անդ,
որը կամեցան կողոպտել զնոսա բայց նա քաջասրտա-
բար արիացեալ՝ ոչ ետ ըստ կամաց իւրեանց առնուլ,
այլ զոր ինքն թողացոյց⁵։ Իայց զիսան երկաթի՝ ձե-
ռագործ առաքելցն Խաղէոսի, որ տանէին առաջի՝
ընկց բարձողն ՚ի ծովակն, որ զինի գտեալ եղել ՚ի
քրիստոնէից ՚ի ճամանչ նշուլցն գուշակեալ՝ եղին ՚ի
սուրբ Գրիգորոյ լեառն, ուր կայ գերեզման նորա։ և
կայ անդէն՝ առնելով պէսպէս սքանչելիս ։ Իսկ նորա
գնացեալ զերկայնաձիգ ճանապարհ և հասեալ ՚ի կար-

¹ Աեր օր. ։ Քրոյ գ Յուլիւ անան գիւթայք։ — ² Աեր օր. բու-
նեմի ուժոյ ողանել զբան որո զիդոյցն Ամեսուկի։ — ³ Ո. օր. և
պարհակ նմա գոյնութիւն ինչ սովու ՚ի ճանապարհ։ — ⁴ Աեր օր. ՚ի բեր-
դն Սինէիրոյ։ — ⁵ Ո. օր. այլ լու Բագ Բուլցոյց։

միր վանկքն կուլցեալ, ուր կայր սուրբ այրն Աստուծոյ
տռ իշխանն մեծ Ա ասիլ: Եւ աւրհնեալ՝ի նմանէ և
յանձնեաց ¹՝ի նա զտրայսն ձեռնատռն, ողբ էին նմա
քաւերորդոց որդիք ² Գրիգորիս, զոր և անուանէր
կաթողիկոս, և Պետրէս՝ եղայր նորա, — և էին որ-
դիք Կալիգառին: Եւ ինքն նաջեաց՝ի Տէր՝ի տրէ ա-
մույսուոք շարաթուն՝ի յինատկան ամարան և՝ի տօ-
նի Երեմիայի մարգարեին, և Թաղեցաւ՝ի տեղունչն:
Եւ արարին կած մեծ՝ի վերայ նորա Ա ասիլ և ամե-
նոյն աղասագունդքն այց: — Եւ՝ի նմին ամի կա-
տարեցաւ սուրբ ճգնաւորն և մարգարեին Արկոս՝ի
կոկաց գաւառին՝ի լեառն Երնկուառ մերձ՝ի Արաշ.
որ փաթառն և Հինգ ամ՝ոչ եկեր հաց և ոչ որ ինչ
նման է հացի, բայց միայն խռա: որ և ասաց իսկ, «Եր-
թէ յաճախինն չարիք մարդկան և աւերի աշխարհ, յայ-
լազգեաց, և փակին դրունք եկեղեցեաց, և զլարուսա-
ղէմ դարձեալ առնու հռուդքն»: Աա՝ի քսան և եր-
կու տեղիս ջուր եհան ³: «Ի նոյն անապատ և ամփոփե-
ցաւ՝ի վանքն կաստաղօն: Յետ տօնի Աստուածած-
նին հինգշարաթ օր տօն է սմա:

Դ հինգ հարիւր յիսուն և եօթն թափին առաւ Տը-
րապօխս: զամս մետասան տուեալ խսար՝ի վերայ նո-
րա թագաւորին Երուսաղեմի և կոմսին Ռեդդան ⁴:
այլ սակայն տուաւ քաղաքն՝ի Տանկրի՝ տէրն Անտի-
ոքու: վասն որոյ բարկացեալ՝ի վերայ նորա թագա-
ւորն և Բերդրանն՝վերսոին առին զքաղաքն և մաշե-

¹ Մէր օր. և յոնցնեու՝ի նո: — ² Յերկոսին օր. որ էին նմա ժորորդոց
որդիք: — ³ Մէր օր. սո երիս ունելու լուսը եկան: — ⁴ Մէր օր. և յուն
Պերգամեն: Առ օր. և յուն ըերբբան:

ցին սրով և կողոպտեցին. և Ի՞երդրան ժառանգեաց զուեղին:

՚Ի հինգ հարիւր յիսուն և ինն թուին Ո՞ամսուտ՝ սպասալար Պարսից, աւերեաց զամենայն երկիրն Ուռ Հայոյ կոտորածով և գերութեամբ և ՚ի սուգ նատոյց զամենայն քրիտոնեայս: ՚Ի նմին ամի ՚ի ժամանակի ձմերան ՚ի մթան զիշերի անկաւ հուր ՚ի բարձանց ՚ի ծովն Ա ասպուրական, և գոչեցեալ ծովուն անկաւ զամանքաւմ¹ և դարձաւ ծովն ՚ի դոյն արեան, և մեռան ձկունքն: Եւ ՚ի լրւանալ առաւօտին կուտեալ կային առ ցամաքաւմ՝ իրըև զիայտակոյտս անտառաց:

՚Ի հինգ հարիւր վաթսուն թուին մեծ իշխանն այցո կորովի իմանտութեամբ իւրով էառ զեերդն Կէնդոսկաւիս, ուր սպանին² զԳագիկ Ը անհնշահաց: Եւ զի կենդանի էին սպանողք թագաւորին՝ որդիքն Ո՞անիթալիոնի երկք եղեալք, և սպան զնոսա չարչանաւք և էառ զթուրն և զհանդերձս թագաւորին և զգանձս ամենայն գաւառուն, որ կայլ անդ ՚ի պահետի վասն անհառ ամրութեան դղեկին, և խաչս և պատկերս և ոսկի բազում յոյժ: Եւ տարեալ զբովանդակըն ՚ի Ա ահկայն՝ գոհանայր զԸստուծոյ, և կացոյց յիւրոյն պահապանս բերդին: Խակ պատրիարդն Իարսեղ այլ ոչ դարձաւ ՚ի յլնի, այլ անդէն կացեալ ժամանակս ինչ, ապա եղ ՚ի մոտի երթալ յլշրուստոշէմ: Եւ հրաւիրեալ զեպիսկոպոս ՚ի վանորայս երկրին և զիշխանսն գալ ՚ի տօն Ա արդավառին ձեռնադրել ըզգիրիորիս յաստիճան առաքելական, զի ինքն ան-

¹ Ուռմ. օր. և էովյանու անկու զամուտուն: — ² Յերկոսին օր. որ սոյսն զդուգի:

երկրայ զառաջի եղեալ ճանապարհն վճարեսցէ։ Եւ պատահեալ նմա որոգայթ ինչ՝ի վանքն, որ Ը ուղըն կոչի՝ շինելով տուն, ուր և 'ի վեր տանելն զհեծանն՝ զերծեալ 'ի ձեռաց՝ անկառ 'ի վերայ և հրաւիրեաց 'ի մաս'։ Այսկայն կեցեալ զինի զաւուրս եօթն՝ տայԳրիգորի զաստիճանն և ինքն վճարի, ուր և թաղեցաւ անդին։

'Ի հինգ հարիւր վաթսուն և երկու թուին՝ իբրելուաւ Դաւիթ ոմն՝ որդի Քառունկայ, 'ի կղզւոջն Ախմաթամարայ արարեալ ժողով եպիսկոպոսաց հնդից ձեռնադինցաւ կաթողիկոս, պատմառելով եթէ Ա ահանին կաթողիկոս եկն առ Ապուսակ՝ որդի Գագկայ, 'ի Զորոյ վանս և անդ վախճանեցաւ։ և կայր անդ սեղան պատարագի սրբոյն Գրիգորի և գաւազանն և գօտին մաշկեղէն, և հողաթափ մի սրբոյն ու ոխիսիմեայ և պերողոտն ներկեալ արեամբ և շղարշն, որ է դաստառակ՝ մնացեալ անդ 'ի ժառանգաւորաց, և 'ի ժամանակս հալածանացն ստրացաւ 'ի կղզին Ախմաթամարայ։ — և զի ասեն աթոռ է և այս թագաւորացն Աքծրունեաց՝ վայել է լինել և պատրիարքութեան։ սակայն ոչ եղեւ ընկալեալ՝ թէ և շատից եղեւ աշխատ ընծայիւք և աղաչանաւք՝ մանաւանդ 'ի յԱնւոյ գլխաւորացն, որոց գրէ մեծ շնորհակալութիւն աւրհնութեամբ պատրիարքին Գրիգորիսի և ամենայն վանուրէիք² Անեալ լերինն և շրջակայ եպիսկոպոսացն ձեռագրով։ Տայց մինչ կենդանի էր տէր Բարսեղ՝ մեռաւ պարոն Ա ասին մեծ իշխանաց իշխանն այսոց,

¹ Մեր. օր. և հասկրեաց ժահու։ — ² Մեր. օր. օրհնութեանի զուրէութիւն Գրիգորիս ամենայն լանգիչն։

որ Աստուծոյ յաջողելովն տիրէր բազում բերդից և գաւառաց։ Եւ հոգայ զտուն նորա պատրիարքն Ռարանգ։ և ետ զիշխանութիւնն 'ի տղայ Ա ասին յազդէ կամարական։ զի տուն Ա ասլին էր յայնժամ հաւաքարան թագաւորազանց և ազատաց Հայոց և աթոռ հայրապետաց։ 'Ի նմին ամի մեռանէր մեծ կոմնն Ենտիդրու Տանկրի՝ քրիստոսասէր և իրաւադատ, և առ զիշխանութիւնն Առմէր քուերորդին իւր¹։

'Ի հինգ հարիւր վաթսուն և երկք թուին 'ի մարկի երկոտասանն գողաց երկիր աղիողորմ ձայնիւ, որ գայր 'ի վերայ լեռանց և 'ի դարտփուլ վիմաց։ և օրն էր կիւրակէ և ձայնն վառ, վասն որոյ և կարծեցաւ։ թէ օրն է կատարածի աշխարհիս։ Եւ վիան յոլով քաղաքք. և մեռան քառասուն հազար անձինք, զոր թուել կարացին։ Եւ 'ի նմին ամի մեռաւ Գէորգ վարդապետն Ո՞եղոիկ՝ նորագող սուրբ ուկատին Պարագարկուն, որ էր 'ի Ա ասպուրական դաւառէ և յԵնալիկին կոչեցեալ գեղջէ, սուրբ և պքանչելի և մեծ ճրգնաւոր։ Եւ 'ի գալ տարւոյն անկաւ հուր յերկնից 'ի Ճեմիայն Եմթայ, որ է մնիրայն հաւաքման մօլիմանաց՝ և այրեաց զքարաշէն յարէն. և ելանէր բոցն մինչեւ յերկինս։

'Ի հինգ հարիւր վաթսուն և հինգ թուին Բնորոս՝ եղբայր Լ և ոնի, որդի Առատանդեայ, կալեալ զտղայ Ա ասինն՝ ետ 'ի Պաղապայն 'ի կոմնն Աւոհայու. և նա շարչարեալ զնա՝ էառ զամենայն երկիր նորա — ելաւ աշխարհն 'ի Հայոց։ Եւ Ա ասին գնաց առ Լ և ոն՝

¹ Մեր օր. Դրանքը եւ իւրա Անդրէսուս Ցանկիւսուս ունեցիւս և իւսուսուս, և առ զիշխանութիւն Արմէր ու յըրդիւն իւր։

աներն իւր 'ի Աիլէկէ, և անտի 'ի Կոստանդնուպօլիս, և պատուեցաւ 'ի կայսերէ ազատովքն իւրովք։ Եւ 'ի միւս ամին գնաց Պաղտոյն 'ի Նզէպն 'ի վերաց Ապրլխարիբին Հայոց իշխանին¹ որդւոյ Ա ասակայ և եղբօր (նորին) Ա ինկուին, որ էին տեալք հսզար զօրականի, որ յառաջ ունեին զՃապաշար և զՎիրն՝ առեալ 'ի Բնուրբաց մեծաւ քաջութեամբ։ զոր 'ի Խըսար արկեալ ամ մի²՝ էառ 'ի նմանէ զբովանդակն։ — և նա գնաց առ Խորոս։ «Նոյնպէս քակեաց զմիւս իշխանն³, որ բնակեալ էր յԷմալընդան՝ զ՛ագարատ, և զԼոստանդին՝ տէրն Կտրկառայ՝ զոր մեռոյց 'ի կապանս 'ի բերդին Ոամուսատ⁴։

'Ի հինգ հարիւր վաթսուն և եօթն թուին մեռաւ թագաւորն Եցրուսաղեմի Պաղտոյն և առ զթագն միւս Պաղտոյն՝ կոմնն Ուռհայոյ։ — 'Ի նմին ամի մեռաւ և Տափար։ և սուլտանն Պարսից, որ և մերձ 'ի մահ եղեալ՝ ետ սպանանել զաւագ կինն իւր զԳռհար խաթունն, որ ունէր առաջի իւր ասեն չորս հարիւր կուսանս 'ի սպասու ինքեան՝ թագ 'ի գլուխ։ և էր տէր զօրաց բազմաց՝ որոց գաղտ զենուլ ետ՝ զի մի, ասէ՝ արասցէ այր զեղքայր իւր, զի ունէր⁵ զխորին աշխարհն Պարսից զԱղկան քաղաք և զլոզնէ, որ վեց աւուրբ ճանապարհաւ անդի է քան զԱսպահան⁶։ Եւ զաթուն իւր յաւագ որդին տայր 'ի Աահմուտն։ և

¹ Մեր օր. 'ի Մբաց Աթլառբին Հոյոց էլեանին։ — ² Մեր օր. զոր խոր որիթու գու։ — ³ Ո. օր. գնաց ու թորոն նոյնպէս զմուն էլ յան։ — ⁴ Մեր օր. 'ի Բերդին Սահասրար։ — Ո. օր. զոր Գույց 'ի Բերդին Սահասրար։ — ⁵ Մեր օր. որոսցէ այր զԵղքայրն իւ, որ անդէ չէրդին։ — ⁶ Մեր օր. անդ և ժան զԱսպահան։

զկրսերն՝ զՄԿլեք, դնէր տէր Գանձակայ Հայոց:—
Եւ 'ի գալ տարւոյն մեռաւ Նվէքս, և առ զթագն որ-
դի իւր Փէրոժէն, որ եղեւ բարեմիտ առ Հայս և մե-
ղաղրէր մօր իւրում, որ մոլեալ 'ի սուտ առաջնոր-
դաց՝ կրկին մկրտելով խաչէր կրկին զջէրն: Յայնմ
ժամանակի զօրանայր թագաւորն Արաց Դաւիթ
որդի Գէորգայ՝ որդւոյ Բագարատայ, որ առ զՃըփ-
խիս 'ի Պարսից և եհար զՄԿլեք սուլտանն Գանձա-
կայ 'ի հարուածս սաստիկս և հինգ հարիւր արս սր-
լահանքս բարձրացոյց 'ի փայտ մահու¹ 'ի Տփիխս քա-
ղաքի: Ընդ աւուրսն ընդ այնոսիկ՝ զի մեռեալ էր Մա-
նուշէ ամիրայն Ենւոյ, Երլսուար որդի նորա տիրէր
նմա—այր անարի և կնասմարդի, որ կամեցաւ վաճա-
ռել զԵնի վաթսուն հազար դենարի 'ի վերայ կարուց
ամիրային. և ետ բերել նալ ծանրագին և քարձրա-
հասակ 'ի Խլաթայ և դնել 'ի վերայ գմբեթի կաթու-
ղեկէին՝ փոխելով զեղեալն յառաջնոցն. վասն որոյ սրբ-
տառեալ քրիստոնէիցն կոչեն զԴաւիթ և տան 'ի ձե-
ռն նորա զքաղաքն Ենի: Եւ ընկեցեալ զզէնն ատե-
լի 'ի պատուական զլխոյն կաթուղեկէի, զոր ունէր զա-
միս վաթսուն վասն մեղաց մերոց համբերելով՝ եղին
զպսակն զարդու և զթագն Յիսուսի զպարծանկն Պօ-
ղոսի զփրկութեան մերոց զարեգակն՝ զխան աստր-
ւածընկալ: Եւ հարեալ զժամահարն՝ առ խաչին դա-
ւանեցին զԵստուած զխաչեալն 'ի փրկութիւն հաւա-
տացելոց: Իսկ թագաւորն զՄպուշէթ և զորդին իւր
զԴաւանէթողեալ 'ի Ենի՝ դառնայ յերկիր իւր ընդ իւր

1 Մեր օր. հինգ հորեւր ոյք ուսհանիս բարձրացոյց 'ի էոյք:

տանելով զԱպլսուար որդւովք¹, որք անդէն մեռան և
ոչ ևս դարձան։ Եւ ընդարձակեալ Դաւիթ զսահ-
մանս Վ. բաց՝ առեալ զՈւխտիս և զսահմանս իւր² —
զԳագ, զՏէրունականն, զՏաւուշ, զՄայան, զՄայ-
ծոն, զԼուէ, զՏաշեր, զՄահկանաբերդ և զըսլոր
իշխանութիւն այոց Ափրիկէի և Եքասայ հնազան-
գէր, — և զլեառն կովկասու և զթագաւորութիւն Ոո-
նաց, զՄշամուլս և զԼիճէթ³ և զՀերէթ մինչեւ ՚ի ծու-
գըն Կասրից և ցԱրանդ⁴ և ցՇապուրան քաղաք։
Խնամ ածեալ և անիմսատ ազգին Վ. բաց՝ ընտրեաց
մանկունս քառասուն, առաքեաց ՚ի Յոյնս ուսանել
զլեզուս և առնել թարգմանութիւն և բերել, զոր և
արարին իսկ. — երկք ՚ի նոցանէ լաւագոյնս գտեալ և
մասաւորս⁵, որք և զարդարեցին զազգն անզարդ։ Ոչ էր
նա երկմիտ⁶ յեկեղեցոյ և յաղօթից այոց, վասն ո-
րոյ բազում անգամ դնէր զգլուխն ՚ի ներքոյ ձեռին
մերոցն՝ խնդրելով աւրհնութիւնն։ Ոա թագաւո-
րեաց զամն երեսուն և երեք, մեռաւ ՚ի Տփիսիս և թա-
ղեցաւ ՚ի Գ. էլաթ⁷ ՚ի գերեզման հարց իւրոց։ Եւ էատ
զթագն Դ. մետրէ. որդի իւր, որ պահեաց նոյնպէս
զիշխանութիւն հօրն՝ յաւել ևս զԴմանիս և զԽու-
նան քաղաք առեալ ՚ի Պարսից։ ՚ի Ժամանակին յայն-
միկ որդի մի Եքլսուարայ, որ կայր ՚ի Խորասան, իբրև
լուաւ զանցս հօրն⁸ և զեղբարցն և զմահն Դաւթի՝
գայ ՚ի խնդիր հայրենի քաղաքին Անւոյ և աղերսա-

¹ Մեր օր. զԱթլուսոր։ — ² Մեր օր. զՄիւհուլս և զԱնիր։ — ³ Մեր
օր. ՚ի ծով Կոստից և զՀաղթակար։ — ⁴ Յերկոսին օր. ըստաբոյն գուել
և հորառուուր։ — ⁵ Մեր օր. որ եր նո երեխ յետիցուոյ և յոզիլից։ —
6 Բր. օր. իբրև լուսոց զյուղոց հօրն։

նառք ինողին յԱրուշեթէ և յաւագաց քաղաքին։ Եւ զի կայր քաղաքն ՚ի մեծի վտանգի ՚ի հրուզաց, ետ ՚ի նա Էրուշեթ¹՝ խնայելով ՚ի քրիստոնեայն, և ևս առաւել յորդին իւր յիւանէ, զի մի՛ կորիցէ ՚ի յաճախ մարտիցն. և ինքն անցեալ գնայ ՚ի տուն իւր։ Խակ Փատլուն²՝ որդին Ապլսուարայ, բարիդը խնամարկեալ քաղաքին և ամենայն սահմանացն՝ արիարար ջանացեալ՝ արար խաղաղութիւն, առ և զ՛յուին և զԳանձակ և եղեւ անուանի։ Եւ զի կամեցաւ ձեռնարկել՝ ի սուրբ կաթուղիկէն, զկնի երից ամաց եղեւ ՚ի վերայ (նորա³) արհաւիրք ՚ի խոցոտմանէ հրակերպ արանց, որք ելանէին ՚ի բանալեաց եկեղեցւոյն՝ զոր առեալ էր ՚ի սպատաւորէն Գրիգորյ⁴ և ՚ի վաղիւն կամէր կողոպտել ՚ի զարդուէն, զոր նոր զգեցեալ էր առագաստն երկնաւոր զկնի վաթսուն ամաց սգոյն։ Յորմէ տեսլնէ հիւանդացեալ և աշաբեկեալ ՚ինդրեաց աղօթս ՚ի Գրիգորյ՝ հանելով զնա ՚ի բանդէ կապանաց, յորում կայր։ յաղագս զի ՚ի կարծ աւուրսն զնացեալ էր նա ՚ի Ա իրապն և ՚ի դառնալն ՚ի Վուլին՝ տեսեալ զահագին ժողովն Խուլքարաց յոգնախուռն բանակին՝ աղաղակեաց և ասաց. «աւրհնեալ է Վրիստոս Ատորւած որդին Աստուծոյ», զոր սովոր էր օր ըստ օրէ առնել յլնի. քանզի աղօթակից ընկերն ասաց ընդ կատակս յականջս նորա, «եթէ ահա տեղ է աւրհնեալ զՎրիստոս»։ Ա ամ որոյ կապեալ զնա և տարեալ ՚ի Փատլուն՝ եղաւ ՚ի զնդան երեկորին՝ կամեցեալ ՚ի նմին

¹ Աեր օր. ՚ի նո եր Աղուզել. — ² Բ. օր իմ Փոլոսն. — ³ Աեր օր. զնէ երէն անց եղեւ որհուէր ՚ի խոցունոն. — ⁴ Բ. օր. զոր ունել եր ՚ի սուրբ սովորութին։

գիշերի սպանանել։ Եւ տէր պահեաց զնա այսպէս։
Են և վարդապետք յայնմ ժամանակի Յոհաննէս,
որ և Աարկաւագ՝ ի գաւառէն փառիսոսոյ ի քահա-
նայական ազգէ, որոյ յիշատակ ձառագայթիցն փայ-
լին մինչեւ ցարդ ի բանս իւր — և ի նմանէ աշակեր-
տեալն՝ Երեմիա, որ և Անձրեկի՝ զամն երեսուն չո-
րակեր եղեւ և այնչափ հլու վարդապետին իւրոյ, որ ի
սաատելն երբեմն՝ «Թէ լրու լեր», զամն երիս ընդ այլ
մարդ չխօսեցաւ, բայց եթէ ընդ վարժիչ իւր ի կա-
րասիս։ — և Աամուկէ երկէ Ենեցին, որ զգաւաղանսն
յօրինեաց Քրոնիկոնին²։ — և նախ քան զսոսա Ենա-
նիա, որ զԱռաքեալն համառօտեաց հրամանաւ կա-
թողիկոսին Պետրոսի՝ Աանահնեցին։ Խակ սուրբ վար-
դապետն կացեալ ի ժիր մշակութեան՝ զաւուրս իւր՝
հանգեաւ ի հինգ հարիւր վաթսուն և ութ թուին։
և զինի ամի միոյ լծակիցն իւր Ելաւկայ որդին՝ Դա-
ւիթ, որ կանոնքն էր զիւրահաս։ — և Խռոքակերայ
որդին՝ կոչեցեալ՝ աշակերտ նորին, և այլ արք Տրդ-
նաւորք ի յԵղուանս՝ որպէս Պետրոս Խոնթկայ որ-
դին և Յակոր սքանչելին։ որ յաւուր միում տեսեալ
զսատանայ հեծեալ յուս կրօնաւորի միում³, որ գայր
ի խոստովանութիւն։ և ի մօտելն մորակեալ զնա և
խոթմոթեալ անդրէն դառնայր որպէս փախստական⁴։
Եւ նա հրամայեաց սպասաւորին ընթանալ զինի և

¹ Յերկոսին օր. որ և Անյեմի, որ զամն երեսուն ըբուիր ենւ, և այ-
լու հու եվալ քարդապետին իւրոյ, որ և ի առարելն երբեմն՝ ըստ իւր։ —
² Յերկոսին օր. և Սամակէ երեւ ունութէ, որ զիստուզոնն յօրինեց
քանիւնքն անեցին։ — ³ Որ. օր հեցւու ի մէր ՀՀ-իստիւտ։ — ⁴ Մեր օր.
և Թորուիրոյ որդին։ — ⁵ Որ. օր. հետեւ յոյն քրնառութ գնաւ։ — ⁶ Որ.
օր. և խոնցութեալ անդրէն որպէս քախորական։

բերել առ նա բոնութեամբ¹։ Եւ հարցեալ զնա՝ ասաց. «առ քեզ զղացեալ գամ յապաշխարութիւն², ելիշելով զսովորական գործն³ դարձայ ՚ի քէն»։ Եւ սուրբն պատմեաց նմա զոր ետեան. և նորա լուեալ անկաւ. յոտս նորա⁴ և խոստովանեալ՝ առ զլուծն ապաշխարութեան։ Են և կանայք թագաւորազունք կրօնաւորեալք⁵ կուսութեամբ ՚ի ՚որպայըն — Խորասուե Մարիամ, առ որս գրէր⁶ սուրբ վարդապետն Ապահաւագ զգուշական խրատս։

՚Ի հինգ հարիւր եօթանասուն և ինն թուին խռութի՝ որդի Ազին, գայ ՚ի ՚ուուին և տիրէ՝ վիրաւորեալ ՚ի պատերազմին զՓատլուն⁷, զոր նենգիչք ոմանք գաղտ խեղեցին՝ պատճառելով զվէրն որ չէր մահու⁸։ Եւ առ զամիրութիւնն կրտսեր եղայրն Փատլնոյ՝ ՚ուուշէրն. և զինի սակաւու աւագն Մահմուտ⁹։ Եւ անկաւ դարձեալ ՚ի թշուառութիւն երկիրն Ենոյ։ — ՚Ինոյն ժամանակաց ոչ հեռագոյնսինչ՝ կամեցաւ իւանէ, որդին Եպուլէթի, սպանեանել զյուեմետրէ և զեղբայր իւր՝ զ՚որդի. և նորին հայրն Եպուլէթ փետելով զալիսն¹⁰ առաջի նորա՝ արգել զնա։ Եւ էին երկոքեանն արգելեալք ՚ի բերդն ՚ումանեաց պատճառանաւք ինչ խարէսութեամբ ՚ի մէջ եղարց, զոր ապա իմացեալ ՚ուեմեարի՝ ասաց ՚ուանէ. «կալար զիս՝ մամ»։ Եւ նա զղացեալ ասաց. «ոչ՝ ալքայ, այլ ե-

¹ Ուսւմ. օր. և բերեալ — ² Ռ. օր. ոռ ժեզ զցեացեալ յարուշաբարսնեան։ — ³ Մէր օր. և յէլեու զավորախան հորժն։ — ⁴ Ռ. օր. և լոկուանիւսն յարու նորա։ — ⁵ Ռ. օր. էին և յանայ բակտուուզանք իւնասուր յասաւթեամբ։ — ⁶ Մէր օր. ոռ որ էրեր։ — ⁷ Ռ. օր. զՓատլուն։ — ⁸ Ռ. օր. զոյ չեր մոհան։ — ⁹ Ռ. օր. և զնէ սոյսոս Սոհնուրն։ — ¹⁰ Ռ. օր. Ադուլեն ինտերէ զոյն։

տու ՚ի ձեռս քո զեղբայր քո, որ ինդրէ զթագաւորութիւնդ » . զոր ըմբռնեալ խաւարեցուցանէ և թողու : — Քորում ժամանակի լցաւ դաշտն Գաղպայ՝ անթիւ և անհամար հեծելովք՝ յամենայն աղգաց յանօրինաց հաւաքեալ, որք կամեցան այրել զսուրբ խաչն, որ յանուն զօրավարին Արդսի : Եւ ՚ի բարկութենէ Տեառն խելացնորեալք՝ և դիւացեալք՝ կոտորէին ըզմիմեանս³ . զոր լուեալ Դեմետրէ՝ երթեալ ժառանգէ անաշխատ զկարասիս նոցա : — ՚ի սոյն աւուրս պատանի մի յեղալցն Փատշնոյ, լուեալ եթէ հան նորա՝ Կատայ, ՚ի տանէ Ռազրատունի՝ քրիստոնեայ էր յազգէ թագաւորացն, խաղաց հոդի իւր ՚ի սէրն Վրիստոսի . և երթեալ ՚ի լսառն սրբոյն Գրիգորի՝ մկրտեալ կրօնաւորեցաւ անդ զամն հնգետասան մեծ ճգնութեամբ և հսկմամբ գիշերաց, մինչ զի տեսանէին լոյս անձառելի փայլատակեալ⁴ բորբռքեալ ընդ երդս խրցկանն : Եւ զինի գնաց ՚ի Դրաղարին և փոխեցաւ ՚ի Քրիստոս :

՚Ի հինգ հարիւր ութառուն թուին Դւանէ՝ որդի Եպուլէմի, ասպատակեաց ՚ի Դրառնի, և հարան զօրք նորա ՚ի Խուրթէ . զորոց կտրեաց զգլուխս՝ եփեաց⁵ ՚ի թան, և զգանգսն դնէր ՚ի բարձրութեան մնիրային ՚ի շարս քարորմոցն : Եւ ՚ի գալ միւս ամին սպանաւ քաջըն Դւանէ նենգիւ ՚ի Դեմետրէէ . և որդի նորա՝ թմիրքաշ, գնացեալ յամիրապետն Շահի արմէն և առեալ

¹ Մեր օր. յրաւում խամանակ լցաւ դաշտն անիւն : — ² Որ. և ՚ի բարձրութիւնն ՚ի իւլցն ցնութելը և դիւացեաց : — ³ Որ. օր. Խորութեան զիմունն : — ⁴ Որ. օր. ՚ի լուսու որբոցն Գրիգորի : — ⁵ Որ. օր. Գնւ զի դիմունն լոյս անմուռելի բորբռքեալ : — ⁶ Մեր օր. ընդ երդս իւցանն : — ⁷ Մեր օր. զոյ իրեւ զէլստին եկեաց ՚ի բռն :

՚ի նմանէ զԱրշարունիս¹՝ աւերէր զտունն Վ բաց մեծաւ քաջութեամբ:

՚Ի հինգ հարիւր ութառն և ութ թուին կործանեցաւ Գանձակ՚ի շարժմանէ: Խօֆն ամաւ նախ քան զայս Ծ ահի արմէն տիրեաց երկրին Խլաթայ և այլ բաղում քաղաքաց, որ էր թոռն Առոքմանայ: Եւ ըսպան սա զհանիկն իւր, որ սպանեալ էր զորդիսն, և կալաւ զիշխանութիւնն: Եւ իրրև զարգացաւ սա՝ կամեցան և զսա հեղձուցանել, որ և վերծեալ Աստուծոյ ածողելոյն և տիրեալ երկոտասան քաղաքաց՝ կոչեցաւ թագաւոր Հայոց, որ էր Ծ ահի արմէն՝ ըստ իւրեանց լեզուին. որ և փեսայացոյց ինքեան զԱյլտուկս և խորհեցաւ նովաւ բարի առնել աշխարհի: Յօրում ժամանակի էր և Ելտկուզ աթապէկ². Նովին բարի կամաւք յԱստուծոյ եղեալ երկրին սոքա քրիստոսաւէլք և աշխարհաշէնք: Այս Ծ ահի արմէն գնացեալ՝ ի Աստունս՝ յօրանայր՝ ի գեղե միում: Եւ լըմեալ Վ իդենայ տեառն երկրին՝ երթեալ՝ ի գիշերի միում պատէր զտունն, յորում կայր. և յասեն ումեմըն ընդ կատակս³. — «այ Ա իդէն՝ ո՞նք ես». ետ պատասխանի ընդ երդն և ասէ. «կամ աւասիկ շնորհաւքըն Աստուծոյ»: և կալեալ տանի զնա յամուրն իւր և զկնի աւուրց արձակէ ուխտիւ և երգմամբ սիրոյ: Յօրում աւուրս ել՝ ի վերայ նորա զօրավարն Պարսից Ելտկուզ, և հարեալ գնաց ամօթով. սա էառ զԱմաւկ՝ ի Հետենկայ և Աստունք՝ ի Վ իդենայ ամենայն վանօրէիւքն պահէր՝ ի խոր խաղաղութեան զամն վաթ-

¹ Մեր օր. և առեւուլ՝ է նաև զԱլաբանիս: — ² Ո. օր. յօրում ժամեմէնն էր իւրեւուլ Տիւուլ Ալուսին: — ³ Մեր օր. և յասեն ո՞նք է ի վարչուս:

սուն։ Յառուրս սորա եղեւ սով սաստիկ՝ ՚ի Միջա-
գետս. և քահանայ մի աւետարան ունէր՝ Նայ ազ-
գաւ, բարձեալ ցորեան իշոց՝ տանէր աղալ՝ ՚ի ջաղա-
ցորն. և 'ի տեսլենէ տառապելոցն աղէխարշեալ բաշ-
խեաց զամենայն աղքատաց և զէշն վաճառեալ՝ նոյն-
պէս արար, և այլ ոչ դարձաւ¹՝ ՚ի տուն իւր . այլ ըգ-
գեցեալ այծեայս՝ շըջէր քարոզութեամբ ընդ քաղա-
քըս և ընդ գեզս քրիստոսարար, զի ունէր բանս հան-
ձարեղս։ Եւ ետ նմա (աստուած) շնորհս նշանաց. և
զղացեալք՝ ՚ի բանս նորա՝ դառնային բաղումք՝ ՚ի չա-
րեաց. և խնամմ ածէր օրբոց և այրեաց՝ լով զկարիս
նոցա իւրով միջնորդութեամբ՝ ՚ի կարողացն։ Եւ ել
համբաւ զնմանէ, և գային յարենային՝ ՚ի նա յոլովու-
թինք ժողովրդոց. և եկն մինչ՝ ՚ի Մանծկերտ։ Եւ
ել ընդ՝ առաջ նորա ՝ ահի արմէնն մեծաւ հանդիսիւ,
և խնդրեաց՝ ՚ի նմանէ արջես, և եմիջ պատուվ՝ ՚ի
քաղաքն։ Եւ զի յանդիմանէր զպոնիկ քահանայ-
սրն՝ քսեցին զնա առ ՝ ահն, թէ լրտես է հոռոմ
թագաւորին՝ և ետուն քարկոծել զնա. յորոյ վերայ
տեսին լցոս երկնային զերիս տիւս և զերիս գիշերս. զոր
տեսեալ շահն աւաղեաց զմահ սրբյն և ետ հրաման
պատուել զոսկերս նորա։

՚Ի հինգ հարիւր իննսուն թուին եկն Պերփերու-
ժանն և առ զլիթիկիս և տարտ տամբ իւրով ըզ-
լ ևոն եղբայր թարոսոյ և զպատկիր Տիրամօրն՝ ՚ի կոս-
տանդնուպօլիս. և անդ մեռաւ լ ևոն որդին կոստան-
դեայ²։ Եւ զինի երկու ամաց մեռաւ Փերուժէն և

¹ Որում. օք. և ու դարձաւ՝ ՚ի դուն իւր։ — ² Ու. օք. և անդ մրու-
սոցն կոստանդիոյ։

առ զթագն Կիո Մանիլ՝ որդի նորա . և 'ի նոյն ամի
մեռաւ թագաւորն Երուսաղեմի — երկրեան սոքա
'ի յորսի որոգայթեցան՝ վասն խոզի թագաւորն Յու-
նաց և վասն նապաստակի՝ թագաւորն Երուսաղեմի:

'Ի հինգ հարիւր իննառւն և չորս թուին Զանկի
ամիրայն էառ զլւոհայ . և զկնի երկու ամաց էառ
զնա Թօսինն , որ էր տէր նորա . և զկնի եօթանա-
սուն աւուր սպանաւ 'ի թուուրքաց , որք եկին վերս-
տին առին զքաղաքն : Եւ մեռաւ քաջն և յոյժ հա-
յասէրն , որում արար ողբս Գէորգ վարդապետ , որ
հայր էր խոստովանութեան նորա : Խսկ 'ի վերանալ
թուիս Հայոց 'ի վեց հարիւր ամն եկին որդիկն Լեռ-
նի՝ թորոս և Ատեփաննէ , և մեծաւ իմաստութեամբ
և քաջութեամբ տիրեցին հայրենեաց իւրեանց Կիլե-
կիոյ՝ հարեալ զլնդրոնիկոս զօրագլուխն Յունաց , որ
կայր անդ երկոտասան հաղարաւ . զոր լուեալ Մա-
նիլն՝ 'ի վարձու կալաւ ⁶ միանգամ և երկիցս զլՄա-
սուտ սուլտանն առնուլ զքէն վրիժուց նորա . որ և
յերկրորդումն սուլտանին անկաւ ահ Տեառն 'ի վե-
րայ նոցա և փախսեան առ հասարակ՝ զմիմեանս սատա-
կելով , անդէն թողեալ զենաւ արարս իւրեանց . քան-
զի Եաղուր՝ զօրագլուխն նոցա , կամեցաւ գնալ երեք
հազարաւ յլնաւարզայ 'ի կողմանս Ենտաքու . յորոց
վերայ անկեալ Ատեփաննէ՝ եղբայր թարոսին , սատա-
կեաց զամենսեպին : Եւ 'ի լսել զճայն գուժին դողա-
յին առ հասարակ , և ոչ մնաց շունչ զօրութեան 'ի
նոսա : Եւ հաղիւ զերծաւ սուլտանն՝ անկեալ 'ի յոր-

¹ Մեր օր . ար ըստ-էւ Մ-ակն 'ի Հոբյու ի-լու :

ջըս իւր սատակի, տալով զպատիւն Խլիճ՝ ասլանայ՝
որդոյ իւրոյ:

՚Ի վեց հարիւր չորս թուին —՚ի նմին ժամանակի
առին ֆռանգքը զլսկալոն քաղաքք: ՚Ի սոյն ժամանակս
եկն Մանիխն ՚ի Խիլիկիա և սիրով նուածեաց զիւո-
րոս, և առեալ զնա և զամենայն գօրս ֆռանգքաց՝ գնաց
՚ի վերայ Հարպայ: Եշ լուեալ համբաւ յաթոռոյն՝
դարձաւ ՚ի տուն: և ծայրաքաղ արարին ՚ի նոցանէ
Խառըքն երկոտասան հազարս ՚ի ճանապարհին: Դակ
թագաւորն Ալբաց Ղեմետրէ կալեալ զթագաւորու-
թիւնն ամսն երեսուն և երկու՝ վճարի: և առնու ըզ-
թագն Ղաւիթ՝ որդի նորա, կորովամիտ և բարեսէր.
և հանեալ ՚ի բանտէ զիւկիբաշն զջօրն կապեալն, զնէ
զօրագլուխ և զինի ամսոյ միոյ մեռանի¹: — ոմանք ա-
սեն՝ ՚ի դաւելց Որբելեանց² ՚ի Ամբատէ և յլաւանէէ վա-
սրն՝ ՚ի տեղի նոցա զնելց զթիվրաշն՝ բանս եղեալ ընդ
Գհէրգայ եղըօր Ղաւիթի զնոսա զնել զօրավար: Եշ
առ զթագն Գհէրգի ՚ի թուին վեց հարիւր և հինգ:
— Յաւուրս յայսոսիկ յայտնեցան ՚ի Ծահապիվանս
մարմինք սպանողացն Գհնէլց անփուտ հանդերձիւք
և արիւնաշաղախ մարմնով՝ որպէս և սպանան, ըստ
անիծից սրբոյն Ներսիսի:

՚Ի վեց հարիւր տասն թուին էառ Գհէրգի՝ Ալբաց
թագաւորն, զլսնի ՚ի Փատլուն ամիրայէն, որ փոխեաց
զշատատ եղըայր իւր: Եշ զինի յիսուն աւուր եկն
Ծահի արմէնն բազում հրոսակօք ՚ի վերայ հարուա-
ծեալ և ախտացեալ քաղաքին ՚ի Առնացն: զոր լուեալ

¹ Մեր օք. և զնէ ամոց գոյ գրանէ: — ² Մեր օք. ամանէ ամին ՚ի քա-
ռէ Որբելեանց ՚ի Ալբանէ և յլաւանէ վասն ՚ի գիւղ նոցա զնելց զթիւնէն:

ԳՀորդի՝ անդրէն դարձաւ և եհար զնա կոտորմամբ
սրոյ, զորոյ զմիւն ոչ ոք կարաց զիտել. բայց ձերբա-
կալքն էին քառասուն և մի հազար¹: Եւ թողոյր՝ ի
յԱնի զԱպուն իշխան, յորոյ վերայ կարծիք ապրու-
տամբութեան եղեն՝ ի սրտացաւութեամբ ամրացու-
ցանեն զպարիսպ քաղաքին, զոր իմացեալ թագա-
ւորն՝ ընկենու զնա՝ ի պատույ. և նա սրտառեալ զը-
նաց հատուած առ Ելտկուզն, զոր խաբէութեամբ
կալեալ երիսթամն Շաքէոյ՝ բերէ անդրէն առ ար-
քայ² և մեռանի. և զիշխանն Օքարեան՝ զԱրդիս,
դնէ՝ ի տեղի նորա յԱնի: Իսկ Ելտկուզն զայրացեալ՝
չէր ինչ ձեռնհաս առնել, զի չորս հազար Պարսիկ կո-
րեաւ ընդ Ապունին: Իսկ թագաւորն Աքաց կուտէ
առ ինքն զկովկասային զօրսն և գայ առնու ՚ի Դր-
վին՝ խստագոյն խայտառակելով զնոսա՝ ի սուր և ՚ի
հուր, բաց ՚ի քրիստոնէից որ անդ. և զգագաթուն-
սրն թանեփայս առեալ՝ ի մնիրայէ³ զարդարէ ոսկե-
թել հանդերձիք, և եղեալ՝ ի դադաղս՝ բառնայր
՚ի յուս մուղերաց⁴ և բոկ ոտիւք տայտանել մինչեւ ցր-
Տփիսին նախագահ քաղաքն իւր՝ ՚ի վեց հարիւր երկո-
տասան թուին. զոր լուեալ Ելտկուզն գայ յայրե-
ցեալն և ՚ի քանդեալն Դրուին և խոցոտեալ սրտիւ և
մռմռեալ իրբե զգազան կատաղի գայ՝ ի Արէն⁵ և այրէ
անդ զամրոցն. ուր ողջակիզեցան վասն Քրիստոսի ո-
գիք իբրեւ չորս հազար: Եւ դառնայ՝ ի դաշտ Գագայ
և այրել հրամայէ զիսաչն հռչակաւոր. վասն որոյ՝ ի

¹ Մեր օր. ուսն և ժ հազոր. — ² Մեր օր. բերէ անդին առ արտոյ: —

³ Մեր օր. և զբախթանան յանեփոյ որեւու ՚ի մնիրային: — ⁴ Մեր օր.
՚ի յուս մուղերաց: — ⁵ Մեր օր. գոյ յիշեան:

բարկութենէն Տեառն պատժեալ լինէին 'ի տուէ և
'ի գիշերի 'ի թիւնաբեր՝ օձից, և զինի 'ի թագաւո-
րէն Այրաց ահաբեկեալ՝² փափչի, թողով զկարասին
և զգերիսն անդէն . սակայն գրգռէ զշրովի սուլտանն՝
զորդի Աշահմաւտի զԱսլանն, և ածէ յԱնի և զամն
չորս պահէ 'ի տառապանս անվար և անհանգիստ՝
մինչեւ թագաւորն Այրաց Գհերդի՝ ողորմելով քա-
ղաքին՝ կոչէ առ ինքն զսուլտանն՝ զորդի Աշահմաւտի
զԱսլան, և տայ 'ի նա զԱնի . զի անձամբ չէր ձեռնհաս
պահել 'ի բազմութենէ անօրինացն: — Յայնմ ժա-
մանակի աթոռն Հայոց շրջեալ 'ի բազում վայրս 'ի
Կարմիր վանքն և 'ի Շուղըն և 'ի Օռովքն՝ գնացեալ
դաշտարէ 'ի Հռոմ Ալայն կոչեցեալ դղեակն՝ վասն Հռ-
ոմ արեղայի ասեն անդ բնակելց, յորմէ առին Տա-
ճիկք, և 'ի նոցանէ Ասիլիշխանն Հայոց, և 'ի նը-
մանէ առին Փռաննիկք: Եւ 'ի յորսի պատահեալ իշ-
խանն՝ որոգայթիւ մատնի 'ի ձեռս Տաճկաց³, զոր տա-
րեալ 'ի Հայապ՝ մեռաւ անդէն: Եւ կին նորա, որ 'ի
Հռոմ Ալայն՝ առաքէ 'ի Օռովքն և բերեալ զպատրի-
արգն՝ տայ 'ի ձեռս նորա, ասելով. «Եթէ կայ որդի
իմ յայնկոյս ծովուն առ ծնողն իմ, երթամ՝ եթէ
լինի կենդանի, առաքեցից առ քեզ և տուր 'ի նա⁴՝
որպէս ճշմարիտ աւանդապահ, և եթէ ոչ՝ լաւ քեզ
քան օտարաց:» — Եւ գնացեալ՝ առաքէ զորդին. ո-
րում տուեալ ինչս յողով՝⁵ դարձուցին անդրէն . զի և
ինքնու վստահանայր միայն բնակիլ 'ի մէջ այլազգեաց,

¹ Աւր օր. 'ի նօհոբէր օյն: — ² Աւր օր. և զինի նոգուուրին Աքոց
ահաբեկեալ ժոկիք: — ³ Աւր օր. որոգայթիս մատնի 'ի յորս Տաճկաց: —
4 Որ. օր. և դաւր նա: — ⁵ Որ. օր. յորում դուեւր ինչ յուլու:

քանդի տիրեալ էր թուլքն բոլոր շրջակայ գաւառաւ-
ցրն։ Եւ սեպհականեցաւ աթոռ ձայրց, զոր բարե-
պաշտ կինն ֆօլին իշխանին՝ շարժեալ 'ի հոգւոյ՝
ետ յերկոսեան հարազատան — 'ի տէր Գրիգոր և 'ի
Ներսէս : — 'Ի վեց հարիւր եօթն և տասն թուին կա-
տարեալ տէր Գրիգոր՝ յաջորդէ՝ զաթոռն տէր՝ Ներ-
սէս։ Առ սոսա առաքեաց Մանիլն վասն հաւատոյ
դաւանութեան . և ետուն զրով յոյժ կորովին հա-
ճելի ընաւից դաւանութիւնս, զոր ունիմք . և կամե-
ցան միաբանութիւն առնել ազգացս՝ և մնաց գործն
անկատար, որպէս ցուցանեն ընդարձակ մատենագիրք։
'Ի նմին ամի ահազին շարժ եղեւ և կործանեցաւ Եղ-
ընկայն 'ի գաւառին Եկեղեաց³ : 'Ի սոյն ժամանակի
առան և մնացեալ զղեակք Կապանին յայլազգիս՝ —
Գրհամ և Գեղեղ և Կաքաւաբերգ վասն սաստկա-
ցեալ մեղաց մերոց։ Յորում ժամանակի և միսիթարու-
թիւն քրիստոնէից գեղեցիկ պտուղն հասուն և քաղ-
ցրածաշակ՝ պատանին Յովսէփ, վկայեաց Գրիստո-
սի աստուածութեան և վշտակտուտ չարչարանաւք
և աշխարհալուր մահուամք կատարեցաւ 'ի Գրիս-
տոս յամնեանն աշեկի 'ի քսան՝ և թաղեցաւ 'ի ձա-
ւութառ . որ էր Պարսիկ ազգաւ 'ի գեղջէն, որ Նո-
րաշէն կոչի 'ի սահմանս Դունայ։ 'Ի սոյն աւուրս և
Գեորգ Եշիկայ 'ի գնալն իւր 'ի ձռոմ յարոյց 'ի մե-
ռելոց զառաջնորդն իւր զԳրիգոր, զոր սպանին յե-
լուզակք 'ի գաւառին Ունկուաց⁴ . — որ և մեղադրէր

¹ Ուում. օր. Բորեկուուլ լին քունին էլուունին : — ² Որ. Լորուրիու-
թէր Գրիգոր աւորէ զմբուռն : — ³ Մեր օր. Խորենեցու Եղիոյն 'ի գո-
ւունին Եկեղեաց : — ⁴ Մեր օր. 'ի Քուստին Ռանիուաց :

նմա, «եթէ ընդէլյ յանձառելիքարութեանցն, յորում
կայի՝ դարձուցեր զիս վերստին՝ ի թշուառութիւն կեն-
ցաղոյս¹: Եղեւ նշան՝ ի ոռումայրն՝ ի հռչակաւոր սուրբ
նշանէն². — ածեալ մանուկ մի կոյր՝ ի ծնէ և եղեալ
՝ ի վերայ աչաց տեղւոյն զրէնն ասատուածամուխ՝ նոյն-
ժամայն պատառեալ աչացն տեղւոյ և հոսեալ բա-
զում արիւն՝ կազմեցան աչքն անդալատ ամենեին՝ ի
փառս Աստուծոյ³: Եւ էր՝ ի յլլանայ՝ ի օր վանիցն
Պետրոս անուն՝ ի լինել գործոյն⁴:

՚Ն վեց հարիւր քսան և մի թուին կատարեաց
պատրիարգն ՚Ներսէս զվարս իւր՝ եօթն ամ. պաշ-
տեալ զպատիւն եօթն եպիսկոպոս ձրի՝ արք անուա-
նիք և լաւք — վարդապետք և փիլիսոփայք⁵: Եւ առ-
նու զքոյն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնտուութեամբ
նորին. և միւս եղբօրորդին Գրիգորիս, որ և Ապի-
րատն կոչէր՝ չոգաւ՝ ի Լամբրօն և խնամէր զՃարսոնի
վիճակն:

՚Ն վեց հարիւր քսան և երկը թուին⁶ էառ Գէ-
որդ զԱնի երկրորդ անգամ՝ ի սադրելոյ Խւանէի ա-
միր սպասալարի, զի ինքն նստցի՝ ի նմա և արասցէ
գերէդարձ քրիստոնէից. և զՇ աշնշահ ամիրայն տա-
րաւ ընդ իւր արքայն և այլ ոչ ևս դարձաւ անդրէն:
Եւ լուեալ զայս ամենայն թռուրբաստանեաց⁷ հաւա-

¹ Ուում. օր. յանձառելյ բորսութեանց դարձուցէր զի՞ ՚ ի լուսաւութիւն
ինցաղոյս: — ² Մեր օր. եղեւ՝ ի Հոռոմայրն՝ ի հուշուուր սուրբ նշանին: —
³ Որ. և հեղուս արիւն բոլուս՝ յաղիցուն ուշն անիսուոդ ամենեին: —
⁴ Յերկոսին օր. և էր՝ ի յունեայ և հօր լւնէցն Պետրոս էր անուն՝ ի լւ-
նէլ էործոյն: — ⁵ Յերկոսին օր. պաշտուլ զդատիւն և խթն եպիսկոպոս նըն:
որդ անուանէիւ և լուս, որ վարդապետ և փիլիսոփայ: — ⁶ Որ. ՚ վեց
հորիւր ժողով և վեց նամին: — ⁷ Մեր օր. ամենայն թռուրբաստանց:

քեցան՝ի մի, զԵլիփասլանն կոչեցեալ սուլտան ընդ ին-
քեանս առեալ՝ գան՝ի յԵնի և աւերեն զտուն Շ ի-
րակայ։ Իսկ Իւանէ կամեցաւ տալ զքազաքն՝ի թուր-
քըն¹ և ոչ աջողեցաւ գործն, զի իմացաւ քաղաքն
և զգուշացան։ և զնաց սուլտանն և աթապէկն իւր
սրտախոցեալ՝ և մեռան երկոքին՝ի միում ամի²։ 'Ի
նմին ժամանակի ել՝ի բանտէն Կարուց մեծ իշխանն
Ապիրատ և եկն յԵնի։ — սա եղբայր էր եպիսկոպոսի
քաղաքին՝ տեառն Ռարազի, որ աղաչեաց զթագա-
ւորն Ա բաց և ետ փոխան նմա ամիրայ։ և առ զնա և
եօլն և տասն հազար դաշեկանս։ Յայնմ ժամանա-
կի յայտնեաց Իւանէ զչարութիւն իւր։ — զեղօրոր-
դի թագաւորին զԴ-էմնէն³ և զոլովս յազատացն յին-
քըն յանկուցեալ՝ խորհեցաւ սպանանել զարքայն մինչ
կայր՝ի Աախատա⁴ յանհոգս։ զոր իմացեալ յառնէ
միոջէ՝ փախեաւ՝ի Տփիսիս, զի սակաւամարդ էր։ Եւ-
անդ Աստուծոյ ինամաւըն հաւաքեցան առ նա բա-
զումք՝ թողլով զչար խորհուրդն։ Եւ յորժամ ու-
ժացաւ կողմն արքային⁵ և կամէր զնալ՝ի վերայ ա-
պստամբացն ողք՝ի Աախամթէ փախեան յամուրս իւ-
րեանց, և ապա մտին՝ի Լուէ՝ բաց՝ի Լիպարտէն,
որ չոգաւ՝ի Պարսից կողմն երկու որդւովք։ Եւ էառ
թագաւորն զամենայն գանձս Օրպէլեանց, և ամենե-
քին դիմեցին և անկան յոտս թագաւորին — եղօրոր-
դին և ընդ նմա այլքն՝ մինչև ինքն իսկ Իւանէ, զո-

¹ Ուում. օր. ի-մեցաւ դուլ զչողուցն և աւ աղողեցաւ։ — ² Որ. մուռան
երկուինքն՝ի մուռ ոդ։ — ³ Մեր օր. զԴինմէն։ — ⁴ Որ. օր. Փնւնոյ՝ի
Ս-հարուց յանհոգ։ — ⁵ Մեր օր. և յորժամ յափարացաւ իոզմ ոբայցն։

ըոյ զաշմն կուրացոյց, և զիրասեր որդի նորա¹ գլխավ-
թար և զինէն՝ զորդի Լիպարտի, ապան և ոչինչ ե-
ղեն չար խորհուրդքն ամենայն:

'Ի թուին վեց հարիւր քսան և վեց այլ զլամփաս-
լան սուլտանն փոխեաց Տուղթի², և զլալուկուզ՝ Փալ-
հաւանն, որ տիրեաց խորին աշխարհին և Խոզլաս-
լան³ վերին աշխարհին, որք էին որդիք նորա: 'Ի նոյն
աւուրս առաւ Ծառաքար ՚ի գողոց հրամանաւ Խա-
րացայ ամիրային Կէջրորոյ⁴, որ վաճառեաց զնոսա
Խոզլամնայ ընդ բազում ոսկւոյ: Եւ նա բնակեցոյց անդ
արս մնասակարս, որք ոչ դադարէին յարեան հեղու-
թենէ ՚ի տուէ և ՚ի գիշերի՝ մինչեւ գքրիստոնեայս ՚ի
խաւարային անդունդս ընկղմեալ՝ սովոր և գարշա-
հոտով ՚ի յառաջնոց մեռելոց սպանանէին⁵, որ և
եօթն կրօնաւորս անուանիս դառնակիիծ վերօք ընդ
կատակս խաչանիշ հարմամբ դանակաց՝ փողոտէին.
որոց պատիւ տօնին⁶ խառնեսցի ՚ի տօն մեր՝ Ի ու-
սաւորչին Գրիգորի:

'Ի վեց հարիւր քսան և եօթն թուին թագաւորն
Երուսաղեմի երեք հարիւր ձիաւորով և հար զլալա-
հաղին՝ ի դրանն Երուսաղեմի զօրութեամբ սուրբ խա-
չին. որ եկեալ էր առնուլ զլարուսաղէմ հարիւր քա-
ռասուն հազարաւ՝ բարձեալ ընդ ինքեան ջուր վաթ
սուն հազար ուղտօք, որ միշտ կրէին ՚ի գետոց և յաղ-
բերաց: Յառաջ Ուսոյթ էր անուն նորա՝ որդի Եւու-

¹ Մեր օր. և զիրասեր եւ բարորդի նորա զբավեար: — ² Մեր օր. այլ
զԱկատուն գիշեաց 8-ուշիւ: — ³ և Խոզլան վերին ու խորհին: — ⁴ Մեր
օր. ակրային կերպոյ: — ⁵ Մեր օր. առվակ և գորշահոր յաստանց մեռելոց
սպանանէին: — ⁶ Մ. օր. որ պարտիւ ունի: — ⁷ Մեր օր. խորհուցիւ ուն հր
ըստուրուն Գրիգորի:

բի, առն տառապելոյ Դունացւոյ¹ . որ և 'ի մեծանաւ-
լըն կոչեցաւ Ավահաղին, որ է խռովունիւն հասարայ:

'Դ վեց հարիւր քսան և ինն թուին² Գհէորդի ե-
րարձ զգող և զաւազակ յերկրէ . զի ամենայն զօրացն
'ի միասին եղելոյ օրինադրեաց կախել զփայտէ վասն
փոքու և մեծի իրաց անողորմ զամենայն մարդ³, և
յոլովք 'ի պատուաւորաց կախեցան: Եշ զգտեալ ին-
չըս տանեին կախել զփայտէ պատուհասից . և կախե-
ցին մինչեւ յանասուն և ցշուն և ցմուկն, և անկաւ ահ
'ի վերայ ամենեցուն . և եղեւ մեծ խազաղութիւն: Յայ-
նըմ ժամանակի մեռաներ Մանին և կին նորա, զի
դուստր էր բրնձին Ենտաքու և կամեցաւ ֆուանգ այր
առնել և սպանանել զորդին իւր զլուէքս, որում տը-
ւին զթագն . և փախեաւ տղայն յեկեղեցին: Եշ ազդ
առնեն Ենդրոնիկեայ ազգականին Մանիլի, — եւ դայ
սպանանէ զլիւաստոսն, որ կամէր առնուլ զթագու-
հին, և զազգն ֆուանգաց որ էին 'ի քաղաքին կոտորէ .
և որք 'ի նաւ մոնեալ փախչէին՝ նփատ ձգեալ 'ի նաւ-
սրն, այրեաց երեսուն հազար այր⁴, սպան և զտղայն՝
և առ զթագն: Եշ առաքեաց կոչել զայր մի թագա-
ւորացն՝ Փիսիկ անուն, զի և զնա սպանցէ . և նորա զո-
րացեալ սպան զկոչողն և մեծաձայն գոչմամբ երթայ
'ի սուլրն Ոսփի . և շարժեցաւ քաղաքն և չարամահ
սատակէ զլոնդրոնիկոս, և զերկու որդիս նորա անմեղ
մանկունս ծովամոյն արարին:

'Դ վեց հարիւր երեսուն և մի թուին Խարաչայն,

¹ Մեր օր. առն բարուապիւս Դ Ասոց: — ² Մեր օր. 'ի վեց հարիւր գու-
ստան և ինն բաւին: — ³ Մեր օր. անզոր զամենայն երիս հարիւր լուս և
յուլու 'ի պարուասորացն: — ⁴ Մեր օր. երեսուն հազար արտեց:

որ էառ զ՞օռառաքար և խորտակեաց կռանով զիսա-
ըն՝ Գորոզոյ խաչ կոչեցեալ, անկեալ՝ ի սիրտ նորա
արհաւիրք երկիւղի՝ թողույանկարծակի զտուն իւր,
զկէըրոր և զլւկստիս և զամենայն ձորն Երասխայ¹,
և երթայ կնաւ և որդւովք՝ ի՛ Դուրին: — Եւ տեսանէր
այր մի ահաւոր, որ ասէր ցնա: «Ես եմ խաչն Գո-
րոզոյ, զոր կոտրեցեր². և ահա սպանանեմ զքեզ ձեռքք
սիրելոյն քո՛ ահի արմէնին»: — և պատմեաց զտեսի-
լըն: Եւ վաղիւն զնաց՝ բռնութեամբ զերծեալ, թէպէտ
արգելուին զնա վասն երկիւղի տեսլեանն՝ մինչև փակե-
ցին զդուրմն: Այլ նա ընդ պարիսապն իջեալ՝ երկու
Ծնիփով չոգաւ՝ ի Ամանծկերտ և եկաց առաջի շահին.
որ և նոյն ժամայն յարուցեալ՝ եհար զդանակն ընդ
սիրտն և սատակեաց զնա: — Դ նոյն ամի Արդիս ոմն
խաչնեցի կայր ՚ի Գանձակ և առնոյր խարած. և ոմն
Պարսիկ՝ ՚ի յաւագ ուրբաթուն խաչեաց զնա ընդ պա-
րիսապն ասելով. » խաչակից լեր «Քրիստոսին քում»³.
զոր լուեալ իշխանկն նորա տարան առ ինքեանս ըղ-
Պարսիկն և չարամահ սպանին: Դ սոյն աւուրս և Յոր-
դանան ոմն ՚ի տաճիկ տոհմէ վկայեաց մեծ հանդիսիւ
՚ի Լարնոյ քաղաք: Եւ եղան նշխալք նորա ընդ Յով-
սեփայ և ընդ Աահակայ ազգականաց իւրոց:

Դ վեց հարիւր երեսուն և երկք թուին մեռաւ Գէ-
որդի՝ Արաց արքայ, և ոչ գոյր նորա որդի. և Գէմ
նայն յաշաց և յերանաց յապաւած էր՝ որդին ՚Իաւ-
թի⁴: Եւ առնու զթագն դուստր նորա՝ Թամարն,

¹ Որում. օր. և զամենայն դառն Երասխայ: — ² Մեր օր. զը յորե-
ցիր: — ³ Որ. օր. իուլիու լեր մոդ Քրիստոսին ժում: — ⁴ Մեր օր. յո-
ւուս ունիր զորդին դառնի:

բերեալ նմա այր որդին Ուզեց աղքային՝ զԱռալան, որ
առ զԴուկին քաղաքը ԽՀ-ի գալ միւս ամին մեռաւ
չ աշխ արմէնն անորդի. և աւեր և սուր և գերու-
թիւն բազմացաւ աշխարհաց նորա 'ի շրջակայ ազ-
գացն: ԽՀ զի թուն՝ Ա ի իգենայ Շ ահնշահ, քեռորդի
տեառն Գրիգորի կամոզիկոսի առընթեր կայր մահ-
ուան Շ ահին՝ առեալ զիւրսն՝ գան անկանին 'ի Աա-
սանք². և անդ անկաւ 'ի ձեռս նորա ԲԵկթամուլըն³,
որ էր իշխան ամենայն տան Շ ահին⁴: ԽՀ առնու 'ի
նմանէ զբերդն, որ թառաձեան կոչի, և ուխտիւ արձա-
կեաց զնա. որ և ստեաց ուխտին 'ի տիրեն իւրում ա-
թուոյ Շ ահին. և զայն ևս՝ և զամենայն Սասունք ե-
հան 'ինմանէ և արկ ընդ հարկաւ զեկեղեցիս և զուխտս:

Դ վեց հարիւր երեսուն և չորս թուփն ըմբռնեցաւ
Ոտուքն 'ի բրնձէն. և թափեաց զնա Լ ևոն՝ եզբայր
նորա որդին Աասեխանեայ, որդւոյ Լ ևոնի, որդւոյ Կոս-
տանդեայ, (որդւոյ) Ոտուքնայ, որ տիրեաց եօթաննա-
սուն երկու բերդից և զօրացաւ 'ի վերայ Յունաց և
Պարսից և արար ընդ հարկաւ զիւլէճ ասլան՝ սուլ-
տանն Աիջերկրեայ:

Դ վեց հարիւր երեսուն և հինգ թուփն⁵ առին
Ենեցիք ՂՕՐառապար՝ զՀայրենիսն տեառն Բարսղի,
յանինայ կոտորելով զորս անդ՝ բաց 'ի կանանց և 'ի
մանկաւոյ. զոր լուեալ Ալիշէրն ամիրայ Դունայ⁶ ճո-
ղէր զմորուան և սեաւ զգենոյր 'ի վերայ կնոշն և որ-

¹ Մեր օր. առնելիեր ժահուան Շահին: — ² Մեր օր. առեւու զիւրսն
չէ բու անկանին 'ի Սասունք: — ³ Որ. բիւտարն: — ⁴ Մեր օր. որ
եր էլեան աֆեայն բանին Շահին: — ⁵ Մեր օր. 'ի վեց հարիւր երեսուն և
երին թուփն: — ⁶ Մեր օր. զոր լուեալ Ալիշէր ամիրայ Դունայ:

դեացն որ անդ՝ և 'ի վերայ զօրացն կոտորման։ և 'ի քրիստոնէից փառաւորէր սուրբ Խրորդութիւնն 'ի փառս իւր։ Խակ 'ի վերայ Քունաց թագաւորեաց Փիսիկն¹, որ և Աահակ։ և յարոյց հալածանս և չարչարանս 'ի վերայ հայաղաւան աղզաց, զի դարձին յաղանդ նոցա²։ Ա ասն որոյ զրէ առ նա աղերսանս պատրիարքն Գրիգոր՝ եզօրորդի տեառն՝ Երսեսի և Գրիգորի կաթողիկոսացն Հայոց, Խաղաղանալ ընդ ժողովրդեանն Եստուծոյ³։ Եւ ոչ լոււաւ նմա, այլ զյուրիս գարձոյց 'ի կրօնս իւր և զայլ հալածանս արար⁴։ ուր կային երեք աթոռ եպիսկոպոսութեանն և հազար վեց հարիւր քահանայք, զորս 'ի մի հաւաքեալ՝ բռնադատէր։ յորոց սակաւէք զերծան ամբողջ հաւատով։ Եւ զայսպիսի աղէտս գրեաց տէր Գրիգոր յարեելս խոժոռեալ սրտիւ⁵։ և ոչ ինչ կարացին առնել։ Եսաքէր և նոյն պատրիարքն եպիսկոպոս մի՝ Գրիգոր անուն, 'ի պապն Հռոմայ վասն վտանգին որ 'ի Հունաց կրէին Հայք և զի խնդրեացեն աղօթն և աւրհնութիւնն՝ որպէս և առաջնկնն։ զոր կարի մեծարեաց պապն և ետ պատարագ առնել և հաղորդեցաւ, և հագոյց նմա զիւր քահանայական իշխանութեան հանդերձն։ Եւ հաւաքեաց առ ինքն զամենայն պատուաւորս։ — զկայսրն Ելամանաց և զթագաւորն Ենկլիզաց և զթագաւորն Փռանցիսաց իւրեանցայնովքն, և ղպատրիարքն Ելամանաց, որ ունի

¹ Մէր օր իոէ 'ի վերայ յաւաց նոհանութիւն Փիսիկն։ — ² Մէր օր. Կէ քայլութեացն յաւլնո՞ւ նորո։ — ³ Մէր օր. Հուն սույ կրէ ու նո աղբանս պարտէրէն Գրիգոր իւլյունալ ընդ ժողովրդեան Աստուծոյ։ — ⁴ Յերկուսին օր. և զայլ հաւաքանս սրտ։ — ⁵ Որ. օր. իւլյուն Կրտէ։

քսան և հինգ հազար ձիաւոր, և զարչի եպիսկոպոսին Ապօնիոյ, որ ունի քսան հազար ձիաւոր, և զարք-եպիսկոպոսն սուրբ Յակոբայ, որ տիրէ հինգ հազար ձիաւորաց, և յայսմ կողմանէ պատրիարքն Երու-սաղեմի: Եւ ՚ի խորհուրդ մտեալ նոքօք՝ զրեաց գիր՝ հրամանաւ սուրբ առաքելոցն ՚ի նոցա երեսաց, — «Ե-թէ Հայոց պատրիարքն յայնկոյս ծովու իշխանութիւն կալցի ՚ի վերայ Հայոց և Յունաց և ամենայն ազգաց քրիստոնէից², որպէս մեքյայսմ կողմանէ երկ-նաւոր և եկրաւոր բանալեքք: Եւ վասն զի երկայն ճա-նապարհ է ՚ի մէջ իմ և եղբօր իմոյ՝ Հայոց պատրի-արքին, առաքեցի նմա զիմ պատրիարքական վակա-սըն³ և զպսակն և զկօշեկն, զի զայն զգեցեալ՝ պա-տարագեսէ մատանեաւ հանդերձ»: Եւ ասէ ցեպիս-կոպոսն Պարիգոր. — «Տար և զգեցո պատրիարքին, և յայնմ հետէ նմա լիցի⁴ պատիւ իշխանութեան յա-փուտեանս յաւիտենից»:

Եւ ՚ի վեց հարիւր երեսուն և վեց թուին եղն՝ զի վաճառականք Աալահաղնին անցանէին ընդ Պաղես-տինէ՝ չըրս հարիւր ուղտուց բարձեալ ազնիւ կարա-սի, զոր կոմնն Տրազօլեաց իմացոյց թագաւորին Եւ-րուսաղեմի և էառ հրաման յաւարի առնուլ. զոր լը-ժեալ Աալահաղնին⁵, յղեաց և խնդրեաց միանդամ և երկիցս գոնեայ զՃառայսն միայն, յիշեցուցանելով զուխսն երդման որ ՚ի մէջ իւրեանց, և ոչ լուան. վա-սըն որոյ զայլացեալ գայ ՚ի վերայ նորա: Եւ ել ընդ-

¹ Ուում. օր. Քրիտէն Քր: — ² Մեր օր. և ամենայն ապէստոլ՝ որովու Քր: —

³ Մեր օր. առաքեցի նմ զիմ Հովուան և զդուոնի: — ⁴ Որ. օր. յայն հիւն լից ուստիւ իշխանութեան: — ⁵ Որ. օր. զոր Սալհարենք յղեաց և խնդրեաց:

դէմ նորա թագաւորն Արուսաղեմի երեսուն և վեց
հազարաւ՝ ի դաշտին Հերմոնի և նենգութեամբ կոմ-
սին Տրապօլեաց զտեղի առեալ յոստ մի անջրդի՝ փա-
կեցաւ՝ ի թուողքաց և ըմբռնեցաւ սաստիկ հարուա-
ծովք. և առուան ամենայն քաղաքքն ծովեղերայք՝ և
ապա Արուսաղէմ, զորոյ զբնակիշըն ոչ հրամայեաց
կոտորել, այլ վաճառել զկեանս նոցա՝ կտրեալ զգինս՝
արուի տասն դաշեկան և իգին հինգ, և զայլ ամե-
նայն ինչս³ իւրեանց առեալ՝ գնասցեն յո և կամեացին.
և արարին այնպէս։ Իսկ անօրէն կոմն, որ միաբա-
նեալ էր ընդ Ալահաղնին՝ ի ծածուկ՝ հարեալ՝ ի
Տեառնէ սատակէր. և երթեալ Ալահաղնին՝ ի վերայ
բերդի նորա՝ ինդրէր զկինն և զբերդն. և նա ինդրեաց
պատանդս յերեելի արանց, զի գնասցէ առ նա՝ և լի-
նիցի նմա կին։ Խւ առեալ՝ ի ներքս՝ եհատ զզուկս
նոցա և ընկեց արտաքս, ընդ որ զարհուրեալ՝ ի բաց
գնացին։ Վանգի լուան զհամբաւ գալստեան մեծի
թագաւորին Ալամանաց, որ զայր՝ ի զոյժ սգոյ տուրբ
գերեզմանին և ամենայն քրիստոնէից՝ հարիւր յիսուն
հազար հեծեալ առաքելով ընդ ծով⁵, որք եկեալ պա-
շարէին զԱքա⁶. և ինքն գայր ցամաքաւ անհուն բանա-
կաւք ընդ աշխարհն Յունաց՝ առնլով՝ ի նոցանէ ըզ-
Ա եռո քաղաք⁷, զՓիլիպուազօլիս, զԱնդրիանուազօլիս⁸

¹ Մեր օր. և գուանն նմա ժաշակն ծովեղերայտ։ — ² Մեր օր. այլ վա-
ճառեալ զիւնեան նոցա՝ իրեւլ զին։ — ³ Ո. օր. և զամբեայն ինը իւր-
եանց։ — ⁴ Մեր օր. զի բնասցին առ նա։ — ⁵ Ո. օր. հարիւր յիսուն հա-
զար հեծելու որուելով ընդ ծով։ — ⁶ Մեր օր. որտ եիւլ զալսրէին զԱ-
քա։ — ⁷ Մեր օր. առնեւլ է նոցանի զԱլերէս առալու։ — ⁸ Ո. օր. ըս-
տիւուազօլիս և այլսուլ Բերդո։ — Մեր օր. զՓիլիպուազօլիս և զԱնդ-

և այլ յոլով բերդս և աւանս։ Եւ առաքէր զորդի իւր յառաջագցն՝ ի վերայ կոստանդնուպօլիսի, և խառնէին հարածեալքն՝ ի Ախո Ասհակայ մելքն՝ ի նոսս¹, և բազում առնէին աւերս՝ ի նոցանէ՝ վառեալ նախանձու։ Իսկ կոստանդնուպօլսացիք խնդրեցին ողըրմութիւն և ետուն հարիւր կենդինսար ոսկւոյ և կրկու հարիւր արծաթոյ, և ձրի անցուցին զամենայն բազմութիւնն՝ զոր առեալ էին՝ ի Ռալխաց և՝ ի Ռուղղարաց յոլովութիւն գանձուց²՝ ի յանցանեն ընդաշխանաց՝ ոչ լաւը հօրն իւրեանց՝ ուժին թաւրքովն արարին³ ընդնոսա պատերազմ երեսուն և երկո օր՝ ոչ մեկնելով՝ ի նոցանէ, մինչև հարան և կորեան՝ ի նոցանէ։ և այնքան սովեցան, մինչ զի ութ և տասն օր անսուաղկացին՝ ի բերոյ հողոյ.— մինչ յիկոնն⁴ կերան վաթսուն հազար ձի, և առեալ զիկոնն՝ կոտորեցին և նատան անդ⁵։ Եւ երիցս անգամ դեսպան յղեաց առ Լեռն, և հատաւ առ նա։ Եւ իբրև ել յիկոնէն⁶։ Եհաս գիր՝ ի պատրիարքէն Գրիգորոյ, «Եթէ եկաք մեք՝ ի Ախո⁷ քաղաք և մնաք քեզ աստ»։ — Եւ թագաւորն ժողովեալ զամենայն մեծամեծս իւր՝ ետ կարգալ. և՝ ի խնդրութենէն լացին. և գրեաց պատասխանի, «Եթէ աստի քսան և եօթն ամ⁸ քո հրամանաւ

¹ Մեր օր. և խառնէին՝ ի հաւաքեալքն՝ ի կիւ Ստանիսայ մբրժն՝ ի նոսս։

² Մեր օր. զր ոռեւունէին՝ ի Բալետոյ. Որ. օր.՝ ի Բալետոց յուլունիւունք բանցոց։ — ³ Որ. օր. ոտնին թաւրքունք արքէն. — Մեր. օր. առին թաւրքունք արքէն։ — ⁴ Մեր օր. Գնել կնձն։ — ⁵ Մեր օր. և առին զիմնն իսրուեցին և նարաւ անդ. — Որ. օր. և առին զիմնն իտորիոց և նարաւ անդ։ — ⁶ Յերկոսին օր. և իբրև ել՝ ի կոփն։ — ⁷ Մեր օր. եկու մետ՝ ի կոփն ժազաւ. — Որ. օր. եկու մետ՝ ի Մոփն ժազաւ։ — ⁸ Մեր օր. ենիւ սոսր՝ ի ժառն և զիմն ամ։

կամիմ բանալ անդաստան Հայոց¹, և աւագա գնամ
յերկիրն իմ։ Ահա ունիմ թագ և զգեստ, զի օճշես
թագաւոր Հայոց զով որ ընտրես²։ Եւ ասէր՝ ի լսե-
լիս ամեննցուն։ «Ո՞նչ ոչ տեսանեմ զապարանն իմ
և զուրբ Գետրոս³, զպատրիարքն Գրիգոր, ոչ ասեմ
զոր ինչ կայ ՚ի սրտի իմում»։ Եւ եկեալ ՚ի Անկեկիա
գտեալ հուն⁴՝ անցին ընդ գետն ամենայն զօրն։ և
թագաւորն ոչ անց ընդ հունն, այլ ասաց ննջել յայն-
կոյս գետոյն սակաւիկ մի։ Եւ յորժամ խաղաղացան
մեծամեծք նորա՝ յարեաւ ինքն և երկու արամիք ե-
մուտ ՚ի գետն։ և զմին ՚ի նոցանէ խլեաց գետն և տա-
նէր՝ և թագաւորն օգնելով նմա՝ չպահեաց—և ինքն
կորոյս⁵ զքրիստոնեայքն և հեղձաւ ՚ի գետն։ Եւ ըզ-
մարմինն առեալ տարան ՚ի Ահս։ և ՚ի զօրացն բազումք⁶
նաւեցին յերկիրն իւրեանց, քանզի էր և որդի կրտսեր
թագաւորին, և այն ևս մեռաւ երթեալ ՚ի Աքա⁷։
Իայց քանզի թագաւորն Անկեղաց և միւս ևս այլ
ընդ նմա զայնու աւուրքք եկն և առին զԱկապոս։ և
լուեալ վասն անգլուխ մնացեալ զօրացն⁸, որ զԱքա
էին պաշարեալ՝ հասին նոցա ՚ի թիկունս։ և առեալ
զքաղաքն՝ սատակեցին տասն հազար ընտիր այր ՚ի զօ-
րացն Ալահաղնին, և զինքն իսկ գլխովին՝ որ եկն
յայցելութիւն իւրոցն, առաջի եղեալ տարան՝ կո-
տորելով մինչեւ յԱսխալոն։ և յոլովս յամիրայցն ձեռ-

¹ Մեր օր. ու հրամանաւ իւր իւր բռնաւ։ — ² Մեր օր. զով ընդունելու։ —

³ Մեր օր. եթե գնչ ուսումնեմ զըստանն իւ և զսուրբ զիւրոս։ — Ու. օր.
գնչ ու ուսումնեմ զազարանն իւ և զսուրբ զիւրոս։ — ⁴ Մեր օր. էրին
հուն։ — ⁵ Մեր օր. և իսոյս զքրիստոնեայց։ — ⁶ Մեր օր. և զըստ բ-
զսումք հասկցին։ — ⁷ Ու. օր. երինեալ ՚ի յԱւայիւայ։ — ⁸ Մեր օր. վասն
անդըսով զօրացն հացելոց։

նակալեալ՝ տարան յայնկոյս ծովուն և վերստին ա-
ռին գամենայն առեալն 'ի խոռոշքաց՝ բաց յլցրուսա-
ղեմէ, որ ասէին մինչեւ եկեսցէ օր այցելութեան նորա: ¹
'Ի սոյն ժամանակս ոմն 'ի գլխաւորացն Աալահազնին
դայ՝ ի վերայ Ա՞մանծկերտոյ և պաշարեալ զնա՝ ոչինչ
կարաց առնել, զի նորանշան ձիւն եկն 'ի վերայ նոցա՝ ի
մէջ ամարան, և դարձաւ և սատակեցաւ՝ ի ճանապար-
հին: Եշւ Աէկթամուրն՝ ² շնորհակալեալ քրիստոնէ-
ից՝ սկսաւ պատուել և սիրել յայնմշիտէ զքրիստո-
նեայս՝: Օ այնու ժամանակաւք թարգմանեաց Ախի-
թար քահանայ պատուելի՝ ³ կաթուղիկեցի զպատճա-
ռըս խաւարման արեգական և լուսնի 'ի Պարսկէ միո-
չէ՝ Ոթիէ անուն՝, զոր ասէր թարգմանեալ՝ ի յու-
նաց՝ պարսս, և թէ Քոյնք 'ի յլցնովքայ մարգարէ-
ութենին ունին: — որ ասէր, թէ արեգակն բնու-
թեամբ ոչ երբէք խաւարի, այլ 'ի լուսնոյն լինիք պատ-
ճառն, յորժամ՝ ի միում կենդանակերպի դիսպին ա-
րեգակն և լուսին՝ և ժամ իցէ ծննդեան լուսնին և
անդ դիսպին թանձր ամպքն՝ ⁴ կոչեցեալ ուսուր և կամ
զննառ: Օ ի թէ սոքա մերձ ոչ լինին՝ ոչ է ժամ խա-
ւարման, թէպէտ ժամ իցէ ծննդեան լուսնի՝ և իցեն
'ի միում կենդանակերպի. ապա թէ իցեն՝ խաւարի
արեգակն: թէ բոլոր հանդիպէ միմեանց՝ բոլորն խա-
ւարի և թէ մասամբն ինչ առ 'ի շեղ՝ մասն նսեմա-
նայ: Որ և մեզ երևի՝ պատեան լուսնին է և ոչ արե-
գական ամանն, որպէս եղեւ 'ի վեց հարիւր քսան և

¹ Աեր օր. և բերեմաստն: — ² Աեր օր. և օքրեւ պէտառունեայու:

³ Աեր օր. և Աէկթոր զարուեալ ժահանայ:

⁴ Աեր օր. Ոգիդ անառն:

Հինգ թուլին մեծ խաւարումն։ Իսկ լուսնին խաւա-
րումն լինի, յորժամվեց կենդանակերպիւք հնուի լի-
նի յարեգակնէն, և զանապն և զռաստն՝ ի նոյն կենդա-
նակերպի մուլթ ամպն չտան առնուլ լոյս յարեգակ-
նէն, և ստուեր թանձրութեան երկրի անկանի զլուս-
նաւն՝ խաւարի լուսահնն։ Եշ թէ զոյգ և կշիռ միմեանց
կայցեն՝ բոլորն խաւարի։ իսկ թէ առ ՚ի շեղ լինի՝
ապրեալ մանն լուսաւորի յարեգակնէն։ — զայս աշ-
խատեալ ծրաբոլորիւն փոխեաց ՚ի մերս։ — Յաւուրս
ժամանակաց այսոցիկ էին փառաւոր իշխանք Օ. ա-
քարէ և լւանէ որդիք Աարգսի՝ որդւոյ Վահրա-
մայ, որդւոյ Օ. աքարի, որդւոյ Աարգսի՝ ՚ի քրդ ազ-
գէ հատուածեալ առ թագաւորսն Զորոյ գետին, որ
Բագրատունեաց ազգն է, հաւատացին ՚ի Վրիստոս
և պատուեցան։ Եշ տուաւ նոցա տուն բնակութեան
Խոշոռնի. և զի արիագոյնք էին՝ յառաջեցան օր ըստ
օրէ ՚ի բարձ և ՚ի պատիւ։ Եշ յաւուրս Ծամարի ա-
ռաւել փառաւորեցան, և ետ նոցազ ոռի. և ինքեանք
քաջութեամբ իւրեանց թափեցին ՚ի Ծառլքաց յո-
լով բերդս և գաւառս ՚ի սուլ ժամանակի։ քանզի ՚ի
վեց հարիւր քառասուն և հինգ թուլին առին զլն-
բերդ՝¹, և ՚ի վեց հարիւր քառասուն և ուլթ առին
զլնի, և ՚ի վեց հարիւր յիսուն առին զլնի, և ՚ի
վեց հարիւր յիսուն և երկու առին զլուլին, և ՚ի վեց
հարիւր յիսուն և հինգ առին զլարս թագաւորին,
և ապա զգետաբակս և զջարեքն։ Եշ ել անուն նո-
ցա ընդ ամենայն երկիր։ — Բայց լւանէ խարեալ ՚ի
թագուհւոյն Ծամարայ՝ տկարացաւ ՚ի հաւատոյն և

¹ Մեր օր. և ՚ի վեց հարիւր +առասուն և հինգ բառին զլներդ։

անյաջողեալ նմա՝ ըմբռնեցաւ գերի 'ի Խլաթ, և եղքո-
րըն արիական անուամբ ազատեցաւ դարձեալ՝ տալով
ի կնութիւն զդուստր իւր Մ'ելիք Աշրափուն՝ տեառն
Խլաթայ: Խսկ Օ.աքարէ՝ աւագ եղքայրն, մնաց յա-
ւագ և 'ի սեպհական հաւատն: սակայն կամեցաւ ըզ-
տոն Տիրամօրն և զխաչին 'ի պատկեր աւուրն¹ տօնել,
և զջրագալոյցան ըլուծանել, և կրօնաւորաց միս չու-
տել, և կենդանեաց պատարագ մասուցանել, և վրա-
նաւ պատարագել 'ի բացեայ դպրօք և սարկաւադաւք:
Ա ասն որոյ առաքեաց առ Լ. և ոն, որ այն ինչ օծեալ
էր թագաւոր 'ի Փոանկաց և 'ի Յունաց՝ առաքելով
նմա թագ 'ի վեց հարիւր քառասուն և վեց թուին:
Եւ էր ճոխ և յաղթազգեաց և հարկադիր և լժա-
տանջ ամենայն շրջակայ ազգացն: Խսկ նոքա յամե-
ցուցին զպատասխանին, վասն զի (զկնի) տեառն Գարի-
գորի առ Տէր փոխելոյն էառ զաթոռն Գարկիգորիս՝ Տը-
ղայն կոչեցեալ, զոր կալեալ Լ. և ոնի եղ 'ի բանտի զկնի
միոյ ամի: որ և կամեցեալ ելանել 'ի բանտէն՝ խեղ-
դի պարանաւ իջմամբն, և մեռաւ կտրելով զպարանն²:
Եւ զաթոռն էառ Վալիրատն զամն հինգ, և ապա տէր
Յովհաննէս որ և կայլ ապստամբ Լ. և ոնի յորմէ վըշ-
տացեալ թագաւորին Լ. և ոնի՝ զնէ կաթողիկոս զտէր
Գաւկիթ յԱրքակաղնին և յերկպառակութենէ ան-
տի հազիւ եկեալ 'ի մի կամն՝ ամենկրեան հաւանու-
թեամբ արարին պատասխանի—առնել Օ.աքարէի զոր

¹ Մ'եր օր. առայն յամեցաւ զրծն Տիրամօրն և զխաչ 'ի պարինը առար-
դուել: — ² Մ'եր օր. որ և յամեցաւ էլունի 'ի բանտին՝ խեղդեցին պար-
անաւ իջմարին, և մեռաւ իրիւլը զպարանին: — Ու. օր. որ և յամեցաւ էլո-
ւնի 'ի բանտին իւղդէ պարանաւ իջմարին, և մեռաւ իրիւլը զպարանին:

խնդրէ, «զի չեն ասէ արտաքոյ գրոց, և մեր է սահմանդ հայրենի՝ և յաւերմանէ եկեղեցւոյ է խանգարեալ»; — Բայց ՚ի յարեւելս միանգամ և երկիցս ժողով եղեալ կատարեալ արանց ՚ի Լոռի և յԱնի՝ ոչ եղեւ ընկալեալ. «գուցէ՝ ասեն, և ամենայն իրօք հարկեալ լինիմք գնալ զկնի աղանդոյն Յունաց և Վրաց»; — Խակյաւուրս ժամանակաց թագաւորութեանն թամարայ զօրացան քրիստոնեայք, թէպէտ ընկեց զայրն Ուուզ և էառ զՕն Եման¹, որ ելց զՎիրս գերութեամբ և աւարաւ ՚ի Թառլքաց, յորմէ ծնաւ միամօր որդի և կոչեաց զնա Լաշայ: Եւ ինքն կալեալ զժագն զամն քան և երեք² վճարի: Եւ նատի յաթոռն Լաշայն³, որ և ՚ի զօրացն կոչեցաւ Գէրորդի:

՚Ն վեց հարիւր յիսուն և ինն թուին մարախն աւերեաց բազում գաւառս: Յորում ժամանակի մեծըն Զաքարէ աւերէ զտունն Պարսից մինչև ցՂատաւիլքաղաք՝ առնլով ՚ի նոցանէ զվրէժս արեանն քրիստոնէից. ըստ որում և զազօթատուն նոցա լցեալ արամբք՝ այրել հրամայէր, զոհ լինել իշխանայն որք ՚ի Կախջավանոյ եկեղեցիսն, և կուռայքն և մուղըիքն սուրբ քահանայիցն որ ՚ի Բագուան մորթեցան և արեամբ նոցաներկեցան պարիսպը եկեղեցւոյն: Եւ դարձեալ յայնը կոտորածէ՝ կատարի ՚ի Քրիստոս ուղղափառ հաւատով և թաղի ՚ի սուրբ ուխտն Ամսահնի:

Խակ ՚ի վեց հարիւր վաթսուն և մի թուին թողլով տղայ մի հնգամեայ՝ Շահնշահ անուն, ՚ի պատիւ տէրութեանն լընւոյ կոչեցեալ, զոր դարձոյց յա-

¹ Մեր օր. ընթեց զայրն ուուզ՝ եւու զտունն զտունն: — ² Ու. օր. և ինքն իուլիու զամն ժան և երեւ՝ վերէ: — ³ Մեր օր. և նորէ յունուն Լորլոյն:

ղանդն Վաղկեդոնի Խօշաք՝ զուգակիցն Խւանէի։ Եւ զինի միոյ ամի կատարեցաւ տուրբ և սքանչելի այրն Եստուծոյ վարդապետն Ախիթար¹՝ վերակոչեցեալն Գոշ, Գանձակեցին. և թաղեցաւ յիւրում ձեռակերտին 'ի Գետիկ, զոր շնեալ էր հրամանաւ Խւանէի քեռորդւոյ մեծի իշխաննին Վարդին, որոյ հրամանաւն եկեալ ժակ էր յերկիրն Լայենոյ 'ի Հինն կոչեցեալ Գետիկ՝ զի յայնմ ժամանակի նա ունէր զլայեն հայրենեք 'ի Հասանայ Լայենեցւոյ՝ շինող բերդին։

'Ե վեց հարիւր վաթսուն և երեք թուին զշայթերք յԽւանէ տուկն տեարք նորա—զի մեռաւ Ա ախիթանկ բուն տէր նորա և որդիկն իւր տարաժամ, —և'ի միւս Ա ախիթանկն Սակուանց²՝ փեսայն Խւանէի, տէր ներքին Խաշենոյ՝ թոզով երկու տղայս՝ զշասան, որ և'ի գգուանաց Զալալատաւլէ, և զՕ աքարէ, որ և'Ա ասրատաւլէ, զորս խնամարկէր Խւանէ մնարն իւրեանց՝ Խորիշահիւ. որ և ապա յԵրուսաղէմ երթեալ՝ ամենամեծ ճգնութեամբ կատարի³ յոլով դրուատիւ 'ի Տէր։ Եւ մեծն Խւանէ՝ անուանի եղեալ քաջ արիութեամբ, առնու զՉարկին և զամենայն շրջակայսնորա. և ապա ձեռն տուեալ աղդայնոյն իւրոյ Ա արմայ՝ որդւոյ Զաքարիայ, առնու զՇ ամքոր։

'Ե վեց հարիւր վաթսուն և ութ թուին առնու զՈւրոսն և զմերձակայ դղեակն՝ թէպէտ ոչ զբովանդակին. քանզի երբ ունէին զնա Հայկազիւնկին՝ քսան և երեք բերդք⁴ կային նշանաւորք, և գեօղք հազար և չորս

¹ Ուռում. օր. և ստոնէի վարդապետն Ախիթար։ — ² Ո. օր. և Բագանինակ Սակուանց՝ վեստ Խաննի։ — ³ Մէր օր. և ամենամեծ ճգնութեամբ կատարի։ — ⁴ Մէր օր. առուսուսն և երեք բերդք կային նշանաւորք, և գեօղք հազար և չորս

